Վ. Ի. ԼԵՆԻՆ Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

# ՀամԿ(բ)Կ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

## ՊՐԱԿ ՉՈՐՐՈՐԴ

ՊԵՏՀՐԱՏ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1938

[illegible]

3 1 JAN 2018

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Վ. Ի. ԼԵՆԻՆ          Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

# ՀամԿ(բ)Կ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

ԳՐԱԿ ՉՈՐՐՈՐԴ

ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐՆ ՈՒ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՍՏՈԼԻՊԻՆՅԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՅԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՎԵԼՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
(1908—1912 Թ. Թ.)

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938

В. И. ЛЕНИН

И. В. СТАЛИН

К ИЗУЧЕНИЮ ИСТОРИИ ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938

II-28443 др

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

*ՀամԿ(բ)Կ ԿԿ Կուսհրատը ՀամԿ(բ)Կ պատմության ձեռնարկ կազմողներին ընկեր Ստալինի ուղղած նամակի հիման վրա, որ հրապարակվեց* «Большевик» *ամսագրի* № 9-*ում* 1937 *թ., ձեռնարկեց*—Վ. Ի. Լենին և Ի. Վ. Ստալին *«ՀամԿ(բ)Կ պատմության ուսումնասիրման շուրջը» ժողովածուների սերիայի հրատարակման:*

*ՀամԿ(բ)Կ պատմության ձեռնարկը կազմողներին ուղղած իր նամակում ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Կ պատմության անցքերի պարբերացման հետևյալ սքեման առաջ քաշեց:*

I

Պայքար Ռուսաստանում մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն ստեղծելու համար (Պլեխանովյան «Աշխատանքի Ազատագրման խումբը» կազմվելուց—1883 թ. մինչև «Իսկրայի» առաջին համարների լույս տեսնելը—1900-1901 *թվականներ*):

II

Ռուսական Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության կազմվելը և կուսակցության ներսում բոլշևիկների ու մենշևիկների փրակցիաների յերևան գալը (1901—1904 թ. թ.):

III

Մենշևիկները և բոլշևիկները ռուս-ճապոնական պատերազմի և ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում (1904—1907 թ.թ.):

IV

Մենշևիկները և բոլշևիկները Ստոլիպինյան ռեակցիայի ժա-

ժամանակաշրջանում և բոլշևիկների վորպես ինքնուրույն Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցություն ձևավորվելը (1908—1912 թ.թ.)։

V

Բոլշևիկների կուսակցությունը բանվորական շարժման վերելքի տարիներին՝ առաջին իմպերիալիստական պատերազմից առաջ (1912—1914 թ.թ.)։

VI

Բոլշևիկների կուսակցությունը իմպերիալիստական պատերազմի և յերկրորդ ռուսական փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում (1914—*փետրվար–մարտ* 1917 *թ.թ.*)։

VII

Բոլշևիկների կուսակցությունը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման և իրագործման ժամանակաշրջանում (ապրիլ 1917—1918 թ.թ.)։

VIII

Բոլշևիկների կուսակցությունը քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում (1918—1920 թ.թ.)։

IX

Բոլշևիկների կուսակցությունը ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքին անցնելու ժամանակաշրջանում (1921—1925 թ. թ.)։

X

Բոլշևիկների կուսակցությունը յերկրի սոցիալիստական ինդուստրիալիզացիայի համար մղած պայքարում (1926—1929 թվականներ)։

XI

Բոլշևիկների կուսակցությունը գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղած պայքարում (1930—1934 թ. թ.)։

XII

Բոլշևիկների կուսակցությունը սոցիալիստական հասարակության



կառուցման ավարտման համար մղած պայքարում և նոր Սահմանադրության անցկացումը (1935—1937 թ.թ.)։

*Այս ուրվագծին համապատասխան կուսհրատը նշել է 12 ժողովածու, վորոնցից յուրաքանչյուրի մեջ մտնում են Լենինի և Ստալինի հոդվածները, ճառերը, նամակները, այլև կուսակցության պաշտոնական վավերագրեր։*

*Յուրաքանչյուր ժողովածուի մեջ ՀամԿ(բ)Կ պատմության ուսումնասիրման խմբակների ունկնդիրների համար բերվում է գրականություն, վորը հանձնարարվում է ՀամԿ(բ)Կ ԿԿ կուսակցական պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի կողմից։*

Վ. Ի. ԼԵՆԻՆ

# ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ ՀՈՒԼԻՍԻ 21 (8)-ԻՆ՝ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊԻ III ԴՈՒՄԱՆ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԴԱՑԱԾ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԹԵԶԻՍՆԵՐԸ

1. Դումայի բոյկոտը, ինչպես ցույց տվեց ռուսական հեղափոխության փորձը, հանդիսանում է հեղափոխական ս.-դ.-իայի միակ ճիշտ վորոշումը այնպիսի պատմական պայմաններում, երբ բոյկոտն իրենից ներկայացնում է իրոք վոր ակտիվ բոյկոտ, այսինքն՝ արտահայտում է հին իշխանության վրա անմիջականորեն ուղղակի գրոհի (հետև., դեպի զինված ապստամբություն) գնացող լայն և ընդհանուր հեղափոխական վերելքի ուժը: Բոյկոտը պատմական մեծ խնդիր է կատարում, երբ նրա բովանդակությունն է պրոլետարիատի կողմից ամբողջ ժողովըրդին նախազգուշացնելը սահմանադրական պատրանքներից և հին իշխանության կողմից շնորհված առաջին իբր թե սահմանադրական հաստատություններից կուրորեն մանր-բուրժուականորեն հրապուրվելուց:

2. Բոյկոտը դիտել իբրև ինքն իրեն գործող մի միջոց՝ հին իշխանության տապալման համար կատարվող լայն, ընդհանուր, ուժեղ և արագ հեղափոխական վերելքի և ուղղակի համաժողովրդական գրոհի պայմաններից դուրս,—շնորհված սահմանադրությամբ ժողովրդի հրապուրվելու դեմ ուղղված պայքարի խնդրից դուրս,—նշանակում է գործել զգացմունքի ազդեցության տակ և վո՛չ թե բանականության:

3. Ուստի Դումային բոյկոտ հայտարարել այն բանի հիման վրա, վոր կադետների համար նպաստավոր ընտրական օրենքը փոխարինված է օկտյաբրիստների համար նպաստավոր օրեն-

քով,—այն բանի հիման վրա, վոր յերկրորդ Դումայի փոխարեն, վորն ըստ կադետների խոսում եր և ըստ ոկտյաբրիստների գործում և վորին մասնակցում եր հեղափոխության գործի համար վոչ առանց ոգտի ս.-դ., գալիս ե բացահայտ ոկտյաբրիստական Դուման,—դրա հիման վրա բոյկոտ հայտարարել՝ կնշանակեր վո՛չ միայն փոխարինել տոկուն հեղափոխական աշխատանքը հեղափոխական նյարդայնությամբ, այլ և հայտարարել կադետական Դումայի և կադետական սահմանադրության վերաբերյալ յեղած վատթարագույն պատրանքների տիրապետությունը հենց իրենց ս.-դ. վրա:

4. Հեղափոխական ս.-դ.-իայի ամբողջ ագիտացիոն աշխատանքի կենտրոնական կետը պետք ե լինի պարզաբանել ժողովրդին այն, վոր 1907 թվի հունիսի 3-ի պետական հեղաշրջումը հանդիսանում ե 1905 թվի դեկտեմբերյան ապստամբության պարտության ուղղակի և միանգամայն անխուսափելի հետևանքը: Ռուսական հեղափոխության յերկրորդ շրջանի, 1906 և 1907 թվերի, դասն այն ե, վոր այդ ամբողջ ժամանակաշրջանում տեղի ունեցած ռեակցիայի նույնպիսի սիստեմատիկ հարձակում և հեղափոխության նահանջ անխուսափելի յե սահմանադրության նկատմամբ յեղած հավատի տիրապետության դեպքում, անխուսափելի յե պայքարի իբր թե սահմանադրական ձևերի տիրապետության դեպքում, անխուսափելի յե այնքան ժամանակ, մինչև վոր պրոլետարիատը կրած պարտություններից հետո ամրանալով և ուժերը հավաքելով՝ անհամեմատ ավելի լայն մասսաներով վոտքի կելնի ցարական իշխանության տապալման համար կատարվող ավելի վճռական և հարձակողական հեղափոխական գրոհի համար:

5. Ներկայումս Մոսկվայի արդյունաբերական շրջանում բռնկվող գործադուլային շարժումը, վոր սկսում ե ընդգրկել Ռուսաստանի մյուս շրջանները ևս, պետք ե դիտել իբրև մոտիկ ապագայում հնարավոր հեղափոխական վերելքի ամենախոշոր գրավականը: Այս պատճառով ս.-դ.-իան պետք ե իր բոլոր ուժերը գործադրի վո՛չ միայն պրոլետարիատի տնտեսական պայքարը պաշտպանելու և զարգացնելու համար, այլ և տվյալ, դեռևս միայն արհեստակցական շարժումը լայն հեղափոխական վերելքի և բանվորական մասսաների անմիջական պայքարի վերածելու համար ցարիզմի զինված ուժի դեմ: Միայն այն ժամանակ, յերբ ս.-դ.-իայի ջանքերն այդ ուղղությամբ հաջողությամբ կպսակվեն, միայն արդեն ստեղծված հարձակողական հեղափոխական շարժման հողի վրա բոյկոտի լոզունգը կարող ե լուրջ նշանակություն ստանալ՝ մասսաներին զինված ապստամբության, ցարական իշխանության տապալման, այդ իշխանությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությամբ փոխարինելու՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության հիման վրա Սահմանադիր ժողով հրավիրելու ուղղակի կոչի անխզելի կապակցությամբ:



Գրված ե 1907 թ. հուլիսին:

Տպագրվել ե առանձին թռուցիկով 1907 թ. հուլիսին:

Յերկեր, հ. XII, եջ 43—44:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ԱԳՐԱՐԱՅԻՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զորեքշաբթի փետրվարի 13-ին տեղի ունեցավ Նիկոլայ II-ի կողմից III Դումայի 307 պատգամավորների ընդունելությունը: Ցարի սիրալիր զրույցները սևհարյուրյակային Բոբրինսկու և Զելիչևի հետ վերաբերում են ինքնակալության և դաշնակիցների բանդայի նոր համբուրման կոմիկական կողմին: Ավելի լուրջ ե Նիկոլայի այն հայտարարությունը, թե Դուման պետք ե ընդունի շուտով նոր հողային որենքներ և վոր ամեն մի միտք հարկադրական ոտարման մասին այդ առթիվ պետք ե բացառվի, վորովհետև նա, Նիկոլայ յերկրորդը, յերբեք այդպիսի որենք չի հաստատի: «Գյուղացիների վրա—հաղորդում ե «Ֆրանկֆուրտի լրագրի» թղթակիցը—թագավորի ճառը ճնշող ազդեցություն գործեց»:

Անկասկած, իրեն ցարի «ագրարային հայտարարության» ագիտացիոն նշանակությունը շատ մեծ ե, և մենք կարող ենք միայն վողջունել տաղանդավոր ագիտատորին: Բայց, բացի ագիտացիոն նշանակությունից, այդ սպառնալից յելույթն ընդդեմ հարկադրական ոտարման մեծ կարևորություն ե ներկայացնում, իբրև կալվածատիրական միապետության վերջնական անցում դեպի ագրարային քաղաքականության նոր ուղին:

87-րդ հոդվածով արված արտադումայական նշանավոր ու-

կազները—1906 թվի նոյեմբերի 9-ին և նրանից հետո—բաց արին ցարական կառավարության այդ նոր ագրարային քաղաքականության դարպասները։ II Դումայում Ստոլիպինը հաստատեց այն, աջ և օկտյաբրիստական պատգամավորները հավանություն տվին այդ քաղաքականությանը, կադետները (վախեցած կամարիլյայի նախասենյակներում Դումայի ցրման մասին հավաքած լուրերից) հրաժարվեցին այդ քաղաքականությունը բացահայտ կերպով դատապարտելուց։ Այժմ, III Դումայում, հողային հանձնաժողովը նորերս ընդունեց 1906 թվի նոյեմբերի 9-ի օրենքի հիմնական դրույթը և ավելի ևս առաջ գնաց, երբ գյուղացիների մասնավոր սեփականություն ընդունեց նրանց բաժնեհողերը այն բոլոր համայնքներում, վորտեղ հողաբաժանություն չի յեղել 24 տարվա ընթացքում։ Փետրվարի 13-ի ընդունելության ժամանակ ճորտատիրական-կալվածատիրական Ռուսաստանի գլուխը բարձրաձայն հավանություն տվեց այդ քաղաքականությանը, դժռալով—ակնհայտորեն անկասկածելի գյուղացիներին ի գիտություն,—վոր նա յերբեք վոչ մի օրենք չի հաստատի հօգուտ գյուղացիության կատարված հարկադրական օտարման մասին։

Ցարի, կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի (օկտյաբրիստների) կառավարության վերջնական անցումը նոր ագրարային քաղաքականության կողմը պատմական ահագին նշանակություն ունի։ Բուրժուական հեղափոխության ճակատագիրը Ռուսաստանում,— վո՛չ միայն ներկա հեղափոխության, այլ հետագայում ևս հնարավոր դեմոկրատական հեղափոխությունների— ամենից ավելի կախված է այդ քաղաքականության հաջողությունից կամ անհաջողությունից։

Վո՞րն է չրջադարձի էությունը։ Այն, վոր գյուղացիների հին, միջնադարյան, չնչապատկան հողատիրության և նրանց «վաղեմի» համայնքի անձեռնմխելիությունն իր ամենաջերմ կողմնակիցներն էր գտնում ռեակցիոն Ռուսաստանի իշխող դասակարգերի մեջ։ Ճորտատեր-կալվածատերերը, լինելով տիրող դասակարգ մինչռեֆորմյան Ռուսաստանում, լինելով քաղաքականապես գլխավորող դասակարգ ամբողջ XIX դարի ընթացքում, ընդհանուր առմամբ և ամբողջապես վարում էին գյուղացիական հողատիրության հին համայնական կարգերի պահպանման քաղաքականություն։



Կապիտալիզմի զարգացումը վերջնականապես մաշեց այդ կարգերը XX դարի մոտերքը։ Հին դասային համայնքը, գյուղացիներին հողին ամրացնելը, կիսաճորտատիրական գյուղի հնամոլությունն ամենասուր հակասության մեջ ընկան նոր տնտեսական պայմանների հետ։ Պատմության դիալեկտիկան այնպես արավ, վոր գյուղացիությունը—վորը մյուս յերկրներում քիչ թե շատ կարգավորված (կապիտալիզմի պահանջների տեսակետից) հողային տնտեսակարգի դեպքում կարգի հենարան է հանդիսանում,—Ռուսաստանում հեղափոխության ժամանակ դուրս յեկավ ամենաքայքայիչ պահանջներով, կիպ մինչև կալվածատիրական հողերի բռնագրավումները և հողի ազգայնացումը (I և II Դումայի տրուդովիկները)։

Այդ արմատական և նույնիսկ քաղքենիական սոցիալիզմի գաղափարներով զունավորված պահանջներն առաջ էյին գալիս վոչ ամենևին մուժիկի «սոցիալիզմից», այլ ճորտատիրական հողատիրության խճճված հանգույցը կտրելու, բոլոր միջնադարյան անջրպետներից ազատ հողի վրա ազատ ֆերմերի (հողագործության ձեռնարկատիրոջ) համար ճանապարհ հարթելու տնտեսական անհրաժեշտությունից[1]։

Կապիտալիզմն արդեն անվերադարձ կերպով խարխլել է Ռուսաստանի հին հողային տնտեսակարգի բոլոր հիմքերը։ Նա չի կարող ավելի զարգանալ, առանց քանդելու այդ տնտեսակարգը, և նա անխուսափելի ու անպայման կերպով կքանդի այդ կարգը. աշխարհումս այնպիսի ուժ չկա, վոր կարողանար խանգարել դրան։ Բայց այդ տնտեսակարգը կարող է խորտակվել ըստ կալվածատերերի կամ ըստ գյուղացիների, կալվածատիրական կամ գյուղացիական կապիտալիզմին ճանապարհ հարթելու համար։ Հին կարգերի կալվածատիրական բեկումը նշանակում է համայնքի բռնի ավերումը և աղքատացած մանր տնտեսատերերի մասսայի արագ քայքայումը, բնաջնջումը հօգուտ մի բուռ կուլակների։ Գյուղացիական բեկումը—նշանակում է կալվածատիրական հողատիրության բռնագրավումը և ամբողջ հողի տրամադրումը գյուղացիներից առաջացած ազատ ֆերմերությանը

1 Այստեղ շարադրված հայացքները սերտ կապով կապվում են մեր կուսակցական ծրագրի քննադատության հետ։ «Пролетарий»-ի № 21-ում այդ քննադատությունը ուրվագծվել է երբև մասնավոր կարծիք. մյուս համարներում հարցը կքննվի մանրամասնորեն։

(պարոնայք նարոդնիկների «հողի հավասար իրավունքը» իրականում նշանակում է տնտեսատերերի հողի իրավունքը բոլոր միջնադարյան անջրպետների վոչնչացումով):

Ցեվ ահա հակահեղափոխության կառավարությունը հասկացել է այդ դրությունը: Ստոլիպինը ճիշտ է հասկացել գործը. առանց հին հողատիրության քայքայման չի կարելի ապահովել Ռուսաստանի տնտեսական զարգացումը: Ստոլիպինն ու կալվածատերերը համարձակ կերպով բռնել են հեղափոխական ուղին, ամենաանխնա կերպով խորտակելով հին կարգերը, ամբողջությամբ կալվածատերերին և կուլակներին հանձնելով գյուղացիական մասսաները՝ կողոպտելու և ավարի առնելու համար:

Պարոնայք լիբերալներն ու քաղքենիական դեմոկրատները,— սկսած կիսաոկտյաբրիստական «մեռնողներից», շարունակած «Русские Ведомости»-ով և վերջացրած պ. Պեշեխոնովով «Русское Богатство»-յից,— այժմ սարսափելի աղմուկ են բարձրացրել կառավարության կողմից համայնքը քայքայելու առթիվ, մեղադրելով այդ կառավարությանը հեղափոխականությա՛ն մեջ: Դեռ յերբեք այնպես խիստ կերպով չի աչքի ընկել բուրժուական լիբերալիզմի միջակա դրությունը ռուսական հեղափոխության մեջ: Վո՛չ, պարոննե՛ր, վաղեմի հիմունքները քայքայելու առթիվ նվնվալով այստեղ գործին չես օգնի: Հեղափոխության յերեք տարիները վոչնչացրին հաշտվողական և համաձայնողական պատրանքները: Հարցը դրված է պարզորոշ: Կա՛մ համարձակ կոչ դեպի գյուղացիական հեղափոխություն, վորը գնում է ընդհուպ մինչև հանրապետություն, և այդպիսի հեղափոխության համակողմանի գաղափարական և կազմակերպական նախապատրաստում պրոլետարիատի հետ դաշնակցած: Կա՛մ դատարկ մղկտոց, քաղաքական և գաղափարային անզորություն համայնքի դեմ ուղղված ստոլիպինյան-կալվածատիրական-օկտյաբրիստական գրոհի առաջ:

Ընտրեցե՛ք,— ովքեր թեկուզ մի կաթիլ քաղաքացիական արիություն և համակրություն ունեք դեպի գյուղացիական մասսան: Պրոլետարիատն արդեն իր ընտրությունը կատարել է, և այժմ ավելի հաստատ կերպով, քան յերբևիցե, ս.-դ. բանվորական կուսակցությունը կբացատրի, պրոպագանդա կանի, մասսաների մեջ կնետի պրոլետարիատի հետ միասին կազմակերպվելիք գյուղացիական ապստամբության լոզունգը, իբրև



Ռուսաստանի ստոլիպինյան «նորոգմանը» խանգարելու միակ հնարավոր միջոցը:

Մենք չենք ասի, վոր այդ մեթոդն անհնարին է— այն Ցեվրոպայում շատ անգամներ ավելի փոքր չափերով փորձված է յեղել,— բայց մենք կբացատրենք ժողովրդին, վոր այն իրագործելի յե միայն փոքրամասնության անսահման բռնությունների ուղիով մեծամասնության վրա տասնամյակների ընթացքում և առաջավոր գյուղացիությունը մասսայորեն բնաջնջելու ուղիով: Մենք չենք սկսի մեր հոգսը կենտրոնացնել հեղափոխական ստոլիպինյան նախագծերը կարկատելու, նրանք ուղղելու, նրանց ներգործությունը թուլացնելու վրա և այլն: Մենք կպատասխանենք մեր ագիտացիան ուժեղացնելով ժողովրդական մասսաների մեջ, մանավանդ պրոլետարիատի այն խավերի մեջ, վորոնք կապված են գյուղացիության հետ: Գյուղացիական պատգամավորները—նույնիսկ մի շարք վոստիկանական մաղերով անցած, նույնիսկ կալվածատերերի կողմից ընտրված, նույնիսկ զուբրերի կողմից Դումայում վախեցրած—վերջերս դրսևորեցին իրենց իսկական ձգտումները: Անկուսակցական և մասամբ աջ գյուղացիների մի խումբ արտահայտվեց, ինչպես հայտնի յե լրագրերից, հօգուտ հողի հարկադրական ոտարման և հօգուտ ամբողջ բնակչության կողմից ընտրված տեղական հողային հիմնարկների: Զուր չէ, վոր հողային հանձնաժողովում մի կադետ ասաց, վոր աջ գյուղացին կադետներից ձախ է: Այո՛, հողային հարցում «աջ» գյուղացիները բոլոր 3 Դումաներում կադետներից ձախ են կանգնած, դրանով ապացուցելով, վոր մուժիկի միապետականությունը մահացող մի միամտություն է,— ի տարբերություն լիբերալ գործարարների միապետականության, վորոնք միապետական են իրենց դասակարգային շահերից յելնելով:

Ճորտատերերի ցարը բղավեց անկուսակցական գյուղացիներին, վոր նա թույլ չի տա հարկադրական ոտարում: Թո՛ղ բանվոր դասակարգը դրան ի պատասխան բղավի միլիոնավոր «անկուսակցական» գյուղացիներին, վոր նա կոչ է անում նրանց՝ մասսայորեն պայքարելու ցարիզմի տապալման և կալվածատիրական հողի բռնագրավման համար:

«Пролетарий» № 22,
4 մարտի (19 փետրվարի) 1908 թ.
Ցերկեր, հ. XII, եջ 134—137:

Վ. Ի. Լ Ե Ն Ի Ն

## ԲԱՆԱՁԵՎԻ ՆԱԽԱԳԻԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*Կ. Ո.-ի խմբագրությունը գտնում ե, վոր մեր կուսակցության և նրա միասնականության ամրացումը ներկայումս կարող ե տեղի ունենալ բացառապես պրակտիկ բանվորական շարժման մեջ գոյություն ունեցող ուժեղ և ազդեցիկ վորոշ* ֆրակցիաների *արդեն իսկ նշմարվող* մերձեցման *ճանապարհով, և վոչ թե բարոյախոսող նվնվումով՝ դրանց վոչնչացման թեմայի մասին, ընդվորում այդ մերձեցումը պետք ե տեղի ունենա և զարգանա, հիմք ունենալով հեղափոխական-սոցիալ-դեմոկրատական* տակտիկան *և կազմակերպական այն քաղաքականությունը, վորն ուղղված ե դեպի վճռական պայքարն ընդդեմ լիկվիդատորության թե՛ «ձախից» և թե՛ «աջից», մանավանդ աջից, նկատի առնելով արդեն իսկ ջախջախված «ձախ» լիկվիդատորության պակաս վտանգավորությունը:*

Գրված ե 2—3 նոյեմբերի (20—21 հոկտեմբերի) 1909 թ.
Յերկեր, հ. XIV, եջ 180.

Վ. Ի. Լ Ե Ն Ի Ն

## ԲԱՆԱՁԵՎԻ ՆԱԽԱԳԻԾ ԱՐԴԻ ՄՈՄԵՆՏԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Քաղաքական արդի դրությունը բնորոշվում ե հետևյալ գծերով.*

a) *Հին ճորտատիրական ինքնակալությունը զարգանում ե՝ վերածվելով բուրժուական միապետության, վոր քողարկում ե աբսոլուտիզմը կեղծ-սահմանադրական ձևերով: Հունիսի 3-ի պետական հեղաշրջումով և III Դումայի հաստատումով բացահայտորեն ամրացված և ճանաչված ե ցարիզմի դաշինքը սևհարյուրյակային կալվածատերերի և առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի վերին խավերի հետ: Հարկադրված լինելով վերջնականապես կանգնելու Ռուսաստանի կապիտալիստական զարգացման ճանապարհի վրա և ձգտելով պաշտպանել հենց այնպիսի մի ճանապարհ, վորը հնարավորություն կտար ճորտատեր-հողատերերին պահպանելու իրենց իշխանությունն ու իրենց յեկամուտները, ինքնակալությունը գլուխ ե պահում այդ դասակարգի և կապիտալի ներկայացուցիչների միջև: Նրանց մանր կռիվներն ոգտագործվում են հոգուտ աբսոլուտիզմի պաշտպանության, վորն այդ դասակարգերի հետ միասին կատաղի հակահեղափոխական պայքար ե մղում մոտիկ անցյալի մասսայական կռվում իր ուժը ցույց տված սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատի և դեմոկրատական գյուղացիության դեմ:*

b) *Նույնպիսի բուրժուա-բոնապարտիստական բնույթ ունի ժամանակակից ցարիզմի ագրարային քաղաքականությունը: Նա կորցրել ե ամեն հավատ դեպի գյուղացիական մասսայի միամիտ նվիրվածությունը միապետության: Նա դաշինք ե փնտրում հարուստ գյուղացիների հետ՝ գյուղը նրանց ձեռքը հանձնելով կողոպտելու համար: Ինքնակալությունը ջղաձգային ջանքեր ե թափում, վորպեսզի վորքան կարելի յե շուտով խորտակի ամբողջ համայնաբաժնական հողատիրությունը և ամրացնի բացառապես հողի մասնավոր սեփականությունը: Այդպիսի քաղաքականությունը հարյուրապատիկ սրում ե կապիտալիզմի բոլոր հակասությունները գյուղում և արագացնում ե գյուղի բաժանումը հետադիմականների մի չնչին փոքրամասնության և պրոլետարական ու կիսապրոլետարական հեղափոխական մասսայի:*

c) *Կ.-դ. կուսակցության գլխավորած լիբերալ բուրժուազիան, վոր վոտք դրեց հակահեղափոխական ճանապարհի վրա մասսաների՝ հեղափոխության մեջ ունեցած արդեն իսկ առաջին խոշոր յելույթների պահին, շարունակում ե առաջ ընթանալ այդ ճանապարհով՝ ե՛լ ավելի մերձենալով ոկտյաբրիստների հետ, և իր ցարիստական-ազգայնական ագիտացիայով,—վորպիսին արտահայտում ե բուրժուազիայի՝ իբրև դասակարգի՝ ինքնագիտակցության աճումը,—փաստորեն իր ծառայությունն ե մատուցում աբսոլուտիզմին և ճորտատեր-կալվածատերերին:*

d) *Գյուղացիական մասսաները, ինչպես ցույց ե տալիս նույնիսկ նրանց ճնշված և աղճատված ներկայացուցչությունը III Դումայում, շարունակում են—չնայած գյուղի դեմոկրատական տարրերի դեմ գործադրվող բոլոր հալածանքներին,—իրենց բոլոր տատանումներով հանդերձ՝ մնալ ագրարային հեղափոխա-*

կան-դեմոկրատական հեղաշրջման կողմը, վորն իսպառ վոչնչացնելով կալվածատիրական հողատիրությունը, կապահովեր արտադրողական ուժերի ամենից ավելի արագ, ընդարձակ և ազատ զարգացումը կապիտալիստական Ռուսաստանում։ Նոյեմբերի 9-ի օրենքը միմիայն արագացնում է գյուղացիական մասսաների բաժանումն անհաշտ-թշնամի և գիտակից-քաղաքական ուժերի։

e) Պրոլետարիատի վրա ամենից շատ հարվածներ է տեղացել և տեղում է թե՛ ինքնակալության կողմից և թե՛ արագորեն միավորվող և հարձակվող կապիտալի կողմից։ Չնայած դրան՝ այլ դասակարգերի համեմատությամբ՝ պրոլետարիատը պահպանում է առավելագույն համախմբվածությունը և առավելագույն հավատարմությունն իր դասակարգային կուսակցության, վորի հետ նրան ձուլել է հեղափոխությունը։ Պրոլետարիատը շարունակում է կռիվը հանուն իր դասակարգային շահերի և խորացնում է իր սոցիալիստական դասակարգային գիտակցությունը, մնալով այն միակ դասակարգը, վորն ընդունակ է հետևողականորեն ղեկավարելու հեղափոխական նոր պայքարը։

f) Ընդհանրապես և ամբողջությամբ անկասկած է, վոր Ռուսաստանում տեղի ունեցած բուրժուական-դեմոկրատական հեղափոխության օբյեկտիվ խնդիրները մնում են չլուծված։ Շարունակվող տնտեսական ճգնաժամը, գործազրկությունը և սովահարությունները ցույց են տալիս, վոր ինքնակալության նորագույն քաղաքականությունը չի կարող ապահովել Ռուսաստանի կապիտալիստական զարգացման պայմանները։ Այդ քաղաքականությունն անխուսափելիորեն տանում է դեպի դեմոկրատական մասսաների՝ իշխող դասակարգերի հետ ունեցած կոնֆլիկտի խորացումը, դեպի դժգոհության աճումը բնակչության նոր խավերում, դեպի տարբեր դասակարգերի քաղաքական պայքարի սրումն ու խորացումը։ Տնտեսական և քաղաքական այսպիսի դրության մեջ հեղափոխական նոր ճգնաժամն անխուսափելիորեն հասունանում է։

g) Համաշխարհային շուկայում առաջացած ընդհանուր սրումը, վոր բացատրվում է, գլխավորապես, Արևմտյան Եվրոպայի արդյունաբերական դրության փոփոխություններով դեպի ճգնաժամը, վորը 1908 թվին դեպրեսիայի ձև ստացավ, և Արևելքի հեղափոխական շարժումներով, վորոնք նշանակում են



ազգային կապիտալիստական պետությունների ստեղծումը,— ուժեղացնում է մրցակցությունը, տանում է դեպի միջազգային ընդհարումների հաճախանալը, դրանով սրելով բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգային հակասությունը և ավելի ու ավելի հեղափոխական դարձնելով միջազգային ընդհանուր իրադրությունը։

Իրերի այս դրությունից ելնելով, ՌՍԴԲԿ Համառուսաստանյան կոնֆերենցիան գտնում է, վոր ներկա մոմենտին կուսակցության հիմնական խնդիրները հետևյալներն են.

II- 28443գր

1) Ժողովրդի լայն մասսաներին բացատրել ինքնակալության նորագույն քաղաքականության իմաստն ու նշանակությունը և սոցիալիստական պրոլետարիատի դերը, պրոլետարիատի, վորը դասակարգային ինքնուրույն քաղաքականություն վարելով, պետք է ղեկավարի դեմոկրատական գյուղացիության արդի քաղաքականության մեջ և առաջիկա հեղափոխական պայքարում։

2) 1905—1907 թվականների մասսայական կռվի փորձը բազմակողմանիորեն ուսումնասիրել և լայնորեն ժողովրդականացնել, մի փորձ, վորը հեղափոխական-սոցիալ-դեմոկրատական տակտիկայի անփոխարինելի դասեր տվեց։

3) Ամրացնել ՌՍԴԲԿ, ինչպես վոր նա կազմավորվել է հեղափոխական դարաշրջանում. պահպանել նրա՝ ինչպես ինքնակալության և ռեակցիոն դասակարգերի դեմ, այնպես էլ բուրժուական լիբերալիզմի դեմ մղած անհաշտ կռվի տրադիցիաները. պայքարել ընդդեմ հեղափոխական մարքսիզմից կտրվող նահանջների, ընդդեմ ՌՍԴԲԿ լոզունգները խուզելու և ընդդեմ ՌՍԴԲԿ անլեգալ կազմակերպությունը լիկվիդացիայի յենթարկելու փորձերի, վորոնք յերևան են գալիս քայքայման ազդեցությանը յենթարկվող կուսակցական վորոշ տարրերի մեջ։

Անհրաժեշտ է միևնույն ժամանակ նկատի ունենալ, վոր միմիայն աջակցելով կուսակցական ֆունկցիաների՝ հենց իրենց ս.-դ. ձեռքն անցնելու արդեն իսկ պարզապես նշմարվող պրոցեսին, միմիայն ստեղծելով և ամրացնելով կուսակցական անլեգալ կազմակերպությունները, հնարավոր է դուրս բերել կուսակցությունը նրա կանոնավոր զարգացման ճանապարհի վրա։

4) Ըստ ամենայնի աջակցել բանվոր դասակարգի մղած տնտեսական պայքարին համաձայն Լոնդոնի և Շտուտգարտի կոնգրեսների բանաձևերի։

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ

5) Ոգտագործել Դուման և դումայական ամբիոնը հեղափոխական-սոցիալ-դեմոկրատական պրոպագանդայի և ագիտացիայի համար։

6) Որակարգի յե դրվում ամենից առաջ պրոլետարիատի գիտակից մասսաների դաստիարակության, կազմակերպման և համախմբման տևական աշխատանքը։ Այնուհետև՝ այդ խնդրին հպատակեցնելով՝ անհրաժեշտ ե տարածել կազմակերպական աշխատանքը գյուղացիության և բանակի վրա, մանավանդ դրական պրոպագանդայի և ագիտացիայի ձևով, ընդորում գլխավոր ուշադրությունը պետք ե դարձվի գյուղացիության և բանակի պրոլետարական և կիսապրոլետարական տարրերի սոցիալիստական դաստիարակության վրա։

Գրված ե 1908 թ. դեկտեմբերի
վերջին—1909 թ. հունվարի սկզբին։
Յերկեր, հ. XIV, եջ 5—8։

Վ. Ի. Լ Ե Ն Ի Ն

## ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ

Անցավ քայքայման, գաղափարական-քաղաքական տարընթացության, կուսակցական ուղեղուրկ վիճակի մեկ տարին։ Կուսակցության բոլոր կազմակերպությունների անդամների թիվը կրճատվեց, միքանիսը, հատկապես նրանք, վորոնց շարքերում պրոլետարների թիվն ամենից ավելի նվազ եր, կազմալուծվեցին։ Հեղափոխության ստեղծած՝ կուսակցության կիսալեգալ կազմակերպությունները մեկը մյուսի հետևից քայքայվում եյին։ Բանն այնտեղ հասավ, վոր կուսակցության ներսում յեղած կազմալուծման ազդեցության յենթարկված միքանի տարրերի համար հարց դարձավ՝ պե՞տք ե, արդյոք, պահպանել նախկին ս.-դ. կուսակցությունը, պե՞տք ե, արդյոք, շարունակել նրա գործը, պե՞տք ե, արդյոք, նորից ընդհատակ մտնել և ի՞նչպես այդ անել,—և այս հարցին ծայրահեղ աջերը պատասխանում եյին, թե պետք ե, ինչ ել վոր լինի, կուսակցությունը լեգալիզացիայի յենթարկել, նույնիսկ կուսակցության ծրագրից, տակտիկայից ու կազմակերպությունից հայտնապես հրաժարվելու գնով (այսպես կոչված լիկվիդատորական հոսանքը)։ Ճգնաժամը, անկասկած, վո՛չ միայն կազմակերպական, այլ նաև գաղափարային-քաղաքական եր։

ՌՍԴԲԿ վերջերս կայացած Համառուսաստանյան կոնֆերենցիան կուսակցությանը ճանապարհի վրա յե հանում և, ըստ յերևույթին, դարձակետ ե հանդիսանում ռուսական բանվորական շարժման զարգացման մեջ՝ հակահեղափոխության հաղթությունից հետո։ Կոնֆերենցիայի վորոշումները, վորոնք տպված են մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի հրատարակած հատուկ «Ծանուցման» մեջ, հաստատված են Կ. Կոմիտեյի կողմից և, հետևապես, մինչև հաջորդ համագումարն ամբողջ կուսակցության վորոշումներն են հանդիսանում։ Այդ վորոշումներում միանգամայն վորոշակի պատասխան ե տրված ճգնաժամի պատճառների ու նշանակության, ինչպես նաև նրանից դուրս գալու միջոցների վերաբերյալ հարցին։ Աշխատելով կոնֆերենցիայի բանաձևերի վոգով, ձգտելով, վոր կուսակցական բոլոր աշխատողները պարզ և լիովին գիտակցեն կուսակցության ժամանակակից խնդիրները, մեր կազմակերպությունները կկարողանան ամրապնդել ու համախմբել իրենց ուժերը՝ միահամուռ և աշխույժ հեղափոխական-սոցիալ-դեմոկրատական աշխատանքի համար։

Կուսակցության ճգնաժամի հիմնական պատճառը մատնանշված ե կազմակերպական բանաձևի պատճառաբանությունների մեջ։ Այդ հիմնական պատճառը բանվորական կուսակցության զտումն ե տատանվող ինտելիգենտական և մանր-բուրժուական տարրերից, վորոնք հարել եյին բանվորական շարժմանը, գլխավորապես, բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մոտալուտ հաղթանակի հույսով և վորոնք չկարողացան դիմանալ ռեակցիայի շրջանում։ Անկայունությունը յերևան յեկավ թե՛ թեորիայի բնագավառում («նահանջներ հեղափոխական մարքսիզմից»—ներկա մոմենտին վերաբերյալ բանաձևը), թե՛ տակտիկայի բնագավառում («լոզունգների խուզում») և թե՛ կուսակցության կազմակերպական քաղաքականության բնագավառում։ Գիտակից բանվորները հակահարված տվին այդ անկայունությանը, վճռականապես դուրս յեկան լիկվիդատորության դեմ, սկսեցին իրենց ձեռքը վերցնել կուսակցական կազմակերպությունների գործերի վարումը և նրանց ղեկավարությունը։ Յեթե մեր կուսակցության այդ հիմնական միջուկը միանգամից

չկարողացավ հաղթահարել տարընթացության ու ճգնաժամի տարրերը, ապա այդ վո՛չ միայն այն պատճառով, վոր խնդիրը մեծ եր և դժվար հակահեղափոխության հաղթանակի պայմաններում, այլ նաև այն պատճառով, վոր վորոշ անտարբերություն յերևան յեկավ դեպի կուսակցությունն այն բանվորների շարքերում, վորոնք հեղափոխականորեն եյին տրամադրված, բայց բավարար սոցիալիստական գիտակցություն չունեյին: Հատկապես Ռուսաստանի գիտակից բանվորներին են ուղղված առաջին հերթին կոնֆերենցիայի վորոշումները, վորպես սոցիալ-դեմոկրատիայի կազմալուծված կարծիք տարընթացության ու տատանումների դեմ պայքարելու միջոցների մասին:

Դասակարգերի արդի փոխհարաբերության և ցարիզմի նոր քաղաքականության մարքսիստական վերլուծում.—մատնանշում պայքարի այն մերձավորագույն նպատակի, վոր առաջվա նման առաջադրում է իրեն մեր կուսակցությունը—հեղափոխության դասերի գնահատում հեղափոխական-սոցիալ-դեմոկրատական տակտիկայի ճշտության հարցում.—կուսակցական ճգնաժամի պատճառների պարզում և կուսակցության պրոլետարական տարրերի դերի մատնանշում ճգնաժամի դեմ մղվելիք պայքարում.—անլեգալ կազմակերպության և լեգալ կազմակերպության հարաբերակցության հարցի լուծում.—Դումայի ամբիոնն օգտագործելու անհրաժեշտության ընդունում և մեր դումայական Ֆրակցիայի սխալներն անմիջաբար քննադատելու կապակցությամբ նրա համար ճիշտ ղեկավար ցուցումների մշակում,—ահա կոնֆերենցիայի այն վորոշումների գլխավոր բովանդակությունը, վորոնք լրիվ պատասխան են տալիս բանվոր դասակարգի կուսակցության կողմից մեր ապրած ծանր ժամանակում հաստատուն ուղի ընտրելու հարցին: Ավելի ուշադիր քննենք այդ պատասխանը:

Դասակարգերի փոխհարաբերությունը—նրանց քաղաքական խմբավորման մեջ—մնում է նույնը, վորը բնորոշ է մասսաների վերապրած ուղղակի հեղափոխական պայքարի շրջանի համար: Գյուղացիության հսկայական մեծամասնությունը չի կարող չձգտել այնպիսի ագրարային հեղաշրջման, վորը վոչնչացներ կիսաճորտատիրական հողատիրությունը և վորն անիրագործելի յե առանց ցարական իշխանության տապալման: Ռեակցիայի հաղթանակն առանձնապես խիստ ճզմեց գյուղացիության դեմոկրատական տարրերին, գյուղացիության, վորն անընդունակ է ամուր կերպով կազմակերպվելու, բայց, չնայած ամբողջ ճնշմանը, չնայած սևհարյուրյակային Դումային, չնայած տրուդովիկների ծայրահեղ անկայունությանը, գյուղացիական մասսաների հեղափոխականությունը պարզ յերևում է նույնիսկ III Դումայի վիճաբանություններից: Պրոլետարիատի հիմնական դիրքը Ռուսաստանի բուրժուական-դեմոկրատական հեղափոխության խնդիրների նկատմամբ մնում է անփոփոխ.—ղեկավարել դեմոկրատական գյուղացիությանը, կորզել նրան լիբերալ բուրժուաների, կ.-դ. կուսակցության ազդեցությունից, վորը (կ.-դ. կուսակցությունը), չնայած մասնավոր մանր վեճերին, շարունակում է մոտենալ ոկտյաբրիստներին, և ամենավերջին ժամանակները աշխատում եր ստեղծել նացիոնալ-լիբերալիզմ, պաշտպանել ցարիզմն ու ռեակցիան շովինիստական ագիտացիայի միջոցով: Կռիվն առաջվա նման մղվում է—ասում է բանաձևը—միապետությունը լրիվ վոչնչացնելու և պրոլետարիատի ու հեղափոխական գյուղացիության կողմից քաղաքական իշխանությունը նվաճելու համար:

Ինքնակալությունն առաջվա նման կանգնած է վորպես պրոլետարիատի և ամբողջ դեմոկրատիայի գլխավոր թշնամին: Բայց սխալ կլիներ կարծել, վոր նա մնում է առաջվանը: Ստոլիպինյան «սահմանադրությունը» և ստոլիպինյան ագրարային քաղաքականությունը հանդիսանում են հին կիսանահապետական, կիսաճորտատիրական ցարիզմի քայքայման նոր էտապը, մի նոր քայլ ցարիզմը բուրժուական միապետության վերածելու ուղղությամբ: Կովկասի պատգամավորները, վորոնք ուզում եյին կա՛մ բոլորովին հեռացնել մոմենտի այդպիսի բնորոշումը, կա՛մ «բուրժուական»-ի փոխարեն դնել «պլուտոկրատական», սխալ տեսակետի վրա եյին կանգնած: Ինքնակալությունը պլուտոկրատական եր վաղուց ի վեր, իսկ իր ագրարային քաղաքականությամբ և բուրժուազիայի վորոշ խավերի հետ համազգային մասշտաբով կազմակերպված ուղղակի միությամբ նա բուրժուական է դառնում միայն հեղափոխության առաջին էտապից հետո, նրա հարվածների ազդեցության տակ: Ինքնակալությունը վաղուց ի վեր կերակրում եր բուրժուազիային, բուրժուազիան վաղուց ի վեր ռուբլիով իրեն համար թե՛ ճանապարհ եր հարթում դեպի «վերին խավերը», թե՛ ազդեցություն եր ձեռք բերում

որենսդրության ու կառավարչության վրա և թե՛ տեղեր՝ մեծազարմ ազնվականության կողքին, բայց ներկա մոմենտի յուրահատուկ կողմն այն է, վոր ինքնակալությունն ստիպված յեղավ ներկայացուցչական հիմնարկ ստեղծելու բուրժուազիայի վորոշ խավերի համար, ստիպված յեղավ հավասարակշռություն պահպանելու նրանց և ճորտատերերի միջև, Դումայում կազմակերպելու այդ խավերի դաշինք, ստիպված յեղավ հրաժարվելու մուժիկի նահապետականության վերաբերյալ բոլոր հույսերից և գյուղական մասսայի դեմ հենարան վորոնելու համայնքը քայքայող հարուստների մոտ:

Ինքնակալությունն իբր թե քողարկում է իրեն սահմանադրական հիմնարկներով, բայց միևնույն ժամանակ իրականում ատացվում է նրա դասակարգային եյության դեռ չտեսնված մերկացում, շնորհիվ այն միության, վոր ցարը հաստատել է Պուրիշկեվիչների ու Գուչկովների հետ, և միմիայն նրանց հետ: Ինքնակալությունը փորձում է իր վրա վերցնել բուրժուական հեղափոխության օբյեկտիվորեն անհրաժեշտ խնդիրների լուծումը—ստեղծել ժողովրդական ներկայացուցչություն, վորն իրոք վարում է բուրժուական հասարակության գործերը, և մաքրել միջնադարյան, խճճված ու հնացած ագրարային հարաբերությունները գյուղում. բայց հենց ինքնակալության նոր քայլերի գործնական արդյունքը մինչև այժմ զերոյի յե հավասար, և այդ միայն ե՛լ ավելի ակնառու կերպով ցույց է տալիս, վոր այլ ուժեր ու այլ միջոցներ են անհրաժեշտ պատմական խնդիրը լուծելու համար: Ինքնակալությունը միլլիոնավոր, քաղաքականության մեջ չփորձված, մասսաների գիտակցության մեջ մինչև այժմ հակադրվում եր ընդհանրապես ժողովրդական ներկայացուցչության. այժմ պայքարը նեղացնում է իր նպատակը, վորոշում է իր խնդիրն ավելի կոնկրետ կերպով, վորպես պետության մեջ իշխանության համար մղվող պայքար, վորը բնորոշում է բուն իսկ ներկայացուցչության բնույթն ու նշանակությունը: Ահա թե ինչու III Դուման հին ցարիզմի քայքայման, նրա ավանտյուրիստականության ուժեղացման, հին հեղափոխական խնդիրների խորացման և այդ խնդիրների համար մղվելիք պայքարի ասպարեզը (նաև պայքարի մասնակիցների թիվը) ընդարձակելու մի առանձին ետապ է նշանակում:

Այդ ետապը պետք է անցնել. մոմենտի նոր պայմանները



կռվի նոր ձևեր են պահանջում. Դումայի ամբիոնն ոգտագործելն անպայման անհրաժեշտ է. պրոլետարիատի մասսաներին դաստիարակելու և կազմակերպելու տևական աշխատանքն առաջին պլանն է մղվում. անլեգալ և լեգալ կազմակերպության զուգորդումը հատուկ խնդիրներ է դնում կուսակցության առաջ. լիբերալների ու լիկվիդատոր-ինտելլիգենտների կողմից վարկաբեկվող հեղափոխության փորձի ժողովրդականացումն ու պարզաբանումն անհրաժեշտ են թե՛ թեորիական և թ՛ե գործնական նպատակներով: Բայց կուսակցության տակտիկական գիծը, վորը պետք է կարողանա հաշվի առնել պայքարի պրիոմների ու միջոցների նոր պայմանները, մնում է անփոփոխ: Հեղափոխական-սոցիալ-դեմոկրատական տակտիկայի ճշտությունը,—ասում է կոնֆերենցիայի բանաձևերից մեկը—հաստատված է 1905—1907 թ. թ. մասսայական կռվի փորձով: Այդ առաջին կամպանիայի հետևանքով հեղափոխության կրած պարտությունը հայտնաբերեց վո՛չ թե խնդիրների անճշտությունը, վո՛չ թե մերձավորագույն նպատակների «ուտոպիականությունը», վո՛չ թե միջոցների ու պրիոմների սխալ լինելը, այլ ուժերի անբավարար նախապատրաստվածությունը, հեղափոխական ճգնաժամի անբավարար խորությունն ու լայնությունը,—իսկ նրա խորացման ու ընդլայնման վրա Ստոլիպինն ու Ընկ. աշխատում են գովարժա՛ն յեռանդով: Թող լիբերալներն ու գլուխները կորցրած ինտելլիգենտներն ազատության համար մղված առաջին իսկական մասսայական ճակատամարտից հետո վհատվեն և վախկոտաբար կրկնեն—մի՛ գնաք այնտեղ, վորտեղ մի անգամ ջարդ կրեցիք, նորից վոտք մի՛ դնեք այդ ճակատագրական ուղին: Գիտակից պրոլետարիատը նրանց կպատասխանի—մեծ պատերազմները պատմության մեջ, հեղափոխությունների մեծ խնդիրները միայն նրանով են վճռվել, վոր առաջավոր դասակարգերը մեկ չե, յերկու չե, վոր կրկնել են իրենց հարձակումները և հաղթություն են ձեռք բերել՝ պարտությունների փորձից դաս առնելով: Ջախջախված բանակները լավ են սովորում: Ռուսաստանի հեղափոխական դասակարգերը ջախջախված են առաջին կամպանիայում, սակայն հեղափոխական դրությունը մնում է: Նոր ձևերով և այլ ճանապարհով,—յերբեմն անհամեմատ ավելի դանդաղ, քան մենք կկամենայինք,—հեղափոխական ճգնաժամը կրկին վրա յե հասնում, նորից հասունանում է: Մենք պետք է այդ ճգնաժամի

համար տեւական աշխատանք կատարենք, վորպեսզի ավելի լայն մասսաներ պատրաստենք, ավելի լուրջ պատրաստենք, հաշվի առնելով ավելի բարձր ու ավելի կոնկրետ խնդիրները, և վորքան հաջողությամբ կատարվի այդ աշխատանքը, այնքան ավելի ապահովված կլինի հաղթությունը նոր կռվում: Ռուսական պրոլետարիատը կարող է պարծենալ նրանով, վոր 1905 թ. ստրուկների ազգը նրա ղեկավարությամբ առաջին անգամ վերածվեց ցարիզմի վրա հարձակվող միլիոնների զորքի, հեղափոխության բանակի: Ցեվ նույն այդ պրոլետարիատը կկարողանա այժմ համառորեն, տոկունությամբ, համբերությամբ կատարել ավելի հզոր հեղափոխական ուժի նոր կադրեր դաստիարակելու և նախապատրաստելու աշխատանքը:

Դումայի ամբիոնի օգտագործումը, ինչպես մենք արդեն մատնանշեցինք, մտնում է դաստիարակման ու նախապատրաստման այդ աշխատանքի մեջ, վորպես նրա անհրաժեշտ բաղադրիչ մասը: Կոնֆերենցիայի՝ դումայական Ֆրակցիայի վերաբերյալ բանաձևը ցույց է տալիս մեր կուսակցությանն այն ճանապարհը, վորն ամենից ավելի մոտիկ է—յեթե օրինակներ փնտռենք պատմության մեջ—գերմանական սոցիալ-դեմոկրատների փորձին բացառիկ օրենքի ժամանակ: Անլեգալ կուսակցությունը պետք է կարողանա օգտագործել, պետք է սովորի օգտագործել լեգալ դումայական Ֆրակցիան, պետք է այս վերջնից դաստիարակի իր խնդիրների բարձրության վրա կանգնած կուսակցական մի կազմակերպություն: Ամենասխալ տակտիկան ներկա մոմենտի պայմաններում թելադրվող տոկուն պրոլետարական աշխատանքից ամենացավալի շեղումը կլիներ՝ հարց դնել Ֆրակցիան հետ կանչելու մասին (կոնֆերենցիայում յերկու «ոտզովիստներ» կային, վորոնք ուղղակի կերպով այդ հարցը չդրին), կամ հրաժարվել Ֆրակցիայի սխալներն ուղղակի ու բացորոշ կերպով քննադատելուց, այդ սխալները բանաձևի մեջ թվելուց (կոնֆերենցիայում դրան եյին ձգտում մի քանի պատգամավորներ): Բանաձևը լիովին ընդունում է, վոր Ֆրակցիան ունեցել է նաև այնպիսի սխալներ, վորոնց համար միայն նա ինքը չի պատասխանատու, և վորոնք միանգամայն նման են մեր բոլոր կուսակցական կազմակերպությունների անխուսափելի սխալներին: Բայց կան ուրիշ սխալներ—նահանջ կուսակցության քաղաքական գծից: Քանի վոր այդ նահանջը տեղի յե ունեցել, քանի վոր այն կատարվել է մի կազ-



մակերպության կողմից, վորը հայտնապես հանդես է յեկել ամբողջ կուսակցության անունից,—կուսակցությունը պարտավոր եր պարզ և վորոշակի ասելու, վոր դրանք շեղումներ են յեղել: Արևմտա-յեվրոպական սոցիալիստական կուսակցությունների պատմության մեջ շատ են յեղել պառլամենտական Ֆրակցիաների և կուսակցության աննորմալ փոխհարաբերությունների օրինակներ. մինչև այժմ ռոմանական յերկրներում այդ հարաբերությունները գրեթե ամենուրեք աննորմալ են, Ֆրակցիաները բավականաչափ կուսակցական չեն: Մենք պետք է միանգամից այլ կերպ դնենք Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատական պառլամենտարիզմ ստեղծելու գործը, միանգամից միահամուռ աշխատանքի ձեռնարկենք այս բնագավառում,—վորպեսզի ամեն մի ս.-դ. պատգամավոր գործնականում զգա, վոր կուսակցությունը կանգնած է նրա հետևին, ցավում է նրա սխալների համար, հոգում է նրա ուղին ճշտելու մասին,—վորպեսզի յուրաքանչյուր կուսակցական աշխատող մասնակցի կուսակցության ընդհանուր դումայական աշխատանքին, սովորի նրա քայլերի գործնական մարքսիստական քննադատության ոգնությամբ, զգա, վոր ինքը պարտավոր է ոգնելու նրան, աշխատի Ֆրակցիայի հատուկ աշխատանքը յենթարկել կուսակցության ամբողջ պրոպագանդիստական և ագիտացիոն գործունեյությանը:

Կոնֆերենցիան առաջին հեղինակավոր ժողովն եր կուսակցության խոշորագույն կազմակերպությունների պատվիրակների, վորը (ժողովը) քննության առավ Դումայի ս.-դ. Ֆրակցիայի՝ ամբողջ նստաշրջանի ընթացքում ունեցած գործունեյությունը: Ցեվ կոնֆերենցիայի վորոշումը ցույց է տալիս պարզ կերպով, թե ինչպես է դնելու իր դումայական աշխատանքը մեր կուսակցությունը, ինչպիսի խիստ պահանջներ է առաջադրում նա այս բնագավառում ինքն իրեն և Ֆրակցիային, ինչպես անշեղորեն ու հետևողականորեն է մտադիր նա աշխատելու իսկապես սոցիալ-դեմոկրատական պառլամենտարիզմ զարգացնելու վրա:

Դումայի Ֆրակցիայի հանդեպ ունենալիք վերաբերմունքի հարցն ունի տակտիկական և կազմակերպական կողմ: Այս վերջին տեսակետից դումայական Ֆրակցիայի վերաբերյալ բանաձևը կրկին լոկ կիրարկումն է մասնավոր դեպքի նկատմամբ կազմակերպական քաղաքականության այն ընդհանուր սկզբունքների, վորոնք սահմանված են կոնֆերենցիայի կողմից կազմակերպական

հարցին վերաբերող դիրեկտիվների բանաձևում։ ՌՍԴԲԿ մեջ այս հարցի վերաբերմամբ կոնֆերենցիան արձանագրում է յերկու հիմնական հոսանք.—մեկն այն է, վորը ծանրության կենտրոնը փոխադրում է անլեգալ կուսակցական կազմակերպությունը, մյուսը, վոր ավելի կամ պակաս չափով ազգակից է լիկվիդատորությանը,—ծանրության կենտրոնը փոխադրում է լեգալ և կիսալեգալ կազմակերպությունները։ Բանն այն է, վոր ներկա մոմենտը, ինչպես մենք արդեն մատնանշեցինք, բնորոշվում է կուսակցությունից վորոշ թվով կուսակցական աշխատողների հեռանալով՝ հատկապես ինտելիգենցիայից, բայց մասամբ նաև բանվորներից։ Լիկվիդատորական հոսանքը հարց է դնում՝ արդյոք կուսակցությունից լավագույն, ամենից ավելի ակտիվ տարրե՞րն են հեռանում և գործունեյության ասպարեզ ընտրում լեգալ կազմակերպությունները, թե՞ կուսակցությունից հեռանում են «տատանվող ինտելիգենտական ու մանր-բուրժուական տարրերը»։ Ասելն անգամ ավելորդ է, վոր վճռականապես մերժելով և դատապարտելով լիկվիդատորությունը, կոնֆերենցիան պատասխանեց վերջին իմաստով։ Կուսակցության ամենից ավելի պրոլետարական տարրերը, ինտելիգենցիայի սկզբունքորեն ամենից ավելի տոկուն և ամենից ավելի սոցիալ-դեմոկրատական տարրերը հավատարիմ մնացին ՌՍԴԲԿ։ Կուսակցությունից հեռանալը նրա զտումն է, ազատվելն ամենից ավելի քիչ կայուն, անհուսալի բարեկամներից, «ուղեկիցներից» (Mitläufer-ներից), վորոնք միշտ էլ ժամանակավորապես հարել են պրոլետարիատին, գլխավորապես մանր բուրժուազիայից կամ «ապադասակարգայնացված», այսինքն՝ այս կամ այն վորոշ դասակարգի շարքից դուրս նետված մարդկանցից։

Կուսակցական-կազմակերպական սկզբունքի այս գնահատականից ինքնին բղխում է նաև կոնֆերենցիայի կողմից ընդունված կազմակերպական քաղաքականության գիծը։ Ամրացնել անլեգալ կուսակցական կազմակերպությունը, կուսակցական բջիջներ ստեղծել աշխատանքի բոլոր բնագավառներում, ստեղծել առաջին հերթին «զուտ կուսակցական, թեկուզ և փոքրաթիվ, բանվորական կոմիտեներ յուրաքանչյուր արդյունաբերական ձեռնարկության մեջ», ղեկավար ֆունկցիաները կենտրոնացնել սոցիալ-դեմոկրատական շարժման՝ բանվորների իրենց շարքից դուրս յեկած ղեկավարների ձեռքում,—այս է որվա խնդիրը։ Յեվ,



հասկանալի յե, այդ բջիջների և կոմիտեների խնդիրը պետք է լինի ոգտագործել բոլոր կիսալեգալ և—ըստ հնարավորության—լեգալ կազմակերպությունները, «մասսաների հետ սերտ կապ» պահպանել, աշխատանքին այնպիսի ընթացք տալ, վոր սոցիալ-դեմոկրատիան արձագանքի մասսաների բոլոր պահանջներին։ Յուրաքանչյուր բջիջ և յուրաքանչյուր կուսակցական բանվորական կոմիտե պետք է դառնա «հենակետ մասսաների մեջ ագիտացիոն, պրոպագանդիստական և գործնական-կազմակերպական աշխատանք կատարելու համար», այսինքն՝ անպայման գնա այնտեղ, ուր գնում է մասսան, և աշխատի յուրաքանչյուր քայլափոխում շարժել նրա գիտակցությունը սոցիալիզմի ուղղությամբ, յուրաքանչյուր մասնավոր հարց կապի պրոլետարիատի ընդհանուր խնդիրների հետ, յուրաքանչյուր կազմակերպական նախաձեռնում վերածի դասակարգային համախմբման գործի, իր յեռանդով, իր գաղափարային ազդեցությամբ (և վոչ իր կոչումներով ու աստիճաններով, իհարկե) ղեկավար դեր նվաճի պրոլետարական բոլոր լեգալ կազմակերպություններում։ Թո՛ղ յերբեմն այդ բջիջներն ու կոմիտեները շատ փոքրաթիվ լինեն,—դրա փոխարեն նրանց միջև կուսակցական տրադիցիայի և կուսակցական կազմակերպության կապ կլինի, վորոշակի դասակարգային ծրագիր,—և կուսակցական յերկու-յերեք սոցիալ-դեմոկրատ կկարողանան, այդպիսով, չլուծվել անձև լեգալ կազմակերպության մեջ, այլ բոլոր պայմաններում, բոլոր պարագաներում, ամեն տեսակ կացություններում տանել իրենց կուսակցական գիծը, ազդել միջավայրի վրա ամբողջ կուսակցության վոգով, և վոչ թե թույլ տալ, վոր միջավայրն իրենց կլանի։

Կարելի յե ցրել այս կամ այն տեսակ մասսայական կազմակերպությունը, կարելի յե հալածել լեգալ արհեստակցական միությունները, կարելի յե վոստիկանական պատրվակներով փչացնել բանվորների ամեն մի բաց նախաձեռնություն հակահեղափոխության ռեժիմի ժամանակ, սակայն վոչ մի ուժ աշխարհում չի վերացնի բանվորների մասսայական կուտակումը կապիտալիստական յերկրում, իսկ Ռուսաստանն արդեն այդպիսի յերկիր է դարձել։ Այսպես թե այնպես, լեգալ թե կիսալեգալ կերպով, հայտնապես թե քողարկված ձևով, բանվոր դասակարգը կգտնի իր համար համախմբման այս կամ այն կետերը,—միշտ և ամենուրեք մասսայի առջևից կընթանան գիտակից կու-

ռակցական ես–դեկները, միշտ և ամենուրեք նրանք միմյանց հետ կհամախմբվեն՝ մասսայի վրա կուսակցական վոգով ներգործելու համար: Ցեվ սոցիալ–դեմոկրատիան, վոր բացահայտ հեղափոխության մեջ ապացուցեց, վոր ինքը դասակարգի կուսակցություն ե, վոր կարողացավ իր հետևից միլիոններին տանել թե՛ դեպի գործադուլ, թե՛ դեպի ապստամբություն 1905 թ. և թե՛ դեպի ընտրություններ 1906—1907 թ.թ., այժմ ել կկարողանա մնալ դասակարգի կուսակցություն, մասսաների կուսակցություն, մնալ վորպես ավանգարդ, վորն ամենածանր ժամանակներում չի կտրվի ամբողջ բանակից, կկարողանա ոգնել նրան այդ ծանր ժամանակները հաղթահարելու, նորից համախմբել նրա շարքերը, պատրաստել նորանոր մարտիկներ:

Թող հրճվեն ու վոռնան սևհարյուրյակային զուբրերը Դումայում և Դումայից դուրս, մայրաքաղաքում ու խուլ անկյուններում, թո՛ղ մոլեգնի ռեակցիան,—վոչ մի քայլ չի կարող անել դերիմաստոն պ. Ստոլիպինը, առանց իր անկմանը մոտեցնելու հավասարակշռությունը կորցրած ինքնակալությունը, առանց քաղաքական անհնարինությունների ու անհեթեթությունների նոր կծիկ խճճելու, առանց նոր և թարմ ուժեր ավելացնելու պրոլետարիատի շարքերին, գյուղացիական մասսայի հեղափոխական տարրերի շարքերին: Այն կուսակցությունը, վորը կկարողանա ամրանալ մասսաների հետ կապված՝ տոկուն աշխատանք կատարելու համար, առաջավոր դասակարգի կուսակցությունը, վորը կկարողանա կազմակերպել նրա ավանգարդը, վորն իր ուժերն այնպես կգործադրի, վորպեսզի սոցիալ–դեմոկրատական վոգով ներգործի պրոլետարիատի կյանքի յուրաքանչյուր արտահայտման վրա, այդ կուսակցությունը, ինչ ել վոր լինի, կհաղթի:

«Социал-демократ» № 2,
10 փետրվարի (28 հունվարի) 1909 թ.:
Յերկեր, հ. XIV, եջ 24—32:



Վ. Ի. ԼԵՆԻՆ

# «ПРОЛЕТАРИЙ»-Ի ԸՆԴԼԱՅՆԱԾ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

## I. ՈՏԶՈՎԻԶՄԻ ՅԵՎ ՈՒԼՏԻՄԱՏԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Մեր կուսակցության հեղափոխական թևի առաջադրած՝ Բուլիգինյան և I Պետական Դումայի բոյկոտի լոզունգն այն ժամանակ հեղափոխական մեծ դեր խաղաց և իր հետևից տարավ բանվոր դասակարգի բոլոր ամենից ավելի ակտիվ և ամենից ավելի հեղափոխական խավերին:

Լայն մասսաների անմիջական հեղափոխական պայքարն այնուհետև փոխարինվեց հակահեղափոխության ծանր շրջանով: Սոց.-դեմ. համար անհրաժեշտ դարձավ իր հեղափոխական տակտիկան հարմարեցնել այդ նոր քաղաքական իրադրությանը, և, դրա կապակցությամբ, վերին աստիճանի կարևոր խնդիրներից մեկը դարձավ՝ ոգտագործել Դումայի բաց ամբիոնը սոցիալ-դեմոկրատական ագիտացիայի և կազմակերպության ոգնելու նպատակով:

Մինչդեռ անմիջական հեղափոխական կռվին մասնակցած բանվորների մի մասը չկարողացավ անցքերի այդ արագ պտույտի ժամանակ միանգամից անցնել հեղափոխական սոցիալ-դեմոկրատական տակտիկան հակահեղափոխության նոր պայմաններում կիրարկելուն և կանգ առավ այն լոզունգների հասարակ կրկնության վրա, վորոնք բացահայտ քաղաքացիական պատերազմի դարաշրջանում հեղափոխական եյին, իսկ այժմ, նրանց սոսկ կրկնության դեպքում, կարող են կասեցնել պրոլետարիատին համախմբելու պրոցեսը պայքարի նոր պայմաններում:

Մյուս կողմից, այդ ծանր բեկման հողի վրա, հեղափոխական կռվի անկման, նույնիսկ բանվորների մի մասի մեջ առաջացած անտարբերության ու չփոթվածության մթնոլորտում, բանվորական կազմակերպությունների ջախջախման և քայքայիչ ազդեցություններին դիմադրելու նրանց անբավարար ուժի ժամանակաշրջանում—բանվոր դասակարգի մի մասի մեջ ստեղծվեց անտարբերություն դեպի քաղաքական պայքարն ընդհանրապես և հատկապես մեծ անտարբերություն դեպի սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքը Դումայում:

Պրոլետարիատի այդ խավերի մեջ այդպիսի պայմաններում կարող են իրենց համար ժամանակավոր հաջողություն գտնել այսպես կոչված ոտզովիզմը և ուլտիմատիզմը:

Բանվորների կարիքները ծաղրի ենթարկող III Դումայի աշխատանքն ուժեղացնում է ոտզովիստական տրամադրությունը բանվորների հենց այդ խավերի մեջ, վորոնք,իրենց անբավարար սոցիալ-դեմոկրատական դաստիարակության զորությամբ, դեռևս անընդունակ են ըմբռնելու այն հանգամանքը, վոր III Դումայի հենց այդ գործունեությունը սոցիալ-դեմոկրատներին հնարավորություն է տալիս հեղափոխականորեն ոգտագործելու շահագործող դասակարգերի այդ ներկայացուցչությունը՝ ժողովըրդի լայն խավերին բացատրելու համար ինքնակալության և բոլոր հակահեղափոխական ուժերի իսկական բնույթը, ինչպես և հեղափոխական կռվի անհրաժեշտությունը:

Ոտզովիստական տրամադրությունը բանվորների այդ մասի մեջ սնուցվում եր բացի դրանից այն չափազանց լուրջ սխալներով, վոր թույլ տվեց Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան, հատկապես իր գործունեության առաջին տարում:

Գտնելով, վոր այդ ոտզովիստական տրամադրությունը բացասական նշանակություն ունի բանվոր դասակարգի սոցիալիստական և հեղափոխական դաստիարակության գործում,—բոլշևիկյան ֆրակցիան անհրաժեշտ է համարում.—

a) բանվորների այդ խավերի նկատմամբ—տևական աշխատանք կատարել ս.-դ. դաստիարակության և կազմակերպման համար, սիստեմատիկ կերպով և յեռանդագին բացատրել ոտզովիզմի և ուլտիմատիզմի ամբողջ քաղաքական ապարդյունությունը, ս.-դ. պառլամենտարիզմի իսկական նշանակությունը և դումայական ամբիոնի դերը ս.-դ. համար հակահեղափոխության ժամանակաշրջանում.

b) Դումայի ս.-դ. ֆրակցիայի և ընդհանրապես Դումայի աշխատանքի վերաբերմամբ—սահմանել սերտ կապ Դումայի ֆրակցիայի և առաջավոր բանվորների միջև, ամեն կերպ ոգնել նրան և կազմակերպված վերահսկողություն ունենալ ու ճնշում գործադրել նրա վրա ամբողջ կուսակցության կողմից, ի միջի այլոց, նաև բացահայտորեն նրա սխալները բացատրելով, փաստորեն իրագործել կուսակցության ղեկավարությունը ֆրակցիայի՝ վորպես կուսակցական որգանի՝ գործունեության նկատմամբ, և առհասարակ բոլշևիկների կողմից կենսագործել վերջին



համակուսակցական կոնֆերենցիայի վորոշումներն այդ մասին, վորովհետև միայն բանվորական շրջանների ուշադրության ուժեղացումը դեպի Դումայի ս.-դ. ֆրակցիայի գործունեությունը և նրանց կազմակերպված մասնակցությունը ս.-դ. դումայական գործունեությանը ընդունակ է իրոք շտկել մեր դումայական ֆրակցիայի տակտիկան.

c) կուսակցության աջ թևի նկատմամբ, վորը Դումայի ֆրակցիային քաշում է դեպի հակակուսակցական ճանապարհը և դրանով իսկ կտրում նրան բանվորական ավանգարդից,—սիստեմատիկ, անհաշտ պայքար մղել և մերկացնել կուսակցության համար կործանարար այդ տակտիկան:

* * *

Բուրժուական-դեմոկրատական հեղափոխության ընթացքում մեր կուսակցությանը հարեցին մի շարք տարրեր, վորոնք հրապուրված եյին վոչ թե նրա զուտ պրոլետարական ծրագրով, այլ առավելապես դեմոկրատիայի համար նրա մղած վառ ու յեռանդուն պայքարով և վորոնք պրոլետարական կուսակցության հեղափոխական-դեմոկրատական լոզունգներն ընդունել եյին՝ առանց կապելու այդ լոզունգները սոցիալիստական պրոլետարիատի ամբողջ կռվի հետ:

Պրոլետարական տեսակետով բավականաչափ չտոգորված այդպիսի տարրեր գտնվեցին նաև մեր բոլշևիկյան ֆրակցիայի շարքերում: Ձախորդ ժամանակի պայմաններում այդ տարրերը հետզհետե ավելի յեն յերևան բերում իրենց անբավարար ս.-դ. կոփվածությունը և, ավելի ու ավելի սուր հակասության մեջ մտնելով հեղափոխության սոցիալ-դեմոկրատական տակտիկայի հիմունքների հետ, վերջին տարում ստեղծում են մի հոսանք, վորը փորձում է ձևակերպել ոտզովիզմի և ուլտիմատիզմի թեորիան, իսկ իրականում միայն սկզբունքի յե վերածում և խորացնում սոցիալ-դեմոկրատական պառլամենտարիզմի ու դումայական ս.-դ. աշխատանքի վերաբերյալ թյուր հասկացողությունները:

Ոտզովիստական տրամադրությունից ոտզովիստական քաղաքականության մի ամբողջ սիստեմ ստեղծելու այդ փորձերը բերում են մի թեորիայի, վորն ըստ եյության արտահայտում է մի կողմից՝ քաղաքական անտարբերության և մյուս կողմից՝ անարխիստական մոլորումների իդեոլոգիա: Իր ամբողջ հեղափո—

խական Փրազեոլոգիայով հանդերձ օտզովիզմի և ուլտիմատիզմի թեորիան իրականում զգալի չափով այն սահմանադրական պատրանքների հակառակ կողմն ե, վորոնք կապված են այն հույսի հետ, թե ինքը Պետական Դուման կարող ե բավարարել ժողովրդի այս կամ այն կենսական պահանջները, և ըստ եյության պրոլետարական իդեոլոգիան մանր-բուրժուական տենդենցների յե նենգափոխում:

Բացահայտ օտզովիզմից վոչ պակաս վնաս ե բերում ս.-դ. աշխատանքի գործին նաև այսպես կոչված ուլտիմատիզմը (այսինքն՝ այն հոսանքը, վորն սկզբունքորեն հրաժարվում ե III Դումայի ամբիոնն օգտագործելուց կամ գործնական նկատառումներով փորձում ե արդարացնել իր շեղումն այդ պարտականության կատարելուց և, ձգտելով հետ կանչել Դումայի ս.-դ. Փրակցիան, վերջինի դաստիարակման և ուղղման տևական աշխատանքը փոխարինում ե նրան անհապաղ ուլտիմատում ներկայացնելով): Քաղաքականապես ուլտիմատիզմն այժմ վոչնչով չի տարբերվում օտզովիզմից և միայն ե՛լ ավելի մեծ խառնաշփոթություն և տարընթացություն ե մտցնում իր օտզովիզմի քողարկված բնույթով: Ուլտիմատիզմի փորձերը՝ անմիջական կապ հաստատել հեղափոխության վորոշ մոմենտին մեր Փրակցիայի կիրարկած բոյկոտիզմի հետ, միայն խեղաթյուրում են մեր կուսակցության հսկայական մեծամասնության կողմից միանգամայն ճիշտ կերպով կիրարկված՝ Բուլիգինյան և I Պետական Դումաների բոյկոտի իսկական իմաստն ու բնույթը: Հեղափոխության այս կամ այն մոմենտին, նույն թվում նաև հակահեղափոխության ժամանակաշրջանում՝ վորպես բոլշևիզմի տակտիկան բնորոշող հատկանիշ, ներկայացուցչական հաստատությունների նկատմամբ բոյկոտի առանձնակի կիրարկումներից բոյկոտի գիծ հետևցնելու իրենց փորձով, ուլտիմատիզմն ու օտզովիզմը ցույց են տալիս, վոր այդ հոսանքներն ըստ եյության շուռ տված յերեսն են մենշևիզմի, վորը քարոզում ե անխտիր մասնակցել բոլոր ներկայացուցչական հաստատություններում, անկախ հեղափոխության զարգացման տվյալ ետապից, անկախ հեղափոխական վերելքի բացակայությունից կամ առկայությունից:

Իրենց թեորիան սկզբունքորեն հիմնավորելու նպատակով օտզովիզմի և ուլտիմատիզմի մինչև այժմ կատարած բոլոր փորձերն անխուսափելիորեն հասցնում են հեղափոխական մարքսիզ-



մի հիմունքների ժխտման: Իրենց նշած տակտիկայի հետևանքով նրանք խզում են իրենց կապերը միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևի տակտիկայից, վորը կիրարկված ե ժամանակակից ռուսական պայմաններում, հասցնելով անարխիստական խոտորումների:

Օտզովիստական-ուլտիմատիստական ագիտացիան արդեն սկսել ե անտարակուսելի վնաս բերել բանվորական շարժմանը և սոցիալ-դեմոկրատական աշխատանքին: Հետագայում շարունակվելու դեպքում այդ ագիտացիան կարող ե սպառնալիք դառնալ կուսակցության միասնականությանը, վորովհետև այդ ագիտացիան արդեն այնպիսի հրեշավոր յերևույթների յե հասցրել, ինչպիսին ե օտզովիստների և ես-երների միավորումը (ՍՊԲ-ում) Դումայի մեր կուսակցական ներկայացուցչությանը օգնություն մերժելու համար, ինչպես նաև միքանի հրապարակային յելույթներ բանվորների առաջ՝ վորոշակի սինդիկալիստների հետ համատեղ:

Այս ամենն ի նկատի ունենալով, «Пролетарий»-ի ընդլայնած խմբագրությունը հայտարարում ե, վոր բոլշևիզմը, վորպես ՌՍԴԲԿ վորոշակի հոսանք, վոչ մի ընդհանուր բան չունի օտզովիզմի և ուլտիմատիզմի հետ, և վոր բոլշևիկյան Փրակցիան պետք ե ամենավճռական պայքար մղի հեղափոխական մարքսիզմի ուղուց կատարվող այդ շեղումների դեմ:

## II. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հակահեղափոխության վճռական հաղթանակի դարաշրջանում, վոր սկսվեց II Դումայի ցրումից հետո, ամբողջ կուսակցական գործունեության առաջ իրերի զորությամբ դրվեց մի խնդիր—հակառակ ռեակցիայի ջանքերի և դասակարգային պրոլետարական պայքարի խորն անկման պայմաններում՝ պահպանել պրոլետարական պայքարի բարձր վերելքի տարիներում ստեղծած կուսակցական կազմակերպությունը,—այսինքն՝ վորպես մի կազմակերպություն, վորը գիտակցաբար կանգնած ե օրթոդոքս մարքսիզմի հողի վրա և միավորում ե բոլոր «ազգային» սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները միասնական հեղափոխական ս.-դ. տակտիկա կիրարկելու նպատակով:

Կուսակցության և կուսակցականության համար մղված այդ յերկամյա պայքարի ընթացքում լիակատար պարզությամբ վո-

բոշևեցին, մի կողմից, կուսակցության սահմանազատումն այն տարրերից, վորոնց մտցրել եյին նրա մեջ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության հատուկ պայմանները, մյուս կողմից, հեղափոխական սոցիալ-դեմոկրատների հետագա համախմբումը: Մի կողմից, լիովին վորոշվեցին սոցիալ-դեմոկրատիայի այն նախկին ուղեկիցները, վորոնք, կուսակցությունից հեռանալով, իրենց գործունեյությունն ամբողջովին փոխադրեցին զանազան լեգալ կազմակերպություններ (կոոպերատիվներ, արհեստակցական միություններ, լուսավորական ընկերություններ, Դումայի Ֆրակցիայի կից հանձնաժողովներ) և այնտեղ վոչ միայն կուսակցական քաղաքականություն չեյին կիրարկում, այլ, ընդհակառակը, պայքարում եյին կուսակցության դեմ, աշխատելով պոկել նրանից և նրան հակադրել այդ կազմակերպությունները: Լեգալությունը ֆետիշ դարձնելով և գործունեյության այն նեղ ձևերը, վորոնք բանվորական շարժման ժամանակավոր ճնշվածության ու մասնատվածության հետևանքով զոռով նրանց վզին են փաթաթվել, սկզբունքի վերածելով, այդ տարրերը—կուսակցության բացահայտ լիկվիդատորները—ամենքի համար լիակատար ակնհայտությամբ կանգնեցին թեորիական և տակտիկական ռեվիզիոնիզմի հողի վրա: Կազմակերպական լիկվիդատորության (պայքարը կուսակցական հիմնարկների դեմ) և մարքսիստական թեորիայի ու ՌՍԴԲԿ ծրագրի հիմունքների դեմ մղվող սկզբունքային պայքարի միջև գոյություն ունեցող ամենասերտ կապը լիակատար պարզորոշությամբ այժմ ցույց է տրված ու ապացուցված է՝ մեր դումայական Ֆրակցիայի ինտելիգենտական խորհրդատուների կողմից նրա վզին օպորտունիստական գիծ փաթաթելու ամբողջ պատմությամբ, այն ամբողջ պայքարով, վոր մղվել է լիկվիդատորների և կուսակցականների միջև լեգալ բանվորական կազմակերպությունների ներսում և չորս համագումարների—ժողովրդական համալսարանների, կոոպերատիվների, կանանց ու ֆաբրիկա-գործարանային բժիշկների—բանվորական խմբերում:

Մյուս կողմից, կուսակցության ձախ թևը, վորին վիճակվեց ղեկավարել կուսակցությունը հակահեղափոխության վճռական հաղթանակի այս ժամանակաշրջանում, թեորիապես ընդունեց և իրականում կիրարկում եր անլեգալ և լեգալ կուսակցական աշխատանքը նպատակահարմարորեն միացնելու տակտիկան: Սրան է վերաբերում Դումայի Ֆրակցիայի շուրջը կատարած



ամբողջ կուսակցական աշխատանքը և ամբողջ կուսակցական աշխատանքը լեգալ և կիսալեգալ պրոլետարական կազմակերպություններում: Ժամանակակից պատմական մոմենտի յուրահատուկ պայմաններն աշխատանքի հենց այս ձևերն են առաջադրել ի լրումն կուսակցական աշխատանքի հիմնական ձևերի, վորպես անլեգալ կուսակցության կողմից ավելի կամ պակաս լայն մասսաների վրա ներգործելու ձևեր: Հատկապես գործունեյության այդ ձևերում կուսակցությունը գործնականապես, իրականում բախվում է լիկվիդատորության հետ և նրան զգալի հարվածներ է հասցնում: Այդ հողի վրա էլ գործնականապես մերձենում եյին և մերձենում են տարբեր ֆրակցիաների կուսակցական սոցիալ-դեմոկրատները[1]: Յեվ այստեղ էլ, վերջապես, յերրորդ Դումայի ժամանակաշրջանի պայմաններում, կուսակցության տակտիկայի ու կազմակերպության նույն հարցերում, բոլշևիկյան ֆրակցիան բացահայտորեն սահմանազատվում է կեղծ-հեղափոխական, անկայուն, վոչ-մարքսիստ տարրերից, վորոնք դուրս են յեկել կուսակցական գործունեյության նոր ձևերի դեմ այսպես կոչված «ոտզովիզմի» դրոշի տակ:

Այժմ, նշելով բոլշևիկների հիմնական խնդիրները, «Пролетарий»-ի ընդլայնած խմբագրությունն արձանագրում է.

1) վոր կուսակցության և կուսակցականության համար առաջիկայում մղվելիք պայքարում բոլշևիկյան ֆրակցիայի,—վորը պետք է մնա վորպես կուսակցականությունը և հեղափոխական սոցիալ-դեմոկրատական գիծը կուսակցության մեջ պաշտպանող առաջավոր մարտիկը,—անելիքն է բազմակողմանիորեն յեռանդագին պաշտպանել ԿԿ-ին և կուսակցության Կենտրոնական Որգանին: Միայն համակուսակցական կենտրոնական հիմնարկները կարող են կուսակցական ուժերի վերախմբավորման ներկա ժամանակաշրջանում հեղինակավոր և ուժեղ ներկայացուցիչը հանդիսանալ կուսակցական գծի, վորի շուրջը համախմբվեյին բոլոր իսկապես կուսակցական և իսկապես սոցիալ-դեմոկրատական տարրերը.

1 ԿԿ-ում միաձայն ընդունված են արհեստակցական միությունների, կոոպերատիվների վերաբերյալ բանաձևերը և դումայական աշխատանքին վերաբերող մի շարք վորոշումներ: Ճնշող մեծամասնությունը կողմնակից է վերջին համառուսաստանյան կոնֆերենցիայում վարած կուսակցական գծին: Կենտրոնական Որգանը վարելու փորձը, վերոհիշյալ համագումարների բանվորական խմբերը և այլն:

2) վոր կուսակցության մենշևիկյան բանակում, վորտեղ ֆրակցիայի «Голос Социал-Демократа» պաշտոնական որգանն ամբողջովին գերի յե մենշևիկ-լիկվիդատորների ձեռքին, ֆրակցիայի փոքրամասնությունը մինչև վերջը ճաշակելով լիկվիդատորության ուղին, արդեն իր բողոքի ձայնն է բարձրացնում այդ ուղու դեմ և նորից կուսակցական հող է փնտրում իր գործունեյության համար («վիբորգյան» մենշևիկների նամակը Ս.-Պետերբուրգում, մենշևիկների պառակտումը Մոսկվայում, պառակտումը «Голос Социал-Демократа»-յի խմբագրության մեջ, համապատասխան բաժանումը Բունդում և այլն).

3) վոր այդ պարագաներում բոլշևիկների խնդիրը, վորոնք մնալու յեն կուսակցության միաձույլ ավանգարդը, վոչ միայն լիկվիդատորության և ռեվիզիոնիզմի բոլոր տեսակների դեմ մղվող պայքարը շարունակելն է, այլև մյուս ֆրակցիաների մարքսիստական ու կուսակցական տարրերի հետ մերձենալը, ինչպես այդ թելադրվում է ՌՍԴԲ Կուսակցության պահպանության ու ամրապնդման համար մղվող պայքարի ընդհանուր նպատակներով:

## III. ՀՈԳՈՒՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՋԱՏ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ, ԹԵ ՀՈԳՈՒՏ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԱԳԻՏԱՑԻԱ ՄՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուշադրության առնելով,—վոր բոլշևիկյան ֆրակցիան կուսակցական միասնականության վերականգնման ժամանակվանից իր քաղաքական գծի կողմնակիցներին միշտ առանձնացնում ու համախմբում եր այն հարցերում, վորոնք արդեն համակուսակցական դիսկուսիայի առարկա յեն դարձել, և միշտ այս հարցերի իր վորոշման համար մղվող գաղափարական պայքարի միջոցով համակուսակցական ասպարեզում—զուգահեռ պլատֆորմաներ ու դիսկուսիա կուսակցական բջիջներում, համակուսակցական համագումարներում.

— վոր միայն այսպիսի միջոցն է ապահովում թե՛ իսկական համախոհների համախմբումը և թե՛ դեպի ֆրակցիա գրավելը այն բոլոր տարրերին, վորոնք ըստ յեության ազգակից են նրան.

— վոր մեր հիմնական նպատակի իրականացման համար ել, կուսակցության վրա՝ նրանում հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գծի վերջնական հաղթանակի նպատակով ազդելու համար, միմիայն համակուսակցական ասպարեզումն է բոլշևիկների առանձնացումը միակ ճիշտ ու միակ նպատակահարմար հանդիսանում.

— վոր այլ միջոց—առանձին բոլշևիկյան կոնֆերենցիաներ ու համագումարներ հրավիրելու միջոցն անխուսափելիորեն կհասցներ կուսակցության պառակտմանը վերևից ներքև և անուղղելի հարված կհասցներ այն ֆրակցիային, վորն իր վրա կվերցներ ՌՍԴԲ Կուսակցության այսպիսի վերջնական պառակտման նախաձեռնությունը.

այս ամենն ուշադրության առնելով, «Пролетарий»-ի ընդլայնած խմբագրությունը վորոշում է.

1) նախազգուշացնել բոլոր համախոհներին ընդդեմ, հատկապես, բոլշևիկյան համագումարի համար մղվող ագիտացիայի, վորպես մի ագիտացիայի, վորն ոբյեկտիվորեն դեպի կուսակցության պառակտումն է տանում և կարող է վճռական հարված հասցնել այն դիրքին, վորը հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան արդեն նվաճել է կուսակցության մեջ:

2) Բոլշևիկների մերձավորագույն կոնֆերենցիան հարմարեցնել հերթական կուսակցական կոնֆերենցիային, իսկ ֆրակցիայի գերագույն ժողով ամբողջությամբ կհանդիսանա համախոհների ժողովը մերձավորագույն կուսակցական համագումարում:

3) Հերթի դրված այն կարևոր հարցերի պատճառով, վորոնք հուզում են կուսակցությանն ու ֆրակցիային, ԿԿ-ում յեղող բոլշևիկներին հանձնարարված է պահանջել, վոր ըստ կարելույն արագացվի համակուսակցական կոնֆերենցիայի հրավիրումը (ժամկետ 2—3 ամիս) և, ապա, արագացվի կուսակցական համագումարի հրավիրումը:

## IV. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ N N-ՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

«Пролетарий»-ի ընդլայնած խմբագրությունը, քննելով N N-ում գտնվող դպրոցի հարցը, ընդունում է, վոր այդ դպրոցի կազմակերպումը մի խումբ նախաձեռնողների (այդ թվումն է «Пролетарий»-ի ընդլայնած խմբագրության անդամներից մեկը, ընկ. Մաքսիմովը) կողմից հենց սկզբից ընթանում եր առանց «Пролетарий»-ի խմբագրության գիտության և ուղեկցվում

եր նրա դեմ մղվող ագիտացիայով: Նախաձեռնողների խմբի մինչև այժմ արած քայլերն արդեն լիակատար հստակությամբ դրսևորում են, որ այդ դպրոցի անվան տակ ստեղծվում է բոլշևիկներից անջատվող Ֆրակցիայի մի նոր կենտրոն: Այս դպրոցի նախաձեռնողները, անկախ ընդհանուր կենտրոններից, հարաբերությունների մեջ են մտել ռուսական շատ կոմիտեների հետ, կազմակերպել են ինքնուրույն դրամարկղ ու փողի գանձումներ, կազմակերպում են իրենց գործակալությունը, նույնիսկ չհաղորդելով այս մասին ո՛չ «Пролетарий»-ի խմբագրությանը և ո՛չ էլ համակուսակցական կենտրոնին:

Ընդունելով, որ, փորձված կուսակցական աշխատողների արդի պակասության պահին, նպատակահարմարորեն դրված ու իրապես կուսակցական դպրոցը, նույնիսկ արտասահմանում գտնվածը, տեղական կազմակերպություններին կարող եր որոշ չափով օգնել բանվորների միջավայրից պիտանի կուսակցական աշխատողներ մշակելու գործում, և իր կողմից անհրաժեշտ համարելով անել այն ամենը, ինչ թույլ է տալիս մեր կազմակերպության դրությունը տեղական կազմակերպություններին ընձեռելիք այս օգնությունն իրագործելու համար,—ընդլայնված խմբագրությունը N N-ում գտնվող դպրոցի նախաձեռնողների ամբողջ գործելակերպի հիման վրա հավաստում է, որ այս նախաձեռնողները ոչ թե համաֆրակցիոն նպատակների յեն հետամուտ լինում, այսինքն ոչ թե բոլշևիկյան Ֆրակցիայի նպատակին, որպես կուսակցության մեջ գոյություն ունեցող գաղափարական մի հոսանքի, այլ իրենց առանձին, խմբային գաղափարա-քաղաքական նպատակներին: «Пролетарий»-ի ընդլայնված խմբագրությունը հավաստում է, որ մեր Ֆրակցիայում օտզովիզմի, ուլտիմատիզմի, աստվածակառուցման քարոզի հանդեպ ունեցած վերաբերմունքի և առհասարակ բոլշևիկների ներկուսակցական խնդիրների հարցերի շուրջը դրսևորված տարաձայնությունների կապակցությամբ, այն բանի կապակցությամբ, որ NN-ում գտնվող դպրոցի նախաձեռնողներն ու կազմակերպողներն են հանդիսանում բացահայտ օտզովիզմի, ուլտիմատիզմի և աստվածակառուցման ներկայացուցիչները,—այս նոր կենտրոնի գաղափարա-քաղաքական կերպարանքը լիակատար հստակությամբ է որոշվում:

Այս ամենը նկատի ունենալով, «Пролетарий»-ի ընդլայնված



խմբագրությունը հայտարարում է, որ բոլշևիկյան Ֆրակցիան այս դպրոցի համար ոչ մի պատասխանատվություն չի կարող կրել:

## V. ԸՆԿ. ՄԱՔՍԻՄՈՎԻ ԱՆՋԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունելով, որ օրակարգի բոլոր հարցերի կապակցությամբ ակներևությամբ դրսևորվեց սկզբունքային ու տակտիկական միասնականության բացակայությունը, մի կողմից, «Пролетарий»-ի ընդլայնված խմբագրության տասն անդամների և, մյուս կողմից, ընկ. Մաքսիմովի միջև. ընդունելով, այնուհետև, որ վերջին ժամանակներն ընկ. Մաքսիմովի կողմից արվել են քայլեր, ուղղված նույնպես և դեպի բոլշևիկյան Ֆրակցիայի կազմակերպական միասնականության խախտումը. հավաստելով, վերջապես, որ ընկ. Մաքսիմովը բացասական պատասխան տվեց «Пролетарий»-ի ընդլայնված խմբագրության որոշումներին յենթարկվելու և դրանք կենսագործելու հարցի առթիվ,—«Пролетарий»-ի խմբագրությունն ընդլայնված կազմով այսուհետև իր վրայից վերցնում է ամեն մի պատասխանատվություն ընկ. Մաքսիմովի բոլոր քաղաքական քայլերի համար:

Տպագրվել է *«Пролетарий»*-ի
1909 թ. հուլիսի 16 (3)-ի № 46-ին կցված հավելվածում:
Յերկեր, հ. XIV, եջ 96—103:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ԼԻԿՎԻԴԱՏՈՐՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

«Пролетарий»-ի ներկա №-ին կցված առանձին հավելվածում ընթերցողները կգտնեն հաղորդում բոլշևիկների խորհրդակցության մասին ու նրա ընդունած բանաձևերի բնագիրը[1]: Ներկա հոդվածում մենք մտադիր ենք կանգ առնել այս Խորհրդակցության նշանակությունն ու բոլշևիկների մի փոքրիկ մասի այնտեղ տեղի ունեցած անջատումը գնահատելու վրա ինչպես մեր Ֆրակցիայի տեսակետից, այնպես էլ վողջ ՌՍԴԲԿ տեսակետից ամբողջությամբ վերցված:

Վերջին յերկու տարիները, սկսած մոտավորապես 1907 թ. հունիսի 16 (3)-ի պետական հեղաշրջումից և մինչև ներկա ժա-

[1] Տե՛ս Յերկերի XIV հատորը, եջ 85—103:—Խմբ.:

մանակը, ներկայացնում են կտրուկ բեկման, ծանր ճգնաժամի դարաշրջան ռուսական հեղափոխության պատմության մեջ ու ռուսաստանյան բանվորական շարժման և ՌՍԴԲԿ զարգացման մեջ: 1908 թ. դեկտեմբերին կայացած ՌՍԴԲԿ համառուսաստանյան կոնֆերենցիան տվեց ժամանակակից քաղաքական դրության, հեղափոխական շարժման վիճակի ու նրա հեռանկարների, մեր ապրած մոմենտում բանվոր դասակարգի կուսակցության խնդիրների հարցերին վերաբերյալ հանրագումարները: Այս կոնֆերենցիայի բանաձևերը կուսակցության հաստատուն սեփականությունն են, և այն մենշևիկ-օպորտունիստները, վորոնք ինչ էլ վոր լինի ցանկանում եյին այն քննադատել, առանձին ակնառությամբ դրսևորեցին միայն իրենց «քննադատության» անզորությունը, «քննադատության», վորն անընդունակ է ուղղակի վորևէ խելամիտ, ամբողջական, սիստեմատիկ բան հակադրելու այս բանաձևերում լուծված հարցերին:

Սակայն կուսակցական կոնֆերենցիան մեզ տվեց վոչ միայն այս: Կուսակցության կյանքում այն կարևորագույն դեր խաղաց նրանով, վոր յերկու ֆրակցիայում էլ՝ թե՛ մենշևիկների և թե՛ բոլշևիկների մոտ՝ նոր իդեական խմբավորումներ նշեց: Այս ֆրակցիաների պայքարը լցրեց, կարելի յե առանց չափազանցության ասել, կուսակցության ամբողջ պատմությունը, ինչպես անմիջականորեն հեղափոխությունից առաջ, այնպես էլ հեղափոխության ժամանակ: Ուստի և նոր իդեական խմբավորումները կուսակցության կյանքում հանդիսանում են շատ կարևոր յերևույթ, վորի մասին բոլոր սոցիալ-դեմոկրատները պետք է լավ մտածեն, հասկանան, յուրացնեն այն, վորպեսզի նոր դրության նոր հարցերին կարողանան գիտակցորեն վերաբերվել:

Այս նոր իդեական խմբավորումները կարող են կարճորեն բնութագրվել վորպես լիկվիդատորության յերևալը կուսակցության յերկու ծայրային թևերում ու վորպես պայքար նրա դեմ: Մենշևիկների մոտ լիկվիդատորությունը դրսևորվեց 1908 թ. դեկտեմբերի մոտերքը լիակատար պարզությամբ, իսկ պայքարը նրա դեմ այն ժամանակ մղվում եր համարյա բացառապես ուրիշ ֆրակցիաների (բոլշևիկների, լեհական, լատիշական ս.-դ., մասամբ բունդականների) կողմից: Մենշևիկ-կուսակցականները, լիկվիդատորության մենշևիկ-հակառակորդները, վորպես հոսանք, նոր-նոր եյին նշվում այն ժամանակ, հանդես չգալով քիչ թե շատ համախմբված ու բացահայտ կերպով: Բոլշևիկների մոտ



վորոշակիորեն ուրվագծվեցին և բացահայտորեն հանդես յեկան յերկու մասերն էլ. թե՛ ուղղափառ բոլշևիկների ճնշող մեծամասնությունը, վորոնք վճռականորեն պայքարում եյին օտզովիզմի դեմ ու կոնֆերենցիայի բոլոր բանաձևերն իրենց վոգով անցկացրին, և թե՛ «օտզովիստների» փոքրամասնությունը, վորոնք իրենց հայացքները պաշտպանում եյին վորպես առանձին խումբ, հաճախակի աջակցություն ստանալով իրենց ու ուղղափառ բոլշևիկների միջև տատանվող «ուլտիմատիստներից»: Վոր օտզովիստները (և ուլտիմատիստները, վորչափով սրանք գլորվում են դեպի նրանց) շուռ տված մենշևիկներ են, նոր տեսակի լիկվիդատորներ, այս հաճախակի արդեն ասվել ու ցույց է տրվել «Пролетарий»-ում (տե՛ս առանձնապես №№ 39[1], 42, 44[2]): Այսպես ուրեմն. մենշևիկների մոտ՝ լիկվիդատորների ճնշող մեծամասնություն և կուսակցականների բողոքի ու նրանց դեմ ուղղված պայքարի հազիվ նշվող սկիզբ. բոլշևիկների մոտ՝ ուղղափառ տարրերի լիակատար տիրապետություն օտզովիստների բացահայտորեն հանդես յեկած փոքրամասնությամբ,—այս եր ներկուսակցական այն դրությունը, վորն ուրվագծվել եր ՌՍԴԲԿ Համառուսաստանյան Դեկտեմբերյան կոնֆերենցիայում:

Իսկ ի՞նչ բան է այս լիկվիդատորությունը, վո՞րն է նրա յերևալու պատճառը, ինչո՞ւ օտզովիստները (և ուլտիմատիստները, վորոնց մասին մենք մի քանի խոսք կասենք ստորև) նույնպես լիկվիդատորներ են, շուռ տված մենշևիկներ, մի խոսքով՝ վո՞րն է մեր կուսակցության ներսում յեղող նոր իդեական խմբավորման սոցիալական իմաստը և վո՞րը նրա սոցիալական նշանակությունը:

Լիկվիդատորությունը բառիս նեղ իմաստով, մենշևիկների լիկվիդատորությունը, իդեապես սոցիալիստական պրոլետարիատի հեղափոխական դասակարգային պայքարի ժխտումն է առհասարակ և, մասնավորապես, պրոլետարիատի հեգեմոնիայի ժխտումը մեր բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ: Այս ժխտումը, հասկանալի յե, ընդունում է տարբեր ձևեր, տեղի յե ունենում շատ թե քիչ գիտակցորեն, կտրուկ կերպով, հետևողականորեն: Իբրև օրինակ կարելի յե բերել Չերևանինին ու Պոտրեսովին: Առաջինը տվեց հեղափոխության մեջ պրոլե-

---

1 Տե՛ս Յերկերի XII հատորը, եջ 390—402:—Խմբ.:
2 Տե՛ս Յերկերի XIV հատորը, եջ 33—35 և 52—60:—Խմբ.:

տարիատի ունեցած դերի այնպիսի գնահատական, վոր «Голос Социал-Демократа»-յի ամբողջ խմբագրությունը դեռ մինչև նրա ներսում տեղի ունեցած պառակտումը (այսինքն՝ թե՛ Պլեխանովը և թե՛ Մարտով—Դան—Ակսելրոդ—Մարտինովը) ստիպված յեղավ Զերկվանիից հրաժարվել, թեպետ նա այս արավ խորապես անվայել ձևով, այն է՝ նա հետևողական լիկվիդատորից հրաժարվեց «Vorwärts»-ում գերմանացիների առաջ, մեջ չբերելով իր հայտարարությունը «Голос Социал-Демократа»-ում ռուս ընթերցողների համար: Պոտրեսովն իր «Հասարակական շարժումը Ռուսաստանում XX դարի սկզբին» հոդվածում այնպես հաջող կերպով եր լիկվիդացիայի յենթարկում ռուսական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը, վոր Պլեխանովը դուրս յեկավ կոլեկտիվ լիկվիդատորական խմբագրությունից:

Կազմակերպորեն լիկվիդատորություն անլեգալ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անհրաժեշտության ժխտումն է ու դրա հետ կապված հրաժարումը ՌՍԴԲԿ-ից, այնտեղից դուրս գալը, պայքար նրա դեմ լեգալ մամուլի եջերում, բանվորական լեգալ կազմակերպություններում, արհեստակցական միություններում, կոոպերատիվներում, համագումարներում, վորտեղ մասնակցում են բանվորական պատգամավորներ և այլն: Մենշևիկների այսպիսի լիկվիդատորության օրինակներով վխտում է Ռուսաստանի ուզածդ կուսակցական կազմակերպության պատմությունը վերջին յերկու տարում: Վորպես լիկվիդատորության առանձնապես ակնառու մի օրինակ մեր կողմից արդեն մատնանշվել է («Пролетарий» № 42, արտատպվել է «ՌՍԴԲԿ Համառուսաստանյան կոնֆերենցիան 1908 թ. դեկտեմբերին» բրոշյուրում) այն դեպքը, յերբ մենշևիկ-ցեկիստները փորձում եյին ուղղակի վիժեցնել կուսակցության ԿԿ, դադարեցնել այս հիմնարկի գործելը: Վորպես Ռուսաստանում անլեգալ մենշևիկյան կազմակերպությունների համարյա լիակատար քայքայման նշան կարելի յե մատնանշել այն բանը, վոր կուսակցական վերջին կոնֆերենցիայի «կովկասյան պատվիրակությունն» ամբողջովին բաղկացած եր արտասահմանցիներից, իսկ «Голос Социал-Демократа»-յի խմբագրությունը կուսակցության ԿԿ-ի կողմից հաստատվել եր (1908 թ. սկզբին), վորպես առանձին գրական մի խումբ, առանց վորևե կապի Ռուսաստանում գործող այս կամ այն կազմակերպության հետ:



Մենշևիկները չեն տալիս լիկվիդատորության այս բոլոր արտահայտումների հանրագումարները: Նրանք մասամբ թաքցնում են դրանք, մասամբ իրենք են շշկլվում, չգիտակցելով առանձին փաստերի նշանակությունը, գլուխները կորցնելով մանր բաների, դեպքերի, անձնավորությունների մեջ, չկարողանալով ընդհանրացնել, չըմբռնելով անցուդարձի իմաստը:

Իսկ այս իմաստն այն է, վոր բուրժուական հեղափոխության դարաշրջանում բանվորական կուսակցության օպորտունիստական թևը ճգնաժամերի, քայքայման ու փլուզման ժամանակ անխուսափելիորեն պետք է դառնար կա՛մ ամբողջովին լիկվիդատորական, կա՛մ լիկվիդատորներին գերի: Բուրժուական հեղափոխության դարաշրջանում անխուսափելի յե մանր-բուրժուական ուղեկիցների (Mitläufer է կոչվում այս գերմաներեն) միացումը պրոլետարական կուսակցությանը, վորոնք ամենից ավելի քիչ են ընդունակ յուրացնելու պրոլետարական թեորիան ու տակտիկան, ամենից ավելի քիչ են ընդունակ դիմանալու փլուզման դարաշրջանում, ամենից ավելի շատ են հակամետ օպորտունիզմը մինչև վերջը հասցնելու: Վրա հասավ քայքայումը—ինտելիգենտ-մենշևիկների, գրականագետ-մենշևիկների մասսան փաստորեն գնաց-դարձավ լիբերալ: Ինտելիգենցիան հեռ շուռ յեկավ կուսակցությունից—հետևապես, ամենից ավելի քայքայվեցին մենշևիկյան կազմակերպությունները: Այն մենշևիկները, վորոնք անկեղծորեն համակրում եյին պրոլետարիատին ու պրոլետարական դասակարգային պայքարին, պրոլետարական հեղափոխական թեորիային (իսկ այսպիսի մենշևիկներ միշտ յեղել են, վորոնք իրենց օպորտունիզմը հեղափոխության մեջ արդարացնում եյին կացության բոլոր շրջադարձերը, խճճված պատմական ուղու բոլոր կեռմանները հաշվի առնելու ցանկությամբ), դուրս յեկան «դարձյալ փոքրամասնության մեջ», փոքրամասնության մեջ մենշևիկների միջև, առանց վճռականություն ունենալու պայքար մղելու լիկվիդատորների դեմ, առանց ուժեր ունենալու այս պայքարը հաջողությամբ մղելու համար: Բայց ուղեկից-օպորտունիստներն ավելի ու ավելի յեն հեռանում դեպի լիբերալիզմ, Պլեխանովի համար Պոտրեսովն անտանելի յե դառնում, «Голос Социал-Демократа»-յի համար—Չերևանինը, Մոսկվայի բանվոր մենշևիկների համար—ինտելիգենտ մենշևիկները և այլն: Մենշևիկ-կուսակցականները, մենշևիկ-ուղղափառ մարքսիստներն սկսում են անջատվել և իրերի զորությամբ, քա-

նի վոր նրանք ձգտում են դեպի կուսակցությունը, դուրս է գալիս, վոր նրանք գնում են դեպի բոլշևիկները։ Եվ մեր խնդիրն է—ըմբռնել այս դրությունը, ամեն կերպ և ամենուրեք աշխատել լիկվիդատորներին բաժանել կուսակցական-մենշևիկներից, մոտենալ վերջիններին վո՛չ թե սկզբունքային տարաձայնությունները ջնջելու իմաստով, այլ իրոք միասնական բանվորական կուսակցություն համախմբելու իմաստով, կուսակցություն, վորի մեջ տարաձայնությունները չպետք է խանգարեն ընդհանուր աշխատանքին, ընդհանուր դրոհին, ընդհանուր պայքարին։

Բայց պրոլետարիատի մանր-բուրժուական ուղեկիցները կազմո՞ւմ են արդյոք մենակ մենշևիկյան ֆրակցիայի բացառիկ սեփականությունը։ Վո՛չ։ Մենք «Пролетарий»-ի №39-ում[4] արդեն մատնանշել ենք, վոր նրանք կան նաև բոլշևիկների մոտ, ինչպես այս մասին վկայում է հետևողական ոտզովիստների փաստարկման ամբողջ յեղանակը, «նոր» տակտիկան հիմնավորելու նրանց փորձերի ամբողջ բնույթը։ Մասսայական բանվորական կուսակցության վոչ մի քիչ թե շատ նշանակալից մաս, ըստ բանի բուն եյության, չեր կարող խուսափել բուրժուական հեղափոխության դարաշրջանում տարբեր յերանգների «ուղեկիցների» այս կամ այն թիվը ներառելուց։ Այս յերևույթն անխուսափելի յե մինչև անգամ ամենից ավելի զարգացած կապիտալիստական յերկրներում բուրժուական հեղափոխության լիակատար ավարտումից հետո, վորովհետև պրոլետարիատը միշտ շփվում է մանր բուրժուազիայի ամենաբազմատեսակ խավերի հետ, նորից ու նորից միշտ համալրվում է այս խավերից։ Այս յերևույթի մեջ վոչ մի աննորմալ ու վոչ մի սարսափելի բան չկա, յեթե միայն պրոլետարական կուսակցությունն այլասեռ տարրերը կարողանա մարսել, նրանց իրեն յենթարկել և վոչ թե նրանց յենթարկվել, կարողանա ժամանակին գիտակցել, վոր այս կամ այն տարրերը իրոք այլասեռ տարրեր են և վոր վորոշ պայմաններում անհրաժեշտ է նրանցից պարզորեն ու բացահայտորեն սահմանազատվել։ Այս տեսակետից ՌՍԴԲԿ յերկու ֆրակցիաների միջև գոյություն ունեցող տարբերությունը հանգում է հենց այն բանին, վոր մենշևիկները դուրս յեկան լիկվիդատորների (այսինքն՝ «ուղեկիցներին») գերի,—այս մասին են վկայում հենց մենշևիկների շարքերից թե՛ Մոսկվայի նրանց կողմնակիցները Ռու-

4 Տե՛ս Երկերի XII հատորը, եջ 390—402։—Խմբ.։



սաստանում, թե՛ Պլեխանովն իր բաժանվելովը Պոտրեսովից ու «Голос Социал-Демократа»-յից արտասահմանում, իսկ բոլշևիկների մոտ ոտզովիզմի ու աստվածակառուցման լիկվիդատորական տարրերը հենց սկզբից աննշան փոքրամասնություն դուրս յեկան, հենց սկզբից անվտանգ դարձված դուրս յեկան, հետո եվ նաև հետ մղված։

Վոր ոտզովիզմը շուռ տված մենշևիզմ է, վոր այն անխուսափելիորեն նույնպես տանում է դեպի լիկվիդատորություն, միայն մի քիչ այլ տեսակի, սրանում կասկած չի կարող լինել։ Խոսքն, իհարկե, անձերի մասին չե և վոչ էլ առանձին խմբերի մասին, այլ այս ուղղության օբյեկտիվ տենդենցի մասին, քանի վոր այն դադարում է միայն տրամադրություն լինելուց և փորձում է կազմավորվել վորպես առանձին ուղղություն։ Մինչև հեղափոխությունը բոլշևիկները լիակատար վորոշակիությամբ հայտարարում եյին, առաջին, վոր նրանք կամենում են առանձին ուղղություն չստեղծել սոցիալիզմի մեջ, այլ ամբողջ միջազգային հեղափոխական, օրթոդոքս-մարքսիստական սոցիալ-դեմոկրատիայի հիմնական սկզբունքները գործադրել մեր հեղափոխության նոր պայմանների նկատմամբ. յերկրորդ, վոր նրանք կկարողանան իրենց պարտքը կատարել նաև ամենածանր, դանդաղ, առօրյա գորշ աշխատանքի ժամանակ, յեթե պայքարից հետո, բոլոր առկա հեղափոխական հնարավորություններն սպառելուց հետո, պատմությունը մեզ կստիպի քարշ գալ «ինքնակալական սահմանադրության» ուղիներով։ Ամեն մի քիչ թե շատ ուշադիր ընթերցող այս հայտարարությունները կգտնի սոցիալ-դեմոկրատների 1905 թվականի գրականության մեջ։ Այս հայտարարություններն ահագին նշանակություն ունեն, վորպես ամբողջ ֆրակցիայի պարտավորություն, վորպես ուղու գիտակցական ընտրություն։ Այս պարտավորությունը պրոլետարիատի առաջ կատարելու համար պետք եր անշեղորեն մարսել, դաստիարակել նրանց, վորոնց դեպի ս.-դ.-իան եյին գրավում ազատության օրերը (—կազմավորվեց մինչև անգամ «ազատության օրերի սոցիալ-դեմոկրատների» տիպ—), վորոնց, գլխավորապես, հրապուրում եր լոզունգների վճռականությունը, հեղափոխականությունը, «պայծառությունը», վորոնց պակասում եր տոկունությունը պայքարելու համար վո՛չ միայն հեղափոխական տոների օրերին, այլ և հակա-հեղափոխական լի օրերին։ Այս տարրերի մի մասը աստիճանաբար ներգրավվեց պրոլետարական աշխատանքի մեջ և

յուրացրեց մարքսիստական աշխարհայացքը։ Մյուս մասը միայն անգիր արեց և ոչ թե յուրացրեց մի քանի լոզունգներ, կրկնելով հին խոսքերը և չկարողանալով հեղափոխական սոց.-դեմոկրատական տակտիկայի հին սկզբունքները կիրառել փոխված պայմանների վերաբերմամբ։ Թե՛ այս և թե՛ մյուս մասի վիճակն ակնառու կերպով լուսաբանվում է այն անձերի էվոլուցիայով, ովքեր կամենում էին III Դուման բոյկոտի ենթարկել։ 1907 թվականի հունիսին այսպիսիները բոլշևիկյան ֆրակցիայի մեծամասնությունն էին կազմում։ Բայց «Пролетарий»-ն անշեղորեն հակաբոյկոտիստական գիծ էր տանում։ Կյանքը ստուգեց այս գիծը, և մի տարի անց «օտզովիստները» բոլշևիկների մեջ կազմեցին փոքրամասնություն (14 ձայն ընդդեմ 18-ի 1908 թ. ամառը) Մոսկվայի կազմակերպության մեջ—«բոյկոտիզմի» ներքին ամրոցում։ Դարձյալ մի տարի անց, օտզովիզմի սխալականությունը համակողմանի ու բազմիցս լուսաբանելուց հետո, բոլշևիկյան ֆրակցիան—և սրանումն է բոլշևիկների նորերս կայացած խորհրդակցության նշանակությունը—վերջնականապես լիկվիդացիայի ենթարկեց օտզովիզմն ու դեպի այն գլորվող ուլտիմատիզմը, վերջնականապես լիկվիդացիայի ենթարկեց լիկվիդատորության այս յուրատեսակ ձևը։

Թո՛ղ մեզ այս պատճառով չկշտամբեն «նոր պառակտման» համար։ Մեր խորհրդակցության մասին տված հաղորդագրության մեջ մենք մանրամասն բացատրում ենք մեր խնդիրներն ու մեր վերաբերմունքը դեպի գործը։ Մենք սպառեցինք անհամաձայն ընկերներին համոզելու բոլոր հնարավորություններն ու բոլոր միջոցները, մենք այս բանի վրա աշխատեցինք 1½ տարուց ավելի։ Բայց, որպես ֆրակցիա, այսինքն՝ համախոհների միություն կուսակցության մեջ, մենք չենք կարող աշխատել առանց հիմնական հարցերում միասնություն ունենալու։ Ֆրակցիայից անջատվելն այն չէ, ինչ որ կուսակցությունից անջատվելը։ Մեր ֆրակցիայից անջատվածներն ամենևին հնարավորությունը չեն կորցնում կուսակցության մեջ աշխատելու։ Կա՛մ նրանք կմնան «վայրենի», այսինքն ֆրակցիաներից դուրս, և կուսակցական աշխատանքի ընդհանուր իրադրությունը հարկադրված կլինի նրանց ներգրավել։ Կա՛մ նրանք փորձ կանեն նոր ֆրակցիա ստեղծելու—այս նրանց օրինական իրավունքն է, յեթե նրանք կամենում են պաշտպանել ու զարգացնել հայացքների ու



տակտիկայի իրենց առանձին յերանգը—և այն ժամանակ ամբողջ կուսակցությունը շատ արագորեն կտեսնի այն տենդենցների ակներև արտահայտությունն իրականում, որոնց իդեական նշանակությունը մենք աշխատում եյինք գնահատել վերը։

Բոլշևիկները հարկադրված են կուսակցությանն առաջնորդել։ Առաջնորդելու համար պետք է գիտենալ ուղին, պետք է դադարել տատանվելուց, դադարել ժամանակ վատնելուց տատանվողներին համոզելու վրա, ֆրակցիայի ներսում անհամաձայնների դեմ պայքար մղելու վրա։ Օտզովիզմն ու դեպի այն գլորվող ուլտիմատիզմն անհամատեղելի յեն այն աշխատանքի հետ, որ այժմ հեղափոխական ս.-դ.-ներից պահանջում են տվյալ հանգամանքները։ Մենք սովորեցինք հեղափոխության ժամանակ «ֆրանսերեն խոսել», այսինքն շարժման մեջ մտցնել առաջ մղող լոզունգների մաքսիմումը, բարձրացնել անմիջական մասսայական պայքարի յեռանդն ու թափը։ Այժմ, կանգառման, ռեակցիայի, քայքայման ժամանակ, մենք պետք է սովորենք «գերմաներեն խոսել», այսինքն՝ գործել դանդաղ (այլապես չի կարելի, մինչև որ նոր վերելք չլինի), սիստեմատիկորեն, համառ, շարժվելով քայլ առ քայլ, նվաճելով վերշոկը վերշոկի հետևից։ Ում համար ձանձրալի յե այս աշխատանքը, ով չի հասկանում ս.-դ. տակտիկայի հեղափոխական հիմունքները պահպանելու ու զարգացնելու անհրաժեշտությունը նաև այս ուղու վրա, ուղու այս շրջադարձի վրա, նա զուր կկրի մարքսիստի անունը։

Մեր կուսակցությունը չի կարող առաջ գնալ առանց լիկվիդատորության վճռական լիկվիդացիայի։ Իսկ լիկվիդատորությանը վերաբերում է ոչ միայն մենշևիկների անմիջական լիկվիդատորությունն ու նրանց օպորտունիստական տակտիկան։ Սրան է վերաբերում նաև շուռ տված մենշևիզմը։ Սրան են վերաբերում օտզովիզմն ու ուլտիմատիզմը, որոնք հակազդում են կուսակցության կողմից այն հերթական խնդրի կատարմանը, որը մոմենտի յուրատեսակ առանձնահատկությունն է կազմում, Դումայի ամբիոնն օգտագործելու և բանվոր դասակարգի բոլոր ու ամեն տեսակ կիսալեգալ ու լեգալ կազմակերպություններից հենակետեր ստեղծելու խնդիրը։ Սրան է վերաբերում աստվածակառուցումն ու աստվածակառուցողական տենդենցների պաշտպանությունը, որոնք արմատից խզում են կապերը մարքսիզմի հիմունքների հետ։ Սրան է վերաբերում բոլ-

շևիկների կուսակցական խնդիրների անըմբռնողությունը,—այն խնդիրների, վորոնց նպատակը 1906—1907 թվականներին մենշևիկյան կկ-ի տապալումն եր, վորը (կկ) չեր հենվում կուսակցության մեծամասնության վրա (վո՛չ միայն լեհերն ու լատիշները, այլ նույնիսկ բունդականները չեյին պաշտպանում այն ժամանակ զուտ մենշևիկյան կկ-ն),—այն խնդիրների, վորոնց եյությունն այժմ կուսակցական տարրերի համբերատար դաստիարակումն ե, նրանց համախմբումը, իրոք միասնական ու ամբողջ պրոլետարական կուսակցության ստեղծումը: Բոլշևիկները 1903—1905 և 1906—1907 թվականներին հակակուսակցական տարրերի դեմ մղած իրենց անհաշտ պայքարով հողը մաքրում եյին կուսակցականության համար: Բոլշևիկներն այժմ պետք ե կուսակցություն կառուցեն, ֆրակցիայից կուսակցություն կառուցեն, կուսակցություն կառուցեն այն դիրքերի ոգնությամբ, վորոնք ֆրակցիոն պայքարով են նվաճված:

Սրանք են մեր ֆրակցիայի խնդիրները մեր ապրած քաղաքական մոմենտի և ամբողջ ՌՍԴԲԿ ընդհանուր դրության կապակցությամբ: Այս խնդիրները կրկին անգամ ու առանձին մանրամասնությամբ կրկնված են ու պարզացված նորերս տեղի ունեցած բոլշևիկյան Խորհրդակցության բանաձևերում: Շարքերը վերակազմված են նոր պայքարի համար: Փոխված պայմանները հաշվի յեն առնված: Ուղին ընտրված ե: Հառա՛ջ այս ուղիով— և Ռուսաստանի Հեղափոխական Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը կսկսի արագորեն կազմավորվել ու դառնալ մի ուժ, վորին վոչ մի ռեակցիա չի սասանեցնի և վորը մեր հեղափոխության հետևյալ կամպանիայում ժողովրդի բոլոր մարտնչող դասակարգերի գլուխ կանցնի[1]:

«*Пролетарий*» № 46,
24 (11) հուլիսի 1909 թ.:
Յերկեր, h. XIV, եջ 104—110:

1 Նորերս լույս տեսան «Голос Социал-демократа»-յի № 15-ը և «Отклики Бунда»-յի № 2-ը: Այս հրատարակություններում նորից դիզվել ե լիկվիդատորության ջոկովի նմուշների մի կույտ, վորոնք քննության և գնահատման կպահանջեն առանձին հոդվածով «Пролетарий»-ի մերձավորագույն №-ում:





# ՌՍԴԲԿ ԲԱԳՎԻ Կ-ԵՅԻ ԹՌՈՒՑԻԿԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

## ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ XXVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԹԻՎ

XXVIII համագումարի առթիվ

Ընկերնե՛ր:

*Բանվորների դեմ պայքարելու և շուկան նվաճելու համար կապիտալիստները սովորաբար միավորվում են միությունների մեջ: Կառավարությունն, իհարկե, չի հետամտում նրանց—նա ճնշում ու փակում ե միայն բանվորական միությունները: Դրա փոխարեն նա ամեն կերպ հովանավորում ե կապիտալիստների միություններին:*

*Յեվ ահա ցարական իշխանության հովանու տակ Ռուսաստանում վաղուց արդեն աճում ու զարգանում են շաքարագործարանատերերի, ածխարդյունաբերողների, մետալուրգիստների, մանածագործների, նավատերերի միությունները և այլն...*

*Կարիք էլ չկա ասելու, վոր նավթարդյունաբերողները հետ չեն մնացել մյուս կապիտալիստներից. անցնում ե արդեն 25 տարին, ինչ նրանք կազմակերպվել են իրենց սեփական միության մեջ, վոր կոչվում ե «Բագվի նավթարդյունաբերողների համագումար»: Այս համագումարի նպատակը նույնն ե, ինչ վոր նաև կապիտալիստների մնացած միություններինը —պայքար բանվորների դեմ և շուկայի նվաճումը:*

*Բայց մեր պայքարի ճնշման տակ դեռ չորրորդ տարվա դեկտեմբերից և բանվորների նույն պայքարով նվաճված վորոշ գործարանային օրենքները նկատի առնելով, նավթ-ների համագումարը ստիպված յեղավ կազարմաների ու բնակավայրերի կառուցման, բժշկական ոգնության ու խեղանդամների հատուցման, դպրոցների ու ժողովրդական տների, լուսավորության ու ջրամատակարարման, ճանապարհներ անցկացնելու և այլնի նման կուլտուր-տնտեսական գործեր իր վրա վերցնել: Իբրև հետևանք առաջվեց նավթ-ների յուրօրինակ միություն ինքնավարության պարտականություններով, սակայն այն տարբերությամբ, վոր*



Գ. 86—4

ինքնավարության մեջ հնարավոր է վորոշ վերահսկողություն բնակչության կողմից, իսկ նավթ-ների համագումարում բնակչության մասին հիշատակություն անգամ չկա. նավթարդյունաբերողները միանգամայն առանց վերահսկողության տնօրինում են 100-հազարանոց բանվոր բնակչության բախտը:

Ցեվ նավթային արյունարբուները, զգալով վերահսկողության բացակայությունը, քայլ առ քայլ կրճատում են բանվորների անհետաձգելի կարիքների համար հատկացնելիք ծախսերը, չնայած ընթացիկ տարվա առատ հանույթին: Ահա փաստեր՝ վերցված «Нефтяное Дело»-յից: Այս տարվա հանույթը գերազանցել է անցյալ տարվա հանույթին առնվազն 6 միլիոն ռուբլով. շնորհիվ բնակարանադրամների ու պարգևադրամների դրավման, խոշոր շատ գործարանների (Մանթաշեվ, Կոկորեվ, Բորն, Ոլեում) փակման, գործարանային աշխատանքների կրճատման ու վերջինների՝ մանր գործանոցներին հանձնման նավթարդյունաբերողները շահել են ամենաքիչը 5 միլ. ռուբլի. մենք արդեն չենք խոսում աշխատանքային որը, արտաժամյա-ջոկատային աշխատանքը և այլն յերկարացնելու նման ուրիշ «աղբյուրների» մասին: Այսպես ուրեմն, ավելորդ 11 միլ. ռուբ. բացի այն չափազանց շատ ոգուտներից, վոր առհասարակ ստանում են նավթ-ները: Թվում է, թե կարիք չկա առանձնապես ժլատ լինելու: Այնինչ, վերջին 28-րդ համագումարում նավթարդ-ները, վոչ վոքի չհարցնելով, վոչ վոքի հաշվի չառնելով, վճռեցին բժշկական ոգնության ու ժողովրդական կրթության ծախսերը 37 հազար ռուբլով կրճատել, հատկացնելով, օրինակ, սովորող յերեխաների նախաճաշերի համար մեկ ու կեսական կոպեկ փոխանակ պահանջվող 3 կոպ.: Ցեվ այս յերեք կոպեկանոց խնայողությունը հարկավորվեց նրա համար, վորպեսզի վոստիկանական վոհմակի համար ամեն տարի հետ դրվի 600 հազար ռուբլի:

Ահա նա՝ պարոնայք նավթարդ-ների, զանազան Ղուկասովների ու Կինջունցեվների «հասարակական-կուլտուրական» գործունեությո՛ւնը:

Ցեվ ահա, հենց այս արյունարբուներն ու խաբեբաները, մեր յերեխաների կողոպտիչներն ու մարդասպանները մոտ որերս ժողովվեցին 28-րդ համագումարում «հասարակական գործերը» տնօրինելու:

Հետաքրքրական բաներ շատ յեղան համագումարում. և՛ այն, թե ինչպես նրանք մերժում եյին մեր յերեխաներին 3 կոպեկանոց նախաճաշ տալ. և՛ այն, թե ինչպես նրանք կրճատում եյին ժողովրդական կրթության համար հատկացնելիք ծախսերը. հետո հենց իրենք կգոռան Կարա Մուրզայի նման վորևե մի խաբեբայի բերանով բանվորների անկուլտուրականությա՛ն մասին: Ցե՛վ այն, թե ինչպես նրանք պակասեցնում եյին բժշկական ոգնությունը. և՛ այն, թե ինչպես նրանք «հասարակությունից» ու բանվորներից թաքցնում եյին բժիշկ Ջավրիևի գրությունն ամբուլատորիաներում տեղի ունեցող չարարկությունների մասին...

Բայց առանձնապես հետաքրքրական եր նավթ-ների վորոշումը հանքային ինքնավարության մասին:

Ահա թե ինչումն է բանը: Հեղափոխությունը ճնշելուց հետո կառավարությունը ծայրամասերը խաղաղացնելու և ընտելացնելու նպատակով հրաման արձակեց ծայրամասերում, և հետևապես, նաև Կովկասում, զեմստվո մտցնելու մասին: Ըստ վորում կառավարության «մտադրություններով» զեմստվոներում մեծամասնությունը պետք է ապահովված լինի կալվածատերերի ու (բուրժուազիայի) համար: Նավթարդ-ները դեպքից ոգտվեցին և՛ հանքային ինքնավարության նախագիծ մշակեցին, վորը և աննշան փոփոխություններով ընդունվեց նավթ-ների 28-րդ համագումարում: Այս նախագծի համաձայն հանքային շրջանի մեջ են մտնում՝ Բալախանի, Սաբունչի, Ռոմանի, Զաբրատ (առանց գյուղի), Բ. Եյբաթ, Սպիտակ քաղաք: Հանքային ինքնավարությունը, վորը հիմնվում է այս շրջանի համար, պետք է կառավարի ջրամատակարարման, լուսավորության, ճանապարհներ ու տրամվայ անցկացնելու, դպրոցների, ժողովրդական տների, բժշկական ոգնության, բնակավայրերի կառուցման, գործազուրկների համար հասարակական աշխատանքներ կազմակերպելու գործերը և այլն: Ինքնավարության 46 ձայնավորներից 6 տեղը տրվում է կառավարության ու հասարակակ. հիմնարկների ներկայացուցիչներին, 18 տեղը մի բուռ խոշոր նավթարդ-ներին, 9 տեղը մի խումբ միջակ նավթարդ-ներին, 9 տեղը մանր բուրժուաներին և 4 տեղը 100-հազարանոց բանվոր բնակչությանը:

Այս է նավթարդ-ների համագումարի վորոշումը: Ինչպես տեսնում եք, հանքային ինքնավարության մեջ տիրապետելու յեն խոշոր նավթարդ-ները, բանվորների չարագույն թշնամիները, իսկ բանվորների 4 ձայներն, իհարկե, հարկավորվեցին նրա հա-

մար, վորպեսզի նրանց միջոցով իմանան բանվորների պահանջները և գործեն նրանց հակառակ: Բացի դրանից, 4 ձայնն՝ այդ այնքան եժան է ու «լիբերալ», վոր կապիտալի հարգարժան ներկայացուցիչներն ազատ կարող եյին «սիրտ անել» մի այսպիսի վողորմություն տալու: Մյուս կողմից, կասկած չկա, վոր այսպիսի հանք. ինքնավարությունը հնարավորություն կտա, վորպեսզի մինչև այժմ ցրված նավթային բանվորներն ու ոժանդակ ձեռնարկությունների բանվորները միավորվեն մեկ բանակի մեջ, յերես առ յերես կանգնեն միավորված բուրժուազիայի դեմ:

Բացի դրանից հանք. ինքնավարությունը մեզ հնարավորություն կտա մեր բանվորական ներկայացուցիչների միջոցով լայնորեն ագիտացիա մղել մեր պահանջների համար, այլև հենց այս ներկայացուցիչների միջոցով վերահսկել նավթարդյունաբերողների կուլտուր-տնտեսական գործունեյության վրա:

Սրանք նկատի առնելով, այլև այն պատճառով, վոր հանդարտության այժմյան պայմաններում մենք պետք է ոգտվենք մեր ագիտացիան ու կազմակերպությունն ուժեղացնելու ամեն մի հնարավորությունից—մենք ընկերներին առաջարկում ենք մասնակցություն ունենալ հանք. ինքնավարության մեջ:

Թող խճճվեն եսերները, բոյկոտի յենթարկեն բուրժուական հանք. ինքնավարությունը,—գնալով այսպիսի ճանապարհով, նրանք ստիպված կլինեն բոյկոտի յենթարկել թե՛ բուրժուական սահմանադիր ժողովը և թե՛ բուրժուական գործարանները, իսկ հետո, հավանաբար, մեր մեղավոր յերկրից փոխադրվել վորևէ տեղ Մարսի վրա:

Թող խճճվեն մ-կները, պետիցիաներ մատուցեն նավթարդներին, գործնականորեն ամեն բանում համաձայնվելով նրանց հետ,—գնալով այսպիսի ճանապարհով, նրանք ստիպված կլինեն հրաժարվել ամեն մի պայքարից:

Պրոլետարիատը հավասարապես հեռո՛ւ յե ինչպես առաջին, այնպես էլ յերկրորդ տակտիկայից:

Մենք վոչ թե պետք է փախչենք կյանքից, այլ պետք է տիրե՛նք նրան:

Մենք վոչ թե պետիցիա կմատուցենք նավթարդ-ներին, այլ ընդհանո՛ւր գործադուլ, վոր ղեկավարում է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան:

Նավթային բուրժուազիայի գործունեյության անդադրում մերկացման համար մենք կպահանջենք ձայների հավասար քա-



նակություն նրա հետ: Ձեռք կբերե՛նք արդյոք մեր ուզածը—ցույց կտա ապագան: Առայժմ մեզ համար անկասկած է, վոր այսպիսի պահանջի հողի վրա մենք կպատռենք նավթարդ-ների դիմակը և բանվորների ամբողջ մասսային ցույց կտանք նավթային բուրժուազիայի փարիսեցիությունը, բուրժուազիայի, վորն առաջ, մինչև հակահեղափոխության հաղթանակը, քծնում եր բանվորների առաջ, «տալով» նրանց ձայների հավասար քանակություն, որինակ, խորհրդակցության մեջ, իսկ այժմ, հակահեղափոխության հաղթանակից հետո, նա բանվորներին նույնիսկ վորպես հյուրեր չի թողնում իր համագումարը:

Բայց գլխավորը, վոր մենք պետք է առանձնապես չեշտենք, այդ՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ու գաղտնի քվեարկության հիման վրա կառուցված լիովին դեմոկրատական ինքնավարության անհրաժեշտությունն է: Առանց այսպիսի քվեարկության չկա դեմոկրատական ինքնավարություն, առանց այսպիսի ինքնավարության չկա դասակարգերի պայքարի ազատ արտահայտումը նրանում: Բայց այս ամենի համար իր հերթին անհրաժեշտ է դեմոկրատական հանրապետություն:

Այսպես ուրեմն, ցարական իշխանության տապալում և դեմոկրատական հանրապետության հաստատում՝ այս է խնդիրը:

Այս գլխավոր խնդիրն իրականացնելով միայն, մենք կկարողանանք կրճատել բուրժուազիայի ախորժակները, հարթելով դեպի սոցիալիզմ տանող ուղին: Ահա թե ինչու մենք ասում ենք.

Կորչի՛ ցարական ինքնակալությունը:
Կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը:
Կեցցե՛ դեմոկրատակ. ինքնավարությունը:

ՌՍԴԲԿ Բագվի Կոմիտե

25 դեկտ. 1909 թ. Բագվի Կոմիտեյի տպար.

Լ. Բերիա, «*К вопросу об истории большевистских организаций в Закавказье*», եջ 104—105:

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

# ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

*(1909 թ.)*

Արդյունաբերության զարգացման իմաստով վերցրած՝ Թիֆլիսը ներկայացնում է Բագվի ուղղակի հակադրությունը: Յեթե

Բաքուն հետաքրքրական է վորպես նավթային արդյունաբերության կենտրոն, ապա Թիֆլիսը կարող է հետաքրքրական լինել վորպես Կովկասի լոկ վարչական-առևտրական ու «կուլտուրական» կենտրոն։ Թիֆլիսում բոլոր արդյունաբերական բանվորները մոտ 20 հազար են, այսինքն՝ ավելի քիչ, քան զինվորներն ու վոստիկանները։ Միակ խոշոր ձեռնարկությունը յերկաթուղիների արհեստանոցներն են (մոտ 3500 բանվ.)։ Մնացած ձեռնարկություններում 200-ական, 100-ական և, մեծ մասամբ, 40—20-ական մարդ։ Դրա փոխարեն Թիֆլիսը տառացիորեն լցնում են առևտրական հաստատություններն ու նրանց հետ կապված «առևտրական պրոլետարիատը»։ Թույլ կախվածությունը Ռուսաստանի խոշոր, մշտապես կենդանի ու տենդային, շուկաներից Թիֆլիսի վրա դնում է կանգառման կնիքը։ Իսկ դասակարգային խիստ ընդհարումների բացակայությունը, վորոնք հատուկ են միայն խոշոր արդյունաբերական կենտրոններին, այն փոխարկում է ճահճի նման մի բանի, վորը զարկի յե սպասում դրսից։ Հենց սրանով էլ բացատրվում է, վոր մենշևիզմը, իսկական «աջ» մենշևիզմը, այդքան յերկար դիմացավ Թիֆլիսում։ Բոլորովին այլ կերպ է Բաքվում, վորտեղ բոլշևիկների սուր դասակարգային դիրքը կենդանի արձագանք է գտնում բանվորների մեջ։ Այն, ինչ Բաքվում «ինքնըստինքյան պարզ է», Թիֆլիսում պարզ է դառնում միայն յերկարատև դիսկուսիաների հետևանքով,—բոլշևիկների անհաշտ ճառերը մեծ դժվարությամբ են մարսվում։ Հենց սրանով էլ բացատրվում է Թիֆլիսի բոլշևիկների «առանձին հակումը» դեպի դիսկուսիաները և ընդհակառակը, մենշևիկների ցանկությունը՝ ըստ հնարավորության «ազատվելու» դիսկուսիաներից։ Բայց ասածիցս բխում է միայն այն, վոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատների աշխատանքը Թիֆլիսի պրոլետարիատի սոցիալիստական լուսավորության նկատմամբ շատ հաճախ ու անխուսափելիորեն կարտահայտվի մենշևիզմի դեմ մղվող գաղափարական պայքարի ձևով։ Այդ պատճառով առանձին հետաքրքրություն է ձեռք բերում այն գաղափարական մթնոլորտի թեկուզ թռուցիկ վերլուծությունը, վորի դեմ ամենից առաջ հարկ է լինում պայքարելու և վորն ստեղծում են Թիֆլիսի մենշևիկները, վորոնք դեռ գերակշռում են Թիֆլիսում։ Այս մթնոլորտը կարող է վորակվել վորպես լիկվիդատորական, լիկվիդատորական վոչ միայն կազմակերպական իմաստով, այլև տակտիկական, այլև ծրագրային իմաստով։ Այս մթնոլորտի բնութագրումից էլ կըսկսենք Թիֆլիսի կուսակցական գործերի դրության մեր թռուցիկ ուրվագիծը։

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ԼԻԿՎԻԴԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ

Այն օրգանը, վորի մեջ իրեն արտացոլումն է գտնում մենշևիկների «հասարակական կարծիքը», վրացական մենշևիկյան մամուլն է։ Թիֆլիսի մենշևիկների կրեդոն արտահայտված է «Հրատապ հարցեր» հոդվածներում (տե՛ս «Ազրի»-ի և «Դասածղիսի»-ի №№-ները)։ Այս հոդվածների հեղինակը հանդիսանում է ամենաազդեցիկը Թիֆլիսի մենշևիկներից՝ ընկ. Ա.Ե.-ը։ Անցնենք այս հոդվածների շարադրմանը, հոդվածներ, վորոնք գաղափարապես նախապատրաստեցին լիկվիդատորությունը Թիֆլիսում։

Հիշատակված հոդվածներում հեղինակը նախաձեռնում է «վերադնահատելու բոլոր արժեքները» և գալիս է այն յեզրակացության, վոր կուսակցությունը (առանձնապես բոլշևիկները), ինչ վերաբերում է նրա միքանի ծրագրային, իսկ առանձնապես տակտիկական դրույթներին, մոլորվում եր։ Հեղինակի կարծիքով, անհրաժեշտ է «արմատապես փոխել կուսակցական ամբողջ տակտիկան», վորպեսզի հնարավոր դառնա «բուրժուազիայի և պրոլետարիատի ուժերի միավորումը»—հեղափոխության հաղթության միակ գրավականը։ Սակայն, թող ինքը հեղինակը խոսի։

«Բոլշևիկներն ապացուցում եյին,—ասում է հեղինակը,—վոր նա (պրոլետարիատը) պետք է իրականացնի (բուրժուական հեղափոխության մեջ) իր ծրագրի ամբողջ մինիմումը։ Բայց չե՞ վոր այս մինիմումի սոցիալական մասի իրականացումը կտաներ դեպի այն, վոր կկաշկանդեր բուրժուազիայի արտադրությունը, առաջ կբերեր ամբողջ բուրժուազիայի բողոքը, սկիզբ դնելով հսկայական հակահեղափոխության... Ո՞վ կհամարձակվի պնդել, վոր ութժամյա աշխատանքային օրվա իրականացումը համապատասխանում է ժամանակակից անզարգացած բուրժուազիայի շահերին»։ Պարզ է, վոր «բոլշևիկների ծրագիր-մինիմումի իրականացումը մի հասարակ դեկլամացիա յե» (տե՛ս «Ազրի» № 17, փետրվար 1908 թ.)։

Իհարկե, ամբողջ ծրագիր-մինիմումի իրականացման մասին խոսում եյին վոչ միայն բոլշևիկները, և վոչ մի բոլշևիկյան ծրագիր-մինիմում պատմությունը չգիտե, բացի համակուսակցականից,—բայց տվյալ դեպքում այս չե հետաքրքրականը։ Կարևորն այն է, վոր «բուրժուազիայի անզարգացածության» և

այստեղից բխող հակահեղափոխական վտանգի պատճառով մեր հեղինակը զինվում է ծրագրի «սոցիալական մասի» դեմ, որպես «հասարակ դեկլամացիայի», որը, ակներևորեն, յենթակա յե լիկվիդացիայի:

Արդյունաբերության խոշոր դրության ոչ մի վերլուծություն (ընկ. Ա.Շ.–Շ, ինչպես յերևում է, սխալ է արտահայտվում, արդյունաբերության հետամնացությունն անվանելով «բուրժուազիայի անզարգացածություն»: Կ. Ստ.), ոչ մի թիվ, ոչ մի քիչ թե շատ լուրջ տվյալ չենք գտնի ընկ. Ա.Շ.–ի մոտ: Նա պարզապես յելնում է լոկ մերկ դրույթից այն մասին, թե բուրժուազիան չի հանդուրժի 8-ժամյա աշխատանքային օրվա իրականացումը, այնինչ առանց «պրոլետարիատի ու բուրժուազիայի ուժերի միավորման» հեղափոխության հաղթությունն անհնարին է,—հետևաբար, կորչի ծրագրի «սոցիալական մասը»...

Մենք չենք սկսի ապացուցել հեղինակի պնդումների անհեթեթությունը, պնդումների, որոնք շարունակ առաջ են քաշվում սոցիալ-դեմոկրատների դեմ մեր ժամանակի լիբերալների կողմից: Մեր կարծիքով՝ բոլորովին բավական է դրանք մեջ բերել, որպեսզի միանգամից ըմբռնենք Թիֆլիսի մենշևիկների կերպարանքը...

Բայց մեր հեղինակը զինվում է ոչ միայն ծրագրի «սոցիալական մասի» դեմ: Նա նույնպես չի գուրգուրում նրա քաղաքական մասն էլ, թեպետ ոչ այնպես ուղղակի ու բացահայտ կերպով: Լսենք նրան.

«Լոկ միայն պրոլետարիատի կամ լոկ միայն բուրժուազիայի պայքարը ոչ մի դեպքում չի կոտրում ռեակցիային... Պարզ է, նրանց ուժերի միավորումը, նրանց այս կամ այն համակցությունը և նրանց ուղղումը դեպի մեկ ընդհանուր նպատակ կազմում է ռեակցիայի վրա տանելիք հաղթության միակ ուղին»... (ընդգծումը մերն է): «Ռեակցիայի պարտությունը, սահմանադրության նվաճումն ու վերջինի կենսագործումը կախված է բուրժուազիայի ու պրոլետարիատի ուժերի գիտակցական միավորումից և նրանց ուղղումից դեպի ընդհանուր նպատակը»... Ընդամենը «պրոլետարիատը պետք է ընթանա այնպես, որ իր անհաշտելիությամբ ընդհանուր շարժումը չթուլացնի»: Բայց որովհետև «բուրժուազիայի մերձավորագույն պահանջը կարող է լինել լոկ չափավոր սահմանադրությունը», ապա, ակներևորեն, պրոլետարիատի պարտականությունն է դեն գցել իր «ռադիկալ սահմանադրությունը», յեթե նա չի կամենում «իր անհաշտելիությամբ ընդհանուր շարժումը թուլացնել» և քայքայել «բուրժուազիայի ու պրոլետարիատի ուժերի գիտակցական ուղղումը դեպի մեկ ընդհանուր նպատակ», մի խոսքով, յեթե նա չի կամենում նախապատրաստել հակահեղափոխության հաղթությունը (տե՛ս «Դասածղիսի» № 4, 1908 թ.):



Ցեղրակացությունը պարզ է. կորչի՛ դեմոկրատական հանրապետությունը, կեցցե «ընդհանուր շարժումն» ու... «չափավոր սահմանադրությունը», իհարկե, «հօգուտ» հեղափոխության «հաղթության»...

Մեր առաջն է, ինչպես տեսնում եք, «դասակարգերի միավորման» մասին, պրոլետարիատի դասակարգային խնդիրների ժամանակավոր մոռացման մասին, դեմոկրատական հանրապետության վերացման և այլնի մասին 1906 թ. «Товарищ»-ում դեռ տպված նախկին ս.-դ. Վասիլյեվի հայտնի հոդվածի վատ վերապատմումը: Տարբերությունն այն է, որ Վասիլյեվն ասում էր ուղղակի, պարզ, իսկ ընկ. Ա.Շ.–Շ ամաչում է բավականաչափ պարզորոշ ասել:

Մենք ներկայումս ոչ ժամանակ, ոչ էլ ցանկություն ունենք այս ամբողջ լիբերալ թոթովանքը քննելու, որն իր հիմքում վաղուց արդեն քննարկված ու գնահատված է ռուսական սոցիալ-դեմոկրատական մամուլում: Մենք կկամենայինք միայն իրերն անվանել իրենց սեփական անուններով. մեր հեղինակի ծրագրային մարգանքները, որոնք Թիֆլիսի մենշևիկների կողմից ընդունվել են «նոր» ֆրակցիոն մանիֆեստի տեղ, կուսակցության ծրագիր-մինիմումի լիկվիդացիա յեն, մի լիկվիդացիա, որը պահանջում է մեր ծրագրի հարմարեցումը կադետների ծրագրին:

Թիֆլիսի մենշևիկների «նոր» ծրագրից անցնենք «նոր տակտիկային»:

## ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԼԻԿՎԻԴԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ

Ընկ. Ա.Շ.–ն առանձնապես դժգոհ է կուսակցության տակտիկայից, որը, նրա կարծիքով, անհրաժեշտ է «արմատապես փոխել» (տե՛ս «Դասածղիսի» № 4): Այդ պատճառով իր հոդվածների մեծ մասը նա նվիրում է այս տակտիկայի քննադատությանը: Նա առանձնապես հարձակվում է «Պլեխանովի» հայտնի «ֆորմուլայի» վրա («Հեղափոխությունը Ռուսաստանում կհաղթի որպես բանվորական շարժում, կամ ամենևին չի հաղթի»), այն նույնացնելով պրոլետարիատի հեգեմոնիայի մասին յեղած դրույթի հետ, և վճռում է, որ այն քննադատության չի դիմանում: Այս «ֆորմուլան» նա առաջարկում է փոխարինել «նոր» (հի՛ն) դրույթով «բուրժուազիայի ու պրոլետարիատի ուժերի միավորման» մասին հօգուտ «ընդհանուր շարժման»... «դեպի մեկ ընդհանուր նպատակ»: Լսեցե՛ք.

«Բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատի ղեկավար դերի մասին յեղած դրույթը չի արդարանում վոչ Մարքսի թեորիայով, վոչ ել պատմական փաստերով»:

Թեորիայի վկայակոչումը.

«Պրոլետարիատը չի կարող իր իսկ սեփական ձեռքերով կառուցել իր սեփական թշնամիների կարգերը: Հետևաբար, բուրժուական հեղափոխության ղեկավարությունը պրոլետարիատի կողմից անհնարին բան է»:

Պատմական փաստերի վկայակոչումը.

«Մեր հեղափոխությունը միևնույն ժամանակ մեր բանվորական շարժումն եր. չնայելով սրան, հեղափոխությունը չհաղթեց: Պարզ է, վոր Պլեխանովի բանաձևը չարդարացավ» (տե՛ս «Ազրի» № 17):

Կարճ և պարզ: Միայն ստիպված ես լինում ցավել գերմանական սոցիալ-դեմոկրատիայի վրա, վորը դեռ Լոնդոնի համագումարին ուղղած իր վողջույնի նամակում ընդունել եր (թերևս, թեթևամտաբա՛ր), վոր պրոլետարիատի ղեկավար դերը մեր հեղափոխության մեջ լիովին արդարանում է ինչպես «Մարքսի թեորիայով», այնպես ել «պատմական փաստերով»:
Մենք արդեն չենք խոսում մեր դժբա՛խտ կուսակցության մասին...

Հապա ինչո՞վ է փոխարինում մեր հեղինակը պրոլետարիատի ղեկավար դերը, ի՞նչ է նա առաջարկում վերջինի փոխարեն:

«Լոկ միայն պրոլետարիատի պայքարը,—ասում է ընկ. Ա.Ե.—ը,—կամ լոկ միայն բուրժուազիայի պայքարը վոչ մի դեպքում չի կարող ռեակցիային... Պարզ է, վոր նրանց ուժերի միավորումը, նրանց այս կամ այն համակցությունը և նրանց ուղղումը դեպի մեկ ընդհանուր նպատակ կազմում են ռեակցիայի վրա տանելիք հաղթության միակ ուղին»: Ընդամենը «պրոլետարիատը պետք է ընթանա այնպես, վոր իր անհաշտելիությամբ չթուլացնի ընդհանուր շարժումը»... (Տե՛ս «Դասածղիսի» № 4): Վորովհետև, հավատացնում է հեղինակը, «ինչքան ավելի թույլ է դասակարգային պայքարը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, այնքան ավելի հաղթական է (ընդգծումն ամենուրեք մերն է: Կ. Ստ.) բուրժուական հեղափոխությունը, իհարկե, ուրիշ հավասար պայմանների դեպքում» (տե՛ս «Ազրի» № 15):

Թե ինչ «ուրիշ հավասար պայմանների» մասին է խոսում հեղինակը—Ալլահը գիտե: Պարզ է միայն մի բան, վոր նա քարոզում է դասակարգային պայքարի թուլացումը հոգուտ... հեղափոխության: Մեր ամբողջ հեղափոխության փորձով հաստատված դրույթն այն մասին, թե այս հեղափոխության հաղթությունն այնքան ավելի լիակատար կլինի, վորքան հեղափոխությունն ավելի հենվի պրոլետարիատի դասակարգային պայ-



քարի վրա, պրոլետարիատի, վորն իր հետևից տանում է գյուղական չքավորությանը ընդդեմ կալվածատերերի ու լիբերալ բուրժուաների,—այս դրույթը մեր հեղինակի համար մնացել է յոթը կնիքով կնքված գաղտնիք: «Պրոլետարիատի ուժերի միավորումը բուրժուազիայի ուժերի հետ»—ահա թե ինչումն է գտնում ընկ. Ա.Ե—ը հեղափոխության հաղթանակի միակ գրավականը:

Բայց այս ի՞նչ բուրժուազիա յե, վորի վրա այնքան շատ հույսեր է դնում մեր հեղինակը: Լսեցե՛ք.

«Ռեակցիոներները,—ասում է մեր հեղինակը,—առանձնապես ուժեղ են պայքարում կադետների կուսակցության դեմ... վորովհետև... Ռուսաստանի ապագա տերերը կդառնեն հենց այն միջին դասակարգից, վորի իդեոլոգներն են արտահայտում կադետները: Իսկ պետական իշխանությունը ռեակցիոներներից ընդունակ է միայն տիրապետելու համար հասունացած միջին բուրժուազիան, այս դասակարգը նրանց անմիջական մրցակիցն է և դրա համար ել ռեակցիոներները նրանից ամենից ավելի յեն վախենում»: Առհասարակ «բոլոր հեղափոխությունների մեջ ռեակցիոն դասն այնքան չեր վախենում հեղափոխականներից, վորքան չափավոր բուրժուազիայից: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր միայն այս դասակարգն է հանդիսանում կառավարման ձևերի ընդունիչը հին ռեժիմի ձեռքից, ինչպես մենք այս ասում եյինք վերը: Հետևաբար, հենց այս դասակարգը շնորհիվ իր չափավոր սահմանադրության կոչված է նոր հասարակակարգը ընդունելի դարձնելու վիթխարի մեծամասնության համար և այսպիսով վոչնչացնելու ռեակցիայի վոտքի տակի հողը» (տե՛ս «Ազրի» № 24): Բայց վորովհետև «բուրժուազիան առանց պրոլետարիատի չի կարողանա կազմակերպել նոր կարգերը», ապա ուրեմն «պրոլետարիատը ստիպված կլինի պաշտպանելու բուրժուական ոպոզիցիան» (տե՛ս «Դասածղիսի» № 4):

Այսպես, ուրեմն, «չափավոր» կադետական սահմանադրություն իր «չափավոր» միապետական սահմանադրությամբ—ահա թե ով է, բանից դուրս է գալիս, փրկելու մեր հեղափոխությունը:

Իսկ գյուղացիությու՞նը, վո՞րն է նրա դերը հեղափոխության մեջ:

«Իհարկե,—ասում է մեր հեղինակը,—գյուղացիությունը խառնվում է շարժման մեջ և նրան կտա տարերային բնույթ, բայց վճռական դերը կխաղան միայն ժամանակակից յերկու դասակարգերը»—չափավոր բուրժուազիան ու պրոլետարիատը (տե՛ս «Դասածղիսի» № 4):

Այսպես ուրեմն, բանից դուրս է գալիս, գյուղացիության վրա չպետք է առանձնապես հույս դնել:

Այժմ ամեն ինչ պարզ է։ Հեղափոխության հաղթանակի համար հարկավոր է չափավոր կադետական բուրժուազիա չափավոր սահմանադրությամբ։ Բայց նա միայնակ ընդունակ չէ հաղթելու, նրան հարկավոր է պրոլետարիատի օգնությունը։ Պրոլետարիատը պետք է նրան օգնի, վորովհետև վոչ վոք չկա, վորի վրա նա հույս դնի, ընդհուպ մինչև գյուղացիությունը, բացի չափավոր բուրժուազիայից։ Բայց սրա համար նա պետք է դեն գցի իր անհաշտելիությունը և, ձեռք մեկնելով չափավոր բուրժուազիային, ընդհանուր պայքար մղի չափավոր կադետական սահմանադրության համար։ Մնացածն ինքն իրեն կհարմարվի։ Այն կուսակցությունը, վորը հեղափոխության հաղթանակի գրավականը տեսնում է բանվորների ու գյուղացիների չափավոր բուրժուազիայի ու ճորտատերերի դեմ ուղղված պայքարի մեջ, մոլորվում է։

Մի խոսքով, պրոլետարիատի ղեկավար դերի փոխարեն, վորն (պրոլետարիատն) իր հետևից է տանում գյուղացիներին,— կադետական բուրժուազիայի ղեկավար դեր, վորը (բուրժուազիան) քթից բռնած ման է ածում պրոլետարիատին։

Այս է Թիֆլիսի մենշևիկների «նոր» տակտիկան։

Քննել այս ամբողջ գռեհիկ-լիբերալ հնոտին, մեր կարծիքով, անհրաժեշտ չէ։ Անհրաժեշտ է միայն նշել, վոր Թիֆլիսի մենշևիկների «նոր» տակտիկան հանդիսանում է հեղափոխության կողմից հաստատված կուսակցական տակտիկայի լիկվիդացիա, մի լիկվիդացիա, վորը պահանջում է պրոլետարիատի փոխարկումը չափավոր կադետական բուրժուազիայի պոչիկի։

Կ. ՍՏ.

«Большевик» № 4, 1932 р.
Ժող. «Ленин и Сталин», հ. I. էջ 525—529։

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

## ՆԱՄԱԿ ԼԵՆԻՆԻՆ ՍՈԼՎԻՉԵԳՈԴՍԿԻ ԱՔՍՈՐԱՎԱՅՐԻՑ

*(1910 թ.)*

31 դեկտեմբերի 1910 թ. (հին տոմարով)

Ընկ. Սեմյո՛ն։ Ցերեկ յես ստացա ընկերներից ձեր նամակը։ Ամենից առաջ ջերմագին վողջույն Լենինին, Կամենե-



վլին և ուր.։ Իսկ այժմ ձեր նամակի առթիվ և առհասարակ «անիծյալ հարցերի» մասին։

Իմ կարծիքով՝ բլոկի գիծը (Լենին—Պլեխանով) միակ նորմալն է. 1) այն, և միմիայն այն է համապատասխանում Ռուսաստանում տարվող աշխատանքի իսկական շահերին, վորոնք պահանջում են բոլոր իրոք կուսակցական տարրերի համախմբվածությունը. 2) այն, և միմիայն այն է արագացնում լեգալ կազմակերպությունները լիկվիդատորների ճնշման տակից ազատագրելու պրոցեսը, վիհ փորելով բանվոր մեկերի[1] ու լիկվիդատորների միջև, ցրելով ու սպանելով վերջիններին։ Լեգալ կազմակերպություններում ազդեցություն ունենալու համար մղվող պայքարն օրվա չարիքն է, անհրաժեշտ էտապը դեպի կուսակցության վերածնությունը տանող ուղու վրա, իսկ բլոկը միակ միջոցն է այսպիսի կազմակերպությունները լիկվիդատորության աղբից մաքրելու համար։ Բլոկի պլանում յերևում է Լենինի ձեռքը,—նա խելոք մուժիկ է և իր բանը շատ լավ գիտե։ Բայց այս դեռ չի նշանակում, թե ամեն մի բլոկ լավ է։ Տրոցկիական բլոկը (նա կասեր—«սինթեզ»)—այդ մի նեխած անսկզբունքայնություն է, տարատեսակ սկզբունքների մանիլովյան ամալգամա, անսկզբունք մարդու անզոր թախիծը «լավ» սկզբունքի նկատմամբ։ Իրերի տրամաբանությունն իր բնությամբ խստորեն սկզբունքային է և այն չի հանդուրժի ամալգամներ։ Լենին—Պլեխանով բլոկը հենց նրա համար է կենսունակ, վոր այն խորապես սկզբունքային է, հիմնված է կուսակցության վերածնության ուղիների հարցի շուրջը յեղած հայացքների միասնության վրա։ Բայց հենց այն պատճառով, վոր սա բլոկ է և վոչ թե միաձուլում,—հենց այս պատճառով բեկերին[2] հարկավոր է իրենց ֆրակցիան։ Շատ կարող է պատահել, վոր աշխատանքի ընթացքում բեկերը վերջնականապես կընտելացնեն պլեխանովականներին, բայց այս միայն կարող է պատահել։ Քնել և հույսը դնել այսպիսի, թեկուզ և շատ հավանական, յելքի վրա, մեզ, համենայն դեպս, վայել չէ։ Վորքան ավելի համախմբված գործելու լինեն բեկերը, վորքան ավելի կազմակերպված հանդես գան, այնքան ավելի շանսեր կան ընտելացման հնարավորության։ Ուստի և մենք պետք է անդադար կռենք բոլոր զնդանների վրա։ Վպերյոդականների մասին

1 Մեկեր—մենշևիկներ։—Խմբ.։

2 Բեկեր—բոլշևիկներ։—Խմբ.

վոչինչ չեմ ասում, վորովհետև այժմ նրանք ավելի քիչ են հետաքրքրական, քան լիկվիդատորներն ու պլեխանովականները: Յեթե յերևիցե ուշքի յեն գալիս—իհարկե—լավ ե, իսկ յեթե վոչ—աստված նրանց հետ, թող յեփվեն իրենց սեփական հյութի մեջ:

Այսպես եմ մտածում յես արտասահմանի մասին: Բայց այս ամենը չե և վոչ նույնիսկ գլխավորը: Գլխավորն աշխատանքի կազմակերպումն ե Ռուսաստանում: Մեր կուսակցության պատմությունը ցույց ե տալիս, վոր տարաձայնությունների հարցերը լուծվում են վոչ թե վիճաբանություններում, այլ գլխավորապես աշխատանքի ընթացքում, սկզբունքների կիրառման ընթացքում: Այդ պատճառով օրվա խնդիրն ե—ռուսական աշխատանքի կազմակերպումը խստորեն վորոշ սկզբունքի շուրջը: Լիկվիդատորները միանգամից հասկացան բանը (նրանց հոտառությունը շատ ե զարգացած) և սկսեցին սարքվել (արդեն հարմար սարքվել են) բանվորական լեգալ կազմակերպությունների մեջ, ըստվորում, բանից դուրս ե գալիս, ունեն իրենց անլեգալ ռուսական կենտրոնը, վորն ուղղություն ե տալիս և այլն աշխատանքին: Իսկ մենք չարունակ «պատրաստվում ենք», մնում ենք փորձերի ստադիայում: Ըստիս, մեզ համար հերթական խնդիրը, վորը հետաձգում չի հանդուրժում, կենտրոնական (ռուսական) խմբի կազմակերպումն ե, վորը (խումբը) միավորում ե անլեգալ, կիսալեգալ ու լեգալ աշխատանքն առաջին հերթին գլխավոր կենտրոններում (Պիտեր, Մոսկվա, Ուրալ, Հարավ): Անվանեցեք այն, ինչպես կամենում եք—«Կենտկոմի ռուսական մաս» կամ «օժանդակ խումբ Կենտկոմին կից»—այդ միևնույնն ե: Բայց այսպիսի խումբ հարկավոր ե, ինչպես օդը, ինչպես հացը: Այժմ տեղերում աշխատողների մեջ թագավորում ե անհայտությունը, միայնակությունը, կտրվածությունը, բոլորի ձեռքերը թուլանում են: Իսկ այս խումբը կկարողանար աշխատանքը կենդանացնել, կապակցություն և պարզորոշություն մտցնել: Իսկ այս՝ ուղի կհարթեր լեգալ հնարավորությունների իսկական օգտագործման համար: Այստեղից ել, ըստիս, առաջ կընթանա կուսակցականության վերածնության գործը: Վատ չեր լինի կանխապես կազմակերպել այն աշխատողների խորհրդակցությունը, վորոնք ընդունում են պլենումի վորոշումները, իհարկե, Կենտկոմի ղեկավարությամբ: Այս ամենը՝ կենտրոնական հիմնարկների «ռեֆորմից» հետո և պլեխանովականների կողմից համաձայնություն ստանալու պայմանով: Շատ կարող ե պատահել, վոր հենց այս խորհրդակցությունն ել կտա հարմար մարդիկ վերև հիշատակված կենտրոնական խմբի համար: Ըստիս, այսպիսի խորհրդակցության օգուտը պարզ ե ուրիշ շատ տեսակետներից ել: Իսկ գործել հարկ կլինի անշեղորեն ու անխնայորեն, չվախենալով լիկվիդատորների, տրոցկիստների, վպերյոդականների կողմից բարդվելիք մեղադրանքներից· յեթե պլեխանովականներն ու լենինյանները համախմբվեն Ռուսաստանում կատարելիք աշխատանքի հողի վրա, նրանք կարող են ուշադրություն չդարձնել վորևե մեղադրանքի վրա: Այսպես եմ կարծում յես Ռուսաստանում կատարելիք աշխատանքի մասին:

Այժմ իմ մասին: Ինձ մնում ե վեց ամիս: Ժամանակը լրանալուց հետո յես ամբողջովին պատրաստ եմ ծառայելու: Յեթե աշխատողների կարիքն իրոք սուր ե, յես կարող եմ անմիջապես ծլկվել: «Мысль» № 1-ը կարդացի: Յերևակայում եմ, թե վորքան պարզություն ու արիություն կմտցնի բանվորների մեջ յերեկվա հակառակորդների համատեղ յելույթի նույնիսկ միայն մեկ փաստը, վորքան շփոթություն ու քաոս կսերմանի լիկվիդատորների շարքերում: Յեվ ամեն մի կարգին մարդ կասի, վոր այս վատ չի լինի:

Աքսորավայրում կա բավականաչափ հասարակություն և շատ լավ կլիներ նրան պարբերական անլեգալ հրատարակություններ մատակարարել: Ուղարկեցեք «Социал-Демократ» № 17-ը և հետագա համարները, ինչպես նաև «Социал-Демократ»-ի «Հավելվածը»: Մենք չունենք «Рабочая Газета»-յի վոչ № 1-ը, վոչ ել № 2-ը, չունենք նաև «Голос Социал-Демократа»: «Звезда»-ն, թերևս, ստանանք: Հասցեներ ծանրոցների համար· 1) Սոլվիչեգոդսկ, Վոլոգդայի նահ·, Իվան Իսաակովիչ Բոգոմոլովին· 2) Սոլվիչեգոդսկ, Վոլ· նահ·, Պյոտր Միխայլովիչ Սերաֆիմովին: Հասցե՝ ինձ հետ գրագրություն ունենալու համար· Սոլվիչեգոդսկ, Վոլոգդայի նահ·, Գրիգորովի տուն, Նիկոլայ Ալեքսանդրովիչ Վոզնեսենսկի:

Ընկերական բարևով՝ Կ· Ս·

Պատվիրված ձևով պետք չե ուղարկել: Գրեցեք ձեր գործերի մասին, շատ եմ խնդրում:

*«Большевик»* № 1—2, 1932 թ.

Ժող. *«Ленин и Сталин»*, հ. I, եջ 529—531:

## ՌՍԴԲԿ ԹԻՖԼԻՍԻ Կ-ԵՅԻ ԹՌՈՒՑԻԿԸ

«Ընկե՛ր բանվորներ:

Քաղաքական այն ռեակցիան, վորը վրա հասավ 1905 թ. ժողովրդական Մեծ հեղափոխության պարտությունից հետո, սարսափելի ճնշումով ծանրացել ե յերկրի վրա: Լիբերալ բուրժուազիան, վախեցած բանվոր դասակարգի ինքնուրույնությունից իշխանության համար մղած պայքարում, մատնություն ցուցաբերեց ժողովրդական ազատության գործի նկատմամբ և դավաճանորեն ձեռք մեկնեց ցարական ինքնակալությանը, վորպեսզի ժողովրդի թիկունքում քաղաքական իշխանությունը բաժանի նրա հետ:

Կալվածատերերի ցարն իր ծառա-մինիստրների հետ, հենվելով ժողովրդական մասսաների ստրկացման ու անչափելի շահագործման հին, փորձված միջոցների՝ լրտեսների, բանտերի, աքսորի և կախաղանների վրա, չլսված ցինիզմով ու լկտիությամբ սկսել ե իր գոյությունը պաշտպանել: Գործարանատերերն ու ֆաբրիկանտները, ոգտվելով ռեակցիայի հաղթանակից, սկսել են խլել բանվորներին արած իրենց այն զիջումները, վորոնք վերելքի որերին կորզվել եյին նրանցից, և լոկաուտներով, սև ցուցակներով, աշխատավարձի ու գնահատումների իջեցումով, բանվորական որվա յերկարացումով համերաշխորեն նեղն են գցել բանվորական մասսային:

Թե՛ ցարը, թե՛ կալվածատերը և թե՛ ռուսաստանյան վաճառականը, պարզորոշ գիտակցելով, վոր իրենց գլխավոր թըշնամին—այդ բանվոր դասակարգն ե, հասկացել են, վոր ռուսաստանյան պրոլետարիատի պատմական դերը—ցարական ինքնակալության տապալումն ե ու դեմոկրատական հանրապետության, բանվորական գործի վերջնական հաղթանակի այս նախադրան, ազատ ու բերկրալի աշխատանքի պայծառ թագավորության—սոցիալիզմի—նախադրան, հաստատումը: Յեվ դրա համար ամենից առաջ և ամենից շատ հաղթանակող ռեակցիայի ամբողջ վրեժը, բոլոր հալածանքները, բոլոր սարսափները թափվեցին բանվոր դասակարգի վրա և նրա դասակարգային «Ռուսաստանյան Սոցիալ-Դեմոկրատիա» կուսակցության վրա:

Յեվ այս ռեակցիան, հակահեղափոխության այս հաղթանակը շատերին հեռացրել ե հեղափոխության գործից, շատերը և շատ շատերն այս տարիներին սկսեցին հրաժարվել առաջվա լոզունգներից, առաջվա հավատալիքներից ու համոզմունքներից: «Մաղաթափվելու» այս պրոցեսն առանձնապես խիստ կերպով արտահայտվեց ինտելիգենտ խմբերի մեջ:



Բայց բանվոր դասակարգը հավատարիմ մնաց իր հեղափոխական պարտականությանը, թեպետ նա բոլորից ավելի ստիպված յեղավ զոհաբերել պայքարի որերին և մյուսներից ավելի ստիպված ե տառապանքներ կրել սև ռեակցիայի հաղթության որերին: Յեվ վոչ մի ռեակցիա, վոչ մի հալածանք չի կարող սարսափեցնել, չի կարող «խաղաղացում» մտցնել նրա շարքերի մեջ, վորովհետև արդի հասարակության մեջ գրաված իր դիրքով այս դասակարգը չի կարող հեղափոխական չլինել և անխուսափելիորեն պետք ե պայքարի, վորովհետև այս պայքարում նա «կկորցնի միմիայն իր շղթաները, բայց փոխարենը ձեռք կբերի ամբողջ աշխարհը»:

Ժամանակավոր անտարբերությունը, հոգնածությունն ու հանդարտությունը հետևանք եյին ռուսաստանյան պրոլետարիատի առաջվա հերոսական ջանքերի և այն տնտեսական ճգնաժամի, վորն ապրում եր մեր յերկիրը: Իսկ ներկայումս արդյունաբերության համար ծանր ժամանակաշրջանն անցնում ե, նկատվում ե աշխուժացում տնտեսական կյանքում, բանվորներն սկսել են ուղղվել, նրանք ձգտում են դեպի քաղաքական կյանք, դեպի հեղափոխական գործողություն: «Պետք ե պայքարել»—դառնում ե որվա լոզունգը, պայքարի անհրաժեշտությունն ու նրա անխուսափելիությունը բանվոր դասակարգի բոլոր գիտակից և առաջավոր տարրերը գիտակցում են: Յեվ գիտակից բանվորների առաջ այժմ հարց ե դրված պրոլետարական պայքարի ձևերի և մերձավորագույն խնդիրների ու նպատակների մասին, վորովհետև բանվորները յերբեք հանդես չեն գալիս, գործնական քայլեր չեն անում, վաղորոք չքննարկելով դրությունը, չվորոշելով իրենց վարքագիծը, իրենց տակտիկան:

Առաջավոր յերկրների բանվոր դասակարգերն ունեն իրենց բանվորական դասակարգային քաղաքական կազմակերպությունը—սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, վորը դասակարգային քաղաքականություն ե վարում: Յեվ մեզ համար, ռուսաստանյան բանվորներիս համար, ապրած հեղափոխությունից

հետո ե՛լ ավելի ակներև է դարձել դասակարգային քաղաքական կազմակերպության անհրաժեշտությունը: Մեզ, ռուսաստանյան բանվորներիս, սպասում է ցարիզմի դերեզմանափորների պատմական մեծ դերը: Բիչ առաջ յեղած հեղափոխական փորձը մեզ սովորեցնում է, վոր մենք բուրժուազիայի հետ վոչ մի գործարքի մեջ չպետք է մտնենք, չպետք է մեր պրոլետարական արյունը թափենք ինչ-վոր «սահմանադրական ապահովությունների» համար, հենց սկզբից պետք է բարձրացնենք դեմոկրատական հանրապետության դրոշակը: Պետք է պայքարենք մինչև ցարական իշխանության լիակատար վոչնչացումը, վորպեսզի ազատ ճանապարհ ունենանք դեպի մեր վերջնական նպատակը—դեպի սոցիալիզմ: Իսկ վորպեսզի գալիք պայքարում ուժ ու ազդեցություն ունենանք ժողովրդական մասսաների վրա, վորպեսզի ղեկավարենք նրանց, մենք պետք է ունենանք մեր սերտորեն համախմբված, ամուր և հաստատուն պրոլետարական կազմակերպությունը: Սակայն, պարզ է, վոր այժմյան քաղաքական պայմաններում մենք, բանվորներս, հնարավորություն չունենք բացահայտ լեգալ կուսակցության մեջ կազմակերպվելու, և մեզ անհրաժեշտ է անլեգալ, որենքով արգելված, ընդհատակյա աշխատանք: Ուստի և վոչ մի արգելք չպետք է կանգնեցնի մեզ մեր անլեգալ բանվորական կուսակցությունը վերաստեղծելու սուրբ գործում: Դրա հետ միասին մեր ազդեցությունն ընդլայնելու և ամրապնդելու համար մենք պետք է հանուն մեր հեղափոխական նպատակների ոգտագործենք նաև բոլոր լեգալ հնարավորությունները,—բանվորական կազմակերպության բացահայտ ձևերը: Ռուսաստանում գիտակից բանվորներն ամեն տեղ, ամենուրեք անդուլ կերպով դժվար ու ծանր աշխատանք են տանում ՌՍԴԲԿ վերաստեղծելու և ամրապնդելու ուղղությամբ: Եվ մենք կոչ ենք անում տեղական ընկեր բանվորներին ամբողջ Ռուսաստանի գիտակից բանվորների հետ միասին այս համերաշխ համատեղ աշխատանքը կատարելու: Դժբախտաբար, մեր հարազատ սոցիալ-դեմոկրատական կուսակցության ամրապնդման մեր կենսական գործում առաջավոր բանվորներին, բացի քաղաքական արգելքներից, պրովոկատորներից ու այլ սինլքորներից վիճակվում է դեմ առնել մի նոր խոչընդոտի մեր իսկ շարքերում, այն է՝ բուրժուական հոգեբանություն ունեցող մարդկանց, մարդկանց, վորոնք մեր պրոլետարական միջավայրում բուրժուական ազդեցության հաղորդիչներ



են հանդիսանում բանվոր դասակարգի վրա: Նրանք պայքարում են մեր անլեգալ կուսակցության դեմ, նրանք ուզում են բոլորովին վերացնել այն (լիկվիդացիայի յենթարկել)․ նրանք չեն ուզում ինքնուրույն բանվորական կուսակցություն, նրանք մերժում են մեր ծրագիրը, նրանք ձգտում են ռուսաստանյան բանվոր դասակարգը բուրժուազիայի պոչը դարձնել, նրան թնդանոթային մսի փոխարկել ռուսաստանյան բուրժուազիայի համար:

Այս պարոնները Պոտրեսովի, բանվորական գործի դավաճանի, գլխավորությամբ չեն ընդունում, վոր ռուսական հեղափոխության առաջնորդն — այդ ռուսաստանյան պրոլետարն է, նրանք ուզում են ժողովրդական ազատության գործը նրա պատմական մատնիչի—բուրժուազիայի ձեռքը մատնել: Անլեգալ բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոխարեն այս պարոններն առաջարկում են բացահայտ «ստոլիպինյան» բանվորական կուսակցություն ստեղծել՝ մեր վերջնական նպատակից հրաժարվելու գնով, մեր տնտեսական ու քաղաքական պահանջները պարունակող մեր ծրագրից հրաժարվելու գնով: Այս դավաճաններն առաջարկում են մեր հեղափոխական պայքարը փոխարինել «հունիսի 3-ի» Դումային, սևհարյուրյակային-ոկտյաբրիստական Դումային, աղայական Դումային մատուցելիք միջնորդություններով, պետիցիաներով, «աղերսագրերով», մի կողմը թողնելով մեր ս․-դ․ պատգամավորներին: Բայց գիտակից բանվորներն արհամարհանքով յերես դարձրին այս բուրժուական ինտելիգենտներից, վորոնք փորձում են ներսից պայթեցնել բանվորական կուսակցությունը, և, հետևելով պրոլետարական գիտակցության հրամաններին ու հեղափոխական վոգուն, դարձյալ ձեռնամուխ յեղան անլեգալ կուսակցություն կառուցելուն: Այսպես, ուրեմն, ընկեր բանվորներ, հասել է ժամանակը, յերբ կրկնապատիկ յեռանդով մենք պետք է սկսենք մեր աշխատանքը, նախապատրաստվենք նոր կռիվների համար մեր փառապանծ ու հին Ռուս․ Սոցիալ-դեմ․ Բանվորական կուսակցության կարմիր դրոշակի տակ:

Սև ռեակցիայի մռայլ արյունոտ թուխպերը, վորոնք կախվել եյին յերկրի վրա, սկսում են ցրվել, սկսում են ժողովրդական զայրույթի ու հուզման մրրկաբեր ամպերի փոխվել: Մեր կյանքի սև ֆոնը հատում են կայծակները և հեռվում արդեն կարմրատակում են փայլակները, մոտենում է փոթորիկը, վորը յերկրի յերեսից կսրբի-կտանի բռնության ու ճնշման դարա-

վոր պատվարը—դահիճ-ցարի, ժողովրդի մարդասպանի, ռուսաստանյան ինքնակալ Նիկոլայ-վերջնուկի գահը: Ցարական կառավարությունը, վորը բոլոր մութ ուժերը պայքարի հանեց ժողովրդական հեղափոխության և նրա առաջնորդ, բանվոր դասակարգի դեմ, ինքը գտնվեց նրանց ձեռքերում: Ցարիցինի կիսախելագար Իլիոդոր աբեղան, վորը ժողովրդական մասսաներին կոչ է անում դատաստան տեսնել հարուստների, ինտելիգենտների գլխին, պրովոկատոր ու ոխրաննիկ Բոգրովը, վորի վոտների մոտ թավալվում է ամենազոր ժամիշխան Պ. Ա. Ստոլիպինի դիակը,—ահա այն խաղաղացումը, վորին հասավ հակահեղափոխությունը, հակահեղափոխություն, վորի հերոսը սպանված մինիստրն եր:

Միմիայն նոր հեղափոխությունը դուրս կբերի Ռուսաստանը այս դրությունից հետագա զարգացման ազատ ուղու վրա: Իսկ յերկրի ազատագրումը քաղաքական ու տնտեսական կապանքներից կարող է ձեռք բերվել միմիայն հեղափոխական ժողովրդի կողմից պրոլետարիատի գլխավորությամբ:

Կազմակերպվեցե՛ք, ուրեմն, ընկերնե՛ր, սերտ անլեղալ շարքերով միասնական անլեղալ բանվորական կուսակցության մեջ:

Կորչի՛ լիկվիդատորությունը:
Կեցցե՛ ՌՍԴԲԿ:
Կեցցե՛ նոր ժողովրդական հեղափոխությունը:
Կորչի՛ ինքնակալությունը:
Կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը:
Կեցցե՛ սոցիալիզմը:

ՌՍԴԲԿ ԹԻՖԼ. ԽՄԲԻ ՂԵԿ. ԽՈՒՄԲ»

Լ. Բերիա, «*К вопросу об истории большевистских организаций в Закавказье*» եջ 117—120, 3-րդ հրատ.:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ՏՐՈՑԿՈՒ ԴԻՊԼՈՄԱՏԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՄԱՍԻՆ

Արտասահմանյան այն խմբակների մահացման պրոցեսը, վորոնք իրենց գոյությունը փորձում եյին կառուցել դիպլոմատիական խաղի վրա, վոր արվում եր լիկվիդատորության ու ոտ-



զովիզմի վոչ-սոցիալ-դեմոկրատական հոսանքների հետ, ակնառու կերպով լուսաբանվում է յերկար ընդհատումից հետո նորերս լույս տեսած՝ Տրոցկու «Правда» լրագրի № 22-ով:

Լրագիրը լույս տեսավ նոյեմբերի 29-ին նոր տոմ.—համարյա մի ամիս անց Ռուսաստանի Կազմակերպական Հանձնաժողովի ծանուցման լույս տեսնելուց հետո: Տրոցկին նրա մասին վո՛չ մի խոսք:

Տրոցկու համար Ռ. Կ. Հ. գոյություն չունի: Տրոցկին իրեն կուսակցական է անվանում այն հիման վրա, վոր նրա համար ռուսական կուսակցական կենտրոնը, ստեղծված ռուսական ս.-դ. կազմակերպությունների ճնշող մեծամասնության կողմից, զրո՛ յե: Թե՞, գուցե, ընդհակառակն, ընկերնե՛ր, Տրոցկին իր արտասահմանյան խմբակով զրո յե ռուսական ս.-դ. կազմակերպությունների համար:

Ամենախոշոր թավատառով է տպագրում Տրոցկին իր հավատիացումը,—վո՞նց էլ չի ալարում յերդում ուտել—վոր նրա լրագիրը «վոչ թե ֆրակցիոն, այլ կուսակցական լրագիր է»: Մի քիչ ավելի ուշադիր կերպով նայեցեք № 22-ի բովանդակությանը և դուք միանգամից կտեսնեք վպերյոդականների ու լիկվիդատորների վոչ-կուսակցական ֆրակցիաների հետ արվող խաղի պարզ մեխանիկան:

Ահա թղթակցությունը Պետերբուրգից, վորը ստորագրված է Ս. Վ.-ի կողմից և ռեկլամ է անում «Вперед» խմբի ոգտին: Ս. Վ.-ն կշտամբում է Տրոցկուն, վոր նա չտպագրեց պիտերցիների վաղուց ի վեր նրան ուղարկված բանաձևն ընդդեմ պետիցիոն կամպանիայի: Տրոցկին, մեղադրված լինելով վպերյոդականների կողմից «նեղ ֆրակցիոնականության» մեջ (ի՜նչ սև ապերախտություն), պատեպատ է ընկնում ու պոչ խաղացնում, վկայակոչելով իր լրագրի աղքատությունն ու նրա սակավադեպ լույս տեսնելը: Խաղն ակնհայտնի յե. մենք ձեզ—դուք մեզ. մենք (Տրոցկին) կլռենք կուսակցականների՝ ոտզովիստների դեմ մղած պայքարի մասին և հակառակը. մենք (Տրոցկին) կոգնենք ռեկլամ անելու «Вперед»-ի համար, իսկ դուք (Ս. Վ.-ն) էլ «պետիցիոն կամպանիան» զիջեցեք լիկվիդատորներին: Դիպլոմատիական պաշտպանություն յերկու վոչ-կուսակցական ֆրակցիաների—մի՞թե հենց ա՞յս չէ իսկական կուսակցականությունը:

Ահա մի ֆրազառատ առաջնորդող բարձրաղղորդ «Հառա՛ջ»

անվան տակ: «Գիտակի՛ց բանվորներ,—կարդում ենք մենք այստեղ,—դուք այժմ չունեք ավելի կարևոր» (ա՛յ թե ինչ) «ու համապարփակ» (չփոթվելուց չափը կորցրել է, խե՛ղճ) «լոզունգ, քան միություններ, ժողովների ու գործադուլների ազատությունը»: «Սոցիալ-դեմոկրատիան—կարդում ենք այնուհետև—պրոլետարիատին կոչ է անում պայքարելու հանրապետության համար: Բայց որպեսզի հանրապետության համար մղվող պայքարը չլինի սակավաթիվ ընտրյալների մի մերկապարանոց (!!) լոզունգ, անհրաժեշտ է, որ դուք, գիտակից բանվորներդ, մասսաներին սովորեցնեք փորձով ըմբռնելու կոալիցիաների ազատության անհրաժեշտությունը և պայքարելու դասակարգային այս հարազատ պահանջի համար»:

Հեղափոխական ֆրազը ծառայում է նրա համար, որպեսզի քողարկի ու արդարացնի լիկվիդատորության կեղծիքը, աղտոտելով դրանով բանվորների գիտակցությունը: Ինչո՞ւ հանրապետության լոզունգը մերկապարանոց լոզունգ է ճչերի համար, երբ հանրապետությունը նշանակում է Դուման ցրելու անհնարինություն—կոալիցիաների ու մամուլի ազատությո՞ւնը—գյուղացիների ազատությունը Մարկովների, Ռոմանովների, Պուրիշկևիչների բռնություններից ու թալանի՞ց: Պարզ չէ՞, արդյոք, որ բանը հենց հակառակ կերպով է. «մերկապարանոց» ու անիմաստ է որպես «համապարփակ» լոզունգ «միությունների ազատության» լոզունգն առանց հանրապետության լոզունգի հետ կապակցվելու:

Անիմաստ բան է պահանջել ցարական միապետությունից «միությունների ազատություն», չեթե չբացատրվի մասսաներին այսպիսի ազատության անհամատեղելիությունը ցարիզմի հետ և այսպիսի ազատության համար—հանրապետության անհրաժեշտությունը: Միությունների ազատության վերաբերյալ օրինագծերը Դումա մտցնելը, հարցապնդումներն ու ճառերը նման թեմաների մասին պետք է մեզ, սոցիալ-դեմոկրատներիս, համար ծառայեն հենց որպես առիթ ու նյութ՝ հանրապետության օգտին ագիտացիա մղելու համար:

«Գիտակից բանվորները պետք է մասսաներին սովորեցնեն փորձո՛վ ըմբռնելու կոալիցիաների ազատության անհրաժեշտությունը»: Հին, դեռ «էկոնոմիստների» կողմից ծամծմված, ռուսական օպորտունիզմի հի՛ն երգ: Մասսաների փորձն այն է, երբ մինիստրները փակում են նրանց միությունները, նահանգապետներն ու ուրյադնիկներն ամեն օր բռնություններ են գործում—ահա այս իրոք մասսաների փորձն է: Իսկ «միությունների ազատության» լոզունգի փառաբանումն ի հակակշիռ հանրապետության՝ մասսաներին խորթ, օպորտունիստական ինտելիգենտի ֆրազ է: Սա ֆրազ է այն ինտելիգենտի, որը յերևակայում է, թե «պետիցիայի» (որն ունի 1300 ստորագրություն) կամ մահուդի տակ դրված օրինագծի «փորձը» մի բան է, որը դաստիարակում է «մասսաներին»: Իրականում նրանց դաստիարակում է այլ, կենդանի և ոչ թե թղթե, փորձը, նրանց լուսավորում է գիտակից բանվորների մղած ագիտացիան հենց հանրապետության համար—միակ համապարփակ լոզունգը քաղաքական դեմոկրատիզմի իմաստով:

Տրոցկին հիանալի կերպով գիտե, որ լիկվիդատորները լեգալ հրատարակություններում հենց «կոալիցիաների ազատություն» լոզունգն են միացնում—կորչի անլեգալ կուսակցությունը, կորչի հանրապետության համար մղվող պայքարը—լոզունգի հետ: Տրոցկու խնդիրն էլ հենց այն է, որ լիկվիդատորությունը քողարկի, թոզ փչելով բանվորների աչքին:

* * *

Տրոցկու հետ չի կարելի վիճել ըստ էության, որովհետև նա ոչ մի հայեցակետ չունի: Կարելի յե և պետք է վիճել համոզված լիկվիդատորների ու օտզովիստների հետ, իսկ այն մարդու հետ, որը թե՛ սրանց և թե՛ մյուսների սխալների քողարկման խաղ է խաղում, չեն վիճում. նրան մերկացնում են, որպես... ամենաչնչին հարգի դիպլոմատի:

Վիճել պետք է պլատֆորմի այն թեզիսների հեղինակների հետ, որոնք յերևացին «Правда«-յի № 22-ում: Նրանց սխալը ծագում է կամ այն բանից, որ նրանք անծանոթ են ՌՍԴԲԿ դեկտեմբերյան (1908 թ.) բանաձևերի հետ, կամ այն բանից, որ նրանք լիովին չեն ազատագրվել մոտքի լիկվիդատորական ու «վպերյոդական» միքանի յերերումներից :

1-ին թեզիսն ասում է, որ հունիսի յերեքի ռեժիմը «փեոդալական տիպի ազնվական-կալվածատերերի փաստական անսահմանափակ տիրապետությունն» է, ընդորում այնուհետև մատնանշվում է, որ նրանք «իրենց տիրապետության ինքնակալական-բյուրոկրատական բնույթը քողարկում են փաստորեն իրավազուրկ Պետ. Դումայի կեղծ-սահմանադրական դիմակով»:

Յեթե կալվածատիրական Դուման «փաստորեն իրավազուրկ
է»,—իսկ այս իրավացի յե—ապա կալվածատերերի տիրապետու-
թյունն ի՞նչպես կարող է «անսահմանափակ» լինել։
Հեղինակները մոռանում են, վոր ցարական միապետության
դասակարգային բնույթն ամենևին չի վերացնում ցարական իշ-
խանության և «բյուրոկրատիայի» ահագին անկախությունն ու
ինքնուրույնությունը, սկսած Նիկոլայ II-ից մինչև ամեն մի
ուրյադնիկ։ Այս սխալն—ինքնակալության և միապետության մո-
ռացումը, նրա հանգեցումն անմիջականորեն վերին դասակարգե-
րի «զուտ» տիրապետությանը—անում էյին ոտզովիստները
1908—9 թվականին (տե՛ս «Пролетарий», № 44-ի հավելվածը),
անում էր Լարինը 1910 թվականին, անում են միքանի առանձին
գրողներ (որ․, Մ․ Ալեքսանդրովը), անում էր լիկվիդատորների
կողմն անցած Ն․ Ռ-կովը։
Դեկտեմբերյան (1908 թ․) բանաձևերում տրված է բուրժուա-
զիայի աջակցությամբ պահվող ֆեոդալների տիրապետության
հենց այսպիսի վերլուծությունը, վորը տակից կտրում է այս
սխալի արմատները։
2-րդ թեզիսը ՌՍԴԲԿ ծրագիր-մինիմումի վկայակոչումն է,
ըստ վորում «առանձնապես աչքի ընկնող տեղ» հատկացվում է
շատ պահանջների, ինչպես կոալիցիաների ազատությունն ու կալ-
վածատիրական հողերի բռնագրավումն է, բայց հիշատակու-
թյուն չի արվում հանրապետության մասին։ Մենք կարծում ենք,
վոր այս սխալ է։ Միանգամայն ընդունելով կոալիցիաների ազա-
տության համար մղելիք ագիտացիայի անպայմանական անհրա-
ժեշտությունը, մենք կարծում ենք, վոր հանրապետության լո-
զունգը պետք է դնել ամենաաչքի ընկնող տեղում։
3-րդ թեզիս․ «Ժողովրդական լայն մասսաների նոր հեղա-
փոխական յելույթների անհրաժեշտությունը», առանց վորի ան-
հնարին է մեր պահանջների իրականացումը։
Վերջինը գեր-ճշմարիտ է, բայց այս միայն ճշմարտության
կեսն է։ Մարքսիստները չեն կարող սահմանափակվել մասսա-
ների նոր յելույթների «անհրաժեշտությունը» մատնանշելով,
նրանք պետք է նախ և առաջ ցույց տան, թե ինչպիսի պատ-
ճառներ են առաջ բերում (յեթե առաջ են բերում) նոր հեղափո-
խական ճգնաժամի վրա հասնելը։ Առանց այսպիսի ճգնաժամի՝
«յելույթները»— նրանք, յեթե կամենում եք, միշտ «անհրաժե՛շտ
են»—հնարավոր չեն։



Հեղինակներն ունեն ամենալավագույն հեղափոխական դի-
տավորություններ, բայց նրանց մտածելակերպի մեջ վորոշ բաց
կա։ Դեկտեմբերյան (1908 թ․) բանաձևերը նոր յելույթների
«անհրաժեշտությունը» դուրս են բերում վոչ այնպես պարզորեն,
բայց դրա փոխարեն՝ ավելի ճշտորեն։
4-րդ թեզիս․ «Մասսաների այսպիսի նոր հեղափոխական
յելույթի հնարավորությունը շատ թե քիչ մերձավորագույն ա-
պագայում և… բուրժուազիայի հակահեղափոխական դերի ան-
խընա քննադատությունը» և այլն։
Քննադատությունը միշտ հարկավոր է, անկախ «յելույթների
հնարավորությունից», նույնիսկ այնպիսի ժամանակ, յերբ մաս-
սաների յելույթները հայտնապես անհնարին են։ Ծաղկապել
յելույթների հնարավորությունն ու քննադատությունը՝ նշանա-
կում է միշտ խառնել մարքսիզմի պարտադիր գիծը պայքարի
տեսակներից մեկի (առանձնապես բարձրի) հետ։ Այս առաջին
սխալն է։ Իսկ յերկրորդն այն է, վոր «մի պարծենա կռվի գնա-
լիս, այլ պարծեցիր կռվից հետ գալիս»․ յելույթների հնարավո-
րության մասին խոսելը միտք չունի, այն պետք է ապացուցել
գործերով։ Պլատֆորմում բավական է նշել վերելքի սկիզբը և
ընդգծել ագիտացիայի ու մասսաների յելույթի նախապատրաստ-
ման կարևորությունը։ Մերձավորագույն կամ վոչ-մերձավորա-
գույն ապագայում մասսաների յելույթները վրա կհասնեն, այս
ցույց կտան դեպքերը։
5-րդ թեզիսը հիանալի յէ, վորովհետև ընդգծում է Պետ․
Դումայի, վորպես ագիտացիոն ամբիոնի, ահագին նշանակու-
թյունը։
Մենք չգիտենք, թե ովքեր են թեզիսների հեղինակները։ Բայց
յեթե նրանք—ռուսական վպերյոդականներ են (ինչպես կարելի
յե կարծել վորոշ նշաններից), ապա նրանց պետք է ջերմագին
վողջունել «Вперед» խմբակի մեկ սխալից ազատվելու համար։
Այսպիսի վպերյոդականները կուսակցականների խիղճ ունեն,
վորովհետև նրանք տալիս են «հիվանդոտ» հարցերից մեկի ուղ-
ղակի, պարզորոշ պատասխանը։ Իսկ «Вперед» խումբը կուսակ-
ցությանը խաբում է ամենաանխիղճ կերպով, պաշտպանելով,
քողարկելով ոտզովիզմը մինչև օրս էլ, մինչև 1911 թվականի
դեկտեմբերը, ուղղակի պատասխան չտալով IV Դումայում մաս-

նակցություն ունենալու վերաբերյալ հարցին: Այսպիսի խումբը սոցիալ-դեմոկրատական համարել՝ նշանակում է ծաղրել սոցիալ-դեմոկրատիզմը:

«Социал-Демократ» № 25, 21 (8) դեկտեմբերի 1911 թ.
Երկեր, հ. XV, էջ 302—305:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ՀՈՒԴԱ ՏՐՈՑԿՈՒ ԱՄՈԹԻ ԳՈՒՅՆԻ ՄԱՍԻՆ

[1911 *թ.*]

*Պլենումում Հուդա Տրոցկին յերդում-կրակն եր մտնում, վոր ինքը դեմ ե լիկվիդատորությանն ու ոտզովիզմին: Յերդվում ու աստծուն վկա յեր կանչում, վոր ինքը կուսակցական ե: Ստանում եր նպաստ*[1]:

*Պլենումից հետո ԿԿ-ն թուլացավ, ուժեղացան վպերյոդականները—փող ձեռք բերին: Ամրապնդվեցին այն լիկվիդատորները, վորոնք* «Наша Заря»*-յում Ստոլիպինի առաջ թքում եյին անլեգալ կուսակցության յերեսին:*

*Հուդան* «Правда»*-յից հեռացրեց ԿԿ-ի ներկայացուցչին*[2] *ու սկսեց* «Vorwärts»*-ում*[3] *լիկվիդատորական հոդվածներ գրել: Հակառակ պլենումի կողմից նշանակված դպրոցական հանձնաժողովի ուղղակի վորոշման, վորը (հանձնաժողովը) վճռեց, թե վոչ մի կուսակցական դասախոս չպետք ե գնա վպերյոդականների ֆրակցիոն դպրոցը, Հուդա Տրոցկին գնաց այնտեղ ու կոնֆերենցիայի պլանը քննարկեց վպերյոդականների հետ: Այժմ այս պլանը* Вперед *խմբի կողմից հրապարակված ե մի թռուցիկով:*

*Յեվ այս Հուդան իր կուծքն ե ծեծում ու գոռում իր կուսակցականության մասին, հավատացնելով, վոր ինքը վպերյոդականների ու լիկվիդատորների առաջ յերբեք չի սողացել:*

*Այս ե Հուդա Տրոցկու ամոթի գույնը:*

«Լենինյան ժողովածու» XXI, էջ 303:

---

1 *Նպաստ ԿԿ-ից նրա խմբագրած իբր թե վոչ-ֆրակցիոն լրագիր* «Правда»*-յի համար:*

2 *Այդ ներկայացուցիչը Լ. Կամենևն եր, վորը պլենումում պաշտպանում եր Տրոցկու հետ «միավորումը»:*

3 «Vorwärts» (*«Հառաջ»*)*—գերմանական ս.-դ. կենտրոնական որգան:*



Վ. Ի. ԼԵՆԻՆ ՅԵՎ Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

## ՍՏՈԼԻՊԻՆՅԱՆ «ԲԱՆՎՈՐԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻՑ

(ՆՎԻՐՎՈՒՄ Ե ՄԵՐ «ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻՆ» ՈՒ «ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆՆԵՐԻՆ»)
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Վիբորգի ռայոնում *կայացավ կուսակցական բանվորների ժողովը՝ նվիրված ռայոնական կազմակերպությունները վերստեղծելու և ամրապնդելու հարցին: Այս ժողովում արվեց տեղական աչքի ընկնող գրականագետ-լիկվիդատորներից մեկի (բնագրում հիշված ե անունը: Կենտրոնական Որգանի Խմբագրություն) ընդարձակ զեկուցումը: Զեկուցումը զարգացնում եր դրույթներ, վորոնց վրա հնարավոր ե նոր ս.-դ. կուսակցության վերածնումը: Գլխավոր մտքերն այն եյին, վոր վոչ մի կազմակերպություն կուսակցական իմաստով* հարկավոր չե, *այլ միայն անհրաժեշտ ե ամբողջ աշխատանքը կենտրոնացնել բացահայտ ասպարեզի վրա—այս նպատակի համար յենթադրվում ե ստեղծել («ինքնակամորեն») «նախաձեռնող» խմբեր, վորոնք կզբաղվեյին բացառապես բացահայտ աշխատանքով՝ զեկուցումներ ու ժողովներ կազմակերպելով (հրապարակ. ըստ մարտի 4-ի որենքի—ա՛յ Ստոլիպինն ել թու՛յլ կտա)—պետական ապահովագրություն, պետիցիա, ընտրակ. կամպանիա չորրորդ Դումայի համար—հարցերի և մունիցիպալ հարցերի շուրջը, ինչպես են՝ տրամվայների եժանացումը, ջրամատակարարումը և այլն:*

*Կուսակցական կազմակերպության մի այսպիսի պլան մենակ բացահայտ աշխատանքի վրա միահամուռ դիմադրության հանդիպեց կուսակցական բանվորների, այդ թվում նաև սկզբունքային մենշևիկների կողմից: Ընկերներից մեկը, Պետերբուրգի կազմակերպության անդամը, իր պատասխանի մեջ մերկացրեց զեկուցողի տիպիկ լիկվիդատորությունը—և մի ամբողջ շարք քննադատական ճառերից հետո հարցը կտրուկ կերպով դրվեց՝ կուսակցական սոց.-դեմ. կազմակերպություն, անլեգալ և ամբողջ աշխատանքը տանող, ինչպես բացահայտ, այնպես ել անլեգալ, կամ «նախաձեռնող» խմբեր—լեգալ և անլեգալ, բայց աշխատանքը միայն որենքի հողի վրա տանող—բացահայտորեն:*

*Քվեարկությամբ ընդունվեց առաջինը*—լիկվիդատորը *մնաց յեզակի թվում (ժողովին ներկա եյին 16 բանվորական ներկայա-*

ցուցիչներ առանձին գործարաններից ու ֆաբրիկաներից), վճռվեց բոլոր ջանքերն ուղղել բոլոր ս.-դ. տարրերին միավորելու գործարանների, ֆաբրիկների, միությունների, ակումբների սերտ բջիջների մեջ: Մանրամասն չեմ շարադրում շատ հետաքրքրական ու գործնական վիճաբանությունները:

Անհրաժեշտ եմ համարում ևս հիշատակել այ թե ինչ. «լիկվիդատորն» ամբողջ ժողովի առաջ հայտարարեց, թե հենց նոր կայացավ 8 (?) խոշոր քաղաքների, լեգալ բանվորական շարժման գործիչների (ակներևորեն լիկվիդատորների:—Կ.) խորհրդակցությունը, վորը գտնում է, թե ս.-դ. կուսակցության վերածնման համար հարկավոր են նոր պրիոմներ ու նոր մեթոդներ—այս պրիոմները մատնանշված եյին «լիկվիդատորի» զեկուցման մեջ:

Լեգալ գործիչների հենց այս խորհրդակցությունը հավաստեց, թե ընդհատակյա ճանապարհով կուսակցության վերածընման 3-ամյա փորձերը վոչ մի բանի չհասցրին: Մյուսների թվում իբր թե կային ներկայացուցիչներ Ոդեսսայից ու Յեկատերինոսլավից, վորոնք ասում եյին, թե Յեկատերինոսլավում ու Ոդեսսայում գոյություն չունեն վո՛չ բաց և վոչ ել փակ բանվորական կազմակերպություններ: Հարց է ծագում, հապա ու՞մն եյին ներկայացնում նրանք:

Կ. [Ի. Ստալին:]

Խմբ. կողմից: Ընկ. Կ.-ի թղթակցությունն արժանի յե մեծագույն ուշադրության բոլորի կողմից, ում համար թանգ է մեր կուսակցությունը: «Գոլոսական» քաղաքականության (և գոլոսական դիպլոմատիայի) ավելի լավ մերկացում, մեր «հաշտարարների ու համաձայնողականների» հայացքների ու հույսերի ավելի լավ հերքում դժվար է յերևակայել:

Բացառի՞կ է արդյոք այն դեպքը, վոր նկարագրել է ընկ. Կ.-ն: Վո՛չ, սա ստոլիպինյան բանվորական կուսակցության գործիչների մի տիպիկ դեպք է, վորովհետև մենք հրաշալի կերպով գիտենք, վոր «Наша Заря»-յի, «Дело Жизни»-ի և այլնի մի շարք գրականագետներ արդեն առաջին տարին չէ, վոր սիստեմատիկորեն հենց այս լիկվիդատորական իդեաներն են անցկացնում: Միշտ չէ, վոր այս լիկվիդատորները լույս են ընկնում կուսակցական բանվորների մոտ: Նրանց խայտառակ յելույթների մասին կուսակցությունը շատ հազվադեպ է այսպիսի ճշգրիտ հաղոր-



դումներ ստանում, վորոնց համար մենք պետք է շնորհակալ լինենք ընկ. Կ.-ից, բայց անկախական լեգալիստների խմբի քարոզը միշտ և ամենուրեք հենց այս վոգով է տարվում: Կասկածել այս փաստի վրա, յերբ առկա յեն «Наша Заря»-յի ու «Д. Жизни»-ի տիպի նման ժուռնալներ, անհնարին է: Լռել այս փաստի մասին ձեռնտու յե միայն լիկվիդատորների առանձնապես յեկչոտ ու առանձնապես ստոր պաշտպաններին:

Զուգադրեցեք այս փաստի հետ այն պրիոմները, վոր բանեցնում են Տրոցկու նման մարդիկ, վորոնք գոռում են «համաձայնության» մասին ու լիկվիդատորության հանդեպ տածած իրենց թշնամության մասին: Այս պրիոմները շատ լավ հայտնի յեն. ավելի բարձր գոռալ, վոր մենք իբր թե «վո՛չ բոլշևիկներ ենք, վո՛չ ել մենշևիկներ, այլ հեղափոխական ս.-դ.», ջերմեռանդորեն յերդվել ու աստծուն վկա կանչել, վոր մենք լիկվիդատորության թշնամիներ ենք ու սարի պես կանգնած ենք անլեգալ ՌՍԴԲԿ համար, ամբողջ ուժով հայհոյել նրանց, ովքեր մերկացնում են լիկվիդատորներ պ. պ. Պոտրեսովին և Ընկ., անվանել հակալիկվիդատորներին հարցն «ուռցնողներ», վոչ մի խոսք չասել վորոշակի լիկվիդատորներ պ. պ. Պոտրեսովի, Մարտովի, Լևիցկու, Դանի, Լարինի դեմ և այլն:

Նման պրիոմների ռեալ նշանակությունն ակնհայտնի յե: Ֆրազի միջոցով իսկական լիկվիդատորները քողարկվում են ու ամեն տեսակի փորձեր են արվում խանգարելու հակալիկվիդատորների աշխատանքը: Ճիշտ ու ճիշտ նման քաղաքականություն եր կիրառում ՌՍԴԲԿ պատմության մեջ իր անսկզբունքայնությամբ հայտնի «Рабочее Дело»-ն. նա յերդվում ու աստծուն վկա յեր կանչում, վոր մենք իբր թե ամենևին եկոնոմիստներ չենք, վոր մենք միանգամայն կողմնակից ենք քաղաքական պայքարին, իսկ իրականում «Рабочая Мысль»-ին ու եկոնոմիստներին եր քողարկում, ամբողջ պայքարն ուղղելով նրանց դեմ, ովքեր մերկացնում եյին եկոնոմիստներին ու հերքում նրանց:

Այստեղից պարզ է, վոր Տրոցկին և նրան նման «տրոցկիստներն ու համաձայնողականները» ավելի վտանգավոր են, քան ամեն մի լիկվիդատոր, վորովհետև համոզված լիկվիդատորները պարզապես շարադրում են իրենց հայացքները, և բանվորների համար դյուրին է նրանց սխալականությունը հասկանալ, իսկ պ. պ. Տրոցկիները խաբում են բանվորներին, չարիքը քողարկում, անհնարին դարձնում նրա մերկացումը և բուժումը նրա-

նից: Ամեն վոք, ով պաշտպանում է Տրոցկու խմբակին, պաշտպանում է կեղծիքի ու բանվորներին խաբելու քաղաքականությունը, լիկվիդատորության քողարկման քաղաքականությունը: Գործողությունների կատարյալ ազատություն պ. Պոտրեսովի և Ընկ. համար Ռուսաստանում, նրանց գործերի քողարկումը «հեղափոխական» ֆրազով արտասահմանում—ահա «տրոցկիզմի» քաղաքականության էությունը:

Այստեղից պարզ է, այնուհետև, վոր ամեն մի «համաձայնություն» գոլոսականների հետ, վոր շրջանցում է Ռուսաստանում լիկվիդատորական կենտրոնի, այսինքն «Наша Заря»-յի ու «Дело Жизни»-ի գործիչների հարցը, կլիներ վոչ այլ ինչ, յեթե վոչ բանվորներին նույն ձևով խաբելու, չարիքի նույն քողարկման շարունակությունը: Սկսած 1910 թ. հունվարյան պլենումի ժամանակից՝ գոլոսականները միանգամայն ապացուցեցին, վոր իրենք ընդունակ են ամեն մի բանաձևի տակ «ստորագրելու», ամենևին «չճնշելով» իրենց լիկվիդատորական գործունեյության «ազատությունը» վոչ մի բանաձևով: Արտասահմանում ստորագրել այն բանաձևերի տակ, թե անլեգալ կուսակցության նշանակության ամեն մի նվաստացում՝ պրոլետարիատի վրա ունեցած բուրժուական ազդեցության արտահայտություն է, իսկ Ռուսաստանում օգնել պ. պ. Պոտրեսովներին, Լարիններին, Լևիցկիներին, վորոնք վո՛չ միայն չեն մասնակցում անլեգալ աշխատանքին, այլ ծաղր ու ծանակի յեն յենթարկում այն և անլեգալ կուսակցությունը քայքայում:

Ներկայումս Տրոցկին պ. Լիբերի (—ծայրահեղ լիկվիդատորի, վորը ռեֆերատների ժամանակ հրապարակորեն պաշտպանում էր պ. Պոտրեսովին և այժմ, այս փաստը կոծկելու համար, կռվոտց ու մանր վեճեր է հրահրում) տիպի նման բունդականների հետ միասին, Շվարցի տիպի նման լատիշների հետ միասին և այլն հորինում են հենց նման «համաձայնություն» գոլոսականների հետ: Թո՛ղ ուրեմն վոչ վոք չխաբվի այս բանի նկատմամբ. նրանց համաձայնությունը կլինի համաձայնություն լիկվիդատորներին քողարկելու մասին:

P.S. Այս տողերն արդեն շարված էյին, յերբ մամուլում լուր յերևաց գոլոսականների «համաձայնության» մասին Տրոցկու, բունդականի ու լատիշ-լիկվիդատորի հետ: Մեր խոսքերը միանգամայն հաստատվեցին. սա—համաձայնություն է Ռուսաստանում լիկվիդատորներին քողարկելու մասին, պ. Պոտրեսովի և Ընկ. սպասավորների համաձայնությունը:

[ԼԵՆԻՆ:]

«Социал-Демократ» № 23
14 (1) սեպտեմբերի 1911 թ.
Ժող. «Пражская конференция», եջ 47—50:



Վ. Ի. Լ Ե Ն Ի Ն

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «РАБОЧАЯ ГАЗЕТА»-ՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ [1]

[ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910 Թ.]

Բանվորական շարժման ու սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծանր ճգնաժամը Ռուսաստանում տակավին շարունակվում է: Կուսակցական կազմակերպությունների քայքայում, ինտելիգենցիայի համարյա գլխովին փախուստ նրանցից, տարընթացություն ու յերերումներ սոցիալ-դեմոկրատիայի հավատացյալների... 

1 «Рабочая Газета»—մեր կուսակցության հանրամատչելի որգանը, վորը հրատարակվում էր Փարիզում 1910 թ. նոյեմբերի 12-ից մինչև 1912 թ. օգոստոսի 12-ը (ընդամենը լույս է տեսել 9 համար): «Рабочая Газета»-ն հիմնել ու խմբագրում էր Լենինը: 1910 թ. հոկտեմբերին Վլադիմիր Իլյիչի գրած ««Рабочая Газета»-յի հրատարակման վերաբերյալ հայտարարության» նախագիծը նրա կողմից չի հանձնվել մամուլին և առաջին անգամ տպագրվում է այստեղ:

Մարքսի—Էնգելսի—Լենինի Ինստիտուտ ՀամԿ(բ)Կ ԿԿ կից

անհատական կյանքի մեջ կամ նեղ, մանր խմբակների մեջ, վորոնք զբաղված են միայն «կուլտուրական» աշխատանքով և այլն:

Ճգնաժամը շարունակվում է, բայց նրա վերջն այժմ պարզ յերևում է արդեն, յելքի ճանապարհը միանգամայն նշված ու փորձված է կուսակցության կողմից, տարընթացությունն ու յերերումներն արդեն բավականին վորոշակի և կուսակցության կողմից շատ վորոշակի կերպով գնահատված հոսանքների, ուղղությունների, Փրակցիաների կերպարանք են ընդունել,—իսկ հակակուսակցական հոսանքների վորոշակիությունը, նրանց պարզորոշ գնահատումն արդեն կեսն է տարընթացությունից ու յերերումներից ազատվելու:

Հուսահատության ու հիասթափման անձնատուր չլինելու համար անհրաժեշտ է միայն ճգնաժամի աղբյուրների ամբողջ խորությունն ըմբռնել: Այս ճգնաժամի վրայով չի կարելի ցատկել, այն չի կարելի շրջանցել, այն կարելի յե միայն համառ պայքարով վերացնել, վորովհետև այս ճգնաժամը վոչ թե պատահական է, այլ առաջացած Ռուսաստանի թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական զարգացման առանձին ետապի կողմից: Ինքնակալությունն իշխում է, ինչպես և առաջ: Ե՛լ ավելի կոպիտ են բռնությունները: Ե՛լ ավելի ուժեղ է իրավազրկությունը: Ե՛լ ավելի լկտի յե տնտեսական ճնշումը: Բայց ինքնակալությունն արդեն չի կարող պահվել հին միջոցներով միայն: Նա ստիպված է նոր փորձ անել, սևհարյուրյակային կալվածատեր–ճորտատերերի հետ, ոկտյաբրիստական կապիտալիստների հետ բացահայտ դաշինք, Դումայում և Դումայի միջոցով դաշինք կապելու փորձ: Ով չի կորցրել մտածելու ընդունակությունը, նրա համար ակներև է այս փորձի անհուսալիությունը, ակներև է նոր հեղափոխական ճգնաժամի աճումը: Բայց այս հեղափոխական ճգնաժամը նախապատրաստվում է նոր իրադրության մեջ, դասակարգերի ու կուսակցությունների անչափելիորեն մեծ գիտակցականության, համախմբվածության, կազմակերպվածության պարագայում, վորոնք մինչև 1905 թ. հեղափոխությունը չկային: Ռուսական լիբերալիզմը բարի ցանկությունների բարեհոգի, յերազկոտ, փխրուն և անմշակ ոպոզիցիայից փոխարկվեց ինտելիգենտ բուրժուաների ամուր, պառլամենտորեն վարժեցված կուսակցության, բուրժուաների, վորոնք սոցիալիստական պրոլետարիատի ու գյուղացիական մասսաների՝ պ. պ. ճորտատերերի



գլխին տեսնելիք հեղափոխական դատաստանի գիտակից թշնամի-
ներն են հանդիսանում: Ջիջումներ մուրալ միապետությունից,
սպառնալ նրան հեղափոխությամբ (վորն առելի ու սարսափելի
յե հենց իրեն լիբերալի համար), անվերջ դավաճանել ազատա-
գրական պայքարին և փախստակել թշնամու կողմը—այս է լի-
բերալ, սահմանադրական-դեմոկրատական կուսակցության ան-
խուսափելի, դասակարգային բնության զորությամբ անխուսա-
փելի, վիճակը: Ռուսական գյուղացիությունն ապացուցեց մաս-
սայական հեղափոխական պայքարի յելնելու իր ընդունակությու-
նը, յեթե այն սկսվել է պրոլետարիատի կողմից, և իր՝ լիբերա-
լիզմի ու սոցիալ-դեմոկրատիայի միջև անվերջ տատանվելու
հակումը: Ռուսական բանվոր դասակարգն ապացուցեց,
վոր նա մինչև վերջը միակ հեղափոխական դասակարգն է, միակ
ղեկավարն ազատության (նույնիսկ բուրժուական) համար մղվող
պայքարում: Ցեվ այժմ ազատության համար մղվող պայքարը
շարունակելու մեծ խնդիրը կարող է վճռել ու կվճռի միմիայն
պրոլետարիատի հեղափոխական պայքարը, պրոլետարիատի,
վորն իր հետևից է քաշում-տանում աշխատավորների և շահա-
գործվողների մասսաներին: Գործելով նոր իրադրության մեջ,
ավելի գիտակից ու ավելի համախմբված թշնամիների մեջ, բան-
վոր դասակարգը պետք է վերակառուցի նաև իր կուսակցությու-
նը, ՌՍԴԲԿ: Ղեկավար-ինտելիգենտի տեղը նա ղեկավարներ է
առաջ քաշում բանվորական միջավայրից: Աճում է ս.-դ. բանվոր
կուսակցականի նոր տիպը, վորը կուսակցության բոլոր գործերն
ինքնուրույնորեն է տանում և ընդունակ է, համեմատած առաջ-
վա հետ, տասնապատիկ ու հարյուրապատիկ հոծ պրոլետարա-
կան մասսաներ համախմբել, միավորել, կազմակերպել:

Մենք առաջին հերթին հենց այս նոր բանվորին ենք դի-
մում մեր բանվորական լրագրով: Այս բանվորն աճել-դուրս է
յեկել այն տարիքից, յերբ նրան կարող էր դուր գալ, վոր իր
հետ սվսվացնելով խոսեյին, վոր իրեն կաթնովով կերակրե-
յին: Նա հարկավոր է համարում ամեն ինչ իմանալ կուսակցու-
թյան քաղաքական խնդիրների մասին, նրա շինարարության մա-
սին, ներկուսակցական պայքարի մասին: Նրա համար սարսափե-
լի չէ չգունավորված ճշմարտությունը կուսակցության մասին,
վորի ամրապնդումով, վերականգնումով ու վերակառուցումով
է զբաղված նա: Նրան չեն ոգնում, այլ վնաս են բերում այն
հանրահեղափոխական Փրազները, այն քաղցրավուն-հաշտվողա-

կան կոչերը, վոր նա «Вперед»-ի ժողովածուներում կամ Տրոցկու «Правда» լրագրումն է գտնում, չգտնելով վո՛չ այնտեղ և վո՛չ այստեղ կուսակցական գծի ու կուսակցական դրության պարզորոշ, ճշգրիտ, ուղղակի շարադրումը:

Այս կուսակցական դրությունը շատ դժվար է, բայց գլխավոր դժվարությունն այն չէ, վոր կուսակցությունը սոսկալիորեն թուլացած է ու կազմակերպությունները հաճախ բոլորովին բաժանված, և վոչ էլ այն, վոր սրված է ֆրակցիաների ներկուսակցական պայքարը, այլ այն, վոր սոցիալ-դեմոկրատական բանվորների առաջավոր խավն անբավականաչափ հստակորեն է գիտակցել այս պայքարի էությունն ու նշանակությունը, անբավականաչափ է համախմբվել այն հաջողությամբ մղելու համար, անբավականաչափ ինքնուրույնորեն ու անբավականաչափ յեռանդագին է խառնվել նրա մեջ այն կուսակցական միջուկը ստեղծելու, պաշտպանելու, ամրապնդելու համար, վորը ՌՍԴԲԿ տարընթացությունից, քայքայումից ու յերերումներից դուրս է բերում ամուր ճանապարհի վրա:

Այս ճանապարհը լիովին նշված է 1908 թվականի դեկտեմբերյան կոնֆերենցիայի վորոշումների կողմից, վորոնք 1910 թվականի ԿԿ-ի պլենումի վորոշումներով զարգացվել են: Այս միջուկը բաղկացած է որթոդոքս բոլշևիկների (ոտզովիզմի ու բուրժուական փիլիսոփայության հակառակորդների) և կուսակցական մենշևիկների (լիկվիդատորության հակառակորդների) այն միությունից, վորն այժմ տանում է, իրականում և վոչ թե միայն ֆորմալ հարաբերությունների զորությամբ, տանում է գլխավոր աշխատանքը ՌՍԴԲԿ մեջ:

Բանվորներին ասում են, թե այս միությունը միայն ուժեղացնում ու սրում է ֆրակցիոն պայքարը, լիկվիդատորների և ոտզովիստների դեմ մղվող պայքարը «փոխանակ» լիկվիդատորության ու ոտզովիզմի դեմ պայքարելու: Այդ դատարկ ֆրազ է, այդ միայն սխալվացում է, վորը կարծում է, թե բանվորը վոչ թե չափահաս մարդ է, այլ յերեխա: Անհաճո յե այն ճշմարտությունը, վոր կուսակցության թուլության դեպքում, կազմակերպությունների բաժանվածության դեպքում, արտասահմանյան բազայի անխուսափելիության դեպքում ամեն մի հոսանք հեշտությամբ կազմում է փաստորեն կուսակցությունից բոլորովին անկախ և ինքնուրույն արտասահմանյան ֆրակցիա, բայց այս ճշմարտությունը ծիծաղելի յե (կամ հանցանք



է) թաքցնել ս.-դ. բանվորից, վորն իր կուսակցությունը պետք է վերակառուցի վորոշ, ճշգրիտ, հստակ կուսակցական գծի հիման վրա: Մեզանում այժմ ֆրակցիոն պայքարի ամենաանցանկալի ձևերն են տիրապետում, այդ անկասկած է, բայց հենց նրա համար, վորպեսզի այս պայքարի ձևերը վերափոխենք, անհրաժեշտ է, վոր առաջավոր բանվորներն արհամարհորեն քիթը չկնճռոտեն, ֆրազով չաղատվեն անհաճո պայքարի անհաճո ձևերի վերափոխման անհաճո (դիլետանտի համար, նրա համար, ով հյուր է կուսակցության մեջ) խնդրից, այլ հասկանան այս պայքարի էությունն ու նշանակությունը և տեղերում աշխատանքն այնպես դնեն, վոր սոցիալիստական պրոպագանդայի, քաղաքական ագիտացիայի, արհեստակցական շարժման, կոոպերատիվ աշխատանքի և այլնի և այլնի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ վորոշեն այն սահմանը, վորից դենը շեղումն է սկսվում սոցիալ-դեմոկրատիայից դեպի լիբերալ լիկվիդատորություն կամ կիսաանարխիստական ոտզովիզմ, ուլտիմատիզմ և այլն, կուսակցական գործը տանեն ճիշտ գծով, վորն այս սահմաններով է վորոշվում: Բանվորական լրագրի գլխավոր խնդիրներից մեկը մենք դնում ենք—ոգնել բանվորներին ժամանակակից ռուսական իրականության կարևորագույն կոնկրետ հարցերից յուրաքանչյուրի վերաբերյալ այս սահմանները վորոշելիս:

Բանվորներին ասում են. հենց 1910 թ. հունվարին կայացած ԿԿ-ի պլենումի (լրիվ ժողովի) միավորիչ փորձն ապացուցեց ներկուսակցական ֆրակցիոն պայքարի ապարդյունությունն ու անելանելիությունը, պայքարի, վորն իբր թե «վիժեցրեց» միավորումը: Այսպես ասում են այն մարդիկ, վորոնք կամ անտեղյակ են կամ բոլորովին անընդունակ են մտածելու և կամ իրենց իսկական նպատակներն այս կամ այն հնչուն, ախորժալուր ու վոչինչ չասող ֆրազների միջոցով են թաքցնում: Պլենումը «հիասթափեցրեց» նրանց միայն, ովքեր վախենում եյին ճշմարտության յերեսին նայել ու իրենց զվարճացնում եյին պատրանքներով: Ինչքան էլ մեկ-մեկ մեծ եր «հաշտվողական չփոթը» պլենումում, բայց իբրև արդյունք ստացվեց հենց այն միավորումը, վորը և հնարավոր է միայն, վորը և հարկավոր է միայն: Յեթե լիկվիդատորներն ու ոտզովիստները ստորագրեցին լիկվիդատորության ու ոտզովիզմի դեմ մղելիք պայքարի վերաբերյալ բանաձևը, իսկ մյուս որն է՛լ «ավելի յեռանդագին» ձեռնամուխ յեղան հնին, ապա այս ապացուցեց միայն, թե կու-

սակցության համար անհնարին է հույս դնել անկուսակցական
տարրերի վրա, ցույց տվեց միայն ավելի պարզ, թե ինչպիսի
յին այդ տարրերը: Կուսակցությունը կամավոր միություն է,
և միավորումը հնարավոր ու օգտակար է միայն այն ժամա-
նակ, յերբ միավորվում են մարդիկ, վորոնք ուզում են և կա-
րող են թեկուզ քիչ թե շատ բարեխղճորեն ընդհանուր կու-
սակցական գիծ տանել, ավելի ճիշտ՝ վորոնք (իրենց գաղափար-
ներով, իրենց ձգտումներով) շահագրգռված են ընդհանուր կու-
սակցական գիծ տանելով: Միավորումն անհնարին է ու վնա-
սակար, յերբ նա փորձում է այս գծի գիտակցումը խճճել ու
մթագնել, յերբ նա փորձում է ֆիկտիվ կապով կապել նրանց,
ովքեր կուսակցությունը վճռականորեն հակակուսակցական ուղ-
ղությամբ են քաշում: Յեվ միավորումը բոլշևիզմի ու մենշե-
վիզմի հիմնական խմբերի միջև ձեռք է բերվել պլենումի կող-
մից և ամրապնդվել է յեթե վոչ պլենումի շնորհիվ, ապա
պլենումի միջոցով:

Այն բանվորը, վորը չի ուզում, վոր իր հետ սվսվալով
խոսեն, չի կարող չհասկանալ, վոր լիկվիդատորությունն ու ոտ-
զովիզմը նույնպիսի վոչ պատահական, իրենց արմատներով խո-
րը մտնող ուղղություններ են, ինչպես բոլշևիզմն ու մենշևիզմը:
«Բանվորների համար» առակիկներ հորինողները միայն այս
ֆրակցիաների տարբերությունն «ինտելիգենտական» վեճերով
են բացատրում: Իրականում այս յերկու ուղղությունները, վո-
րոնք իրենց կնիքը դրել են ռուսաստանյան հեղափոխության ամ-
բողջ պատմության վրա, Ռուսաստանի մասսայական բանվորա-
կան շարժման բոլոր առաջին տարիների (և շատ տեսակետներից
ամենակարևոր տարիների) վրա, առաջ են յեկել Ռուսաստա-
նի տնտեսական ու քաղաքական վերակառուցման, ճորտատիրա-
կանից բուրժուական յերկրի վերակառուցման բուն իսկ պրոցե-
սի կողմից, առաջ են յեկել տարբեր բուրժուական դասակարգերի
այն ազդեցություններից, վորոնք պրոլետարիատի վրա եյին
գործում, կամ ավելի ճիշտ՝ բուրժուազիայի զանազան խավերի
այն իրադրությունից, վորի մեջ պրոլետարիատն եր գործում:
Այստեղից բղխում է, վոր անհնարին է սոցիալ-դեմոկրատիայի
միավորումը Ռուսաստանում յերկու ուղղություններից մեկը
վոչնչացնելու միջոցով, ուղղություններ, վորոնք կազմավոր-
վել են բանվոր դասակարգի՝ հեղափոխության մեջ ունեցած
ամենից ավելի բացահայտ, ամենից ավելի լայն, մասսայական,



ազատ, պատմականորեն-կարևոր գործողությունների դարաշըր-
ջանում: Բայց այստեղից բղխում է նաև, վոր վոչ թե միաս-
նականության մասին, ֆրակցիաները վոչնչացնելու և այլնի մա-
սին տված բարյացակամ ֆրազների մեջ, այլ միմիայն յերկու
ֆրակցիաների ներքին զարգացման մեջ են դրված նրանց ռեալ
մերձեցման հիմքերը: Հենց այսպիսի մերձեցումն է, վոր տալիս
է բանվոր դասակարգի կուսակցությունն այն ժամանակվանից,
ինչ մենք, բոլշևիկներս, 1909 թ. գարնանը վերջնականորեն
թաղեցինք «ոտզովիզմը», իսկ կուսակցական մենշևիկները, Պլե-
խանովի գլխավորությամբ, սկսեցին վոչ պակաս վճռական պայ-
քար լիկվիդատորության դեմ: Վոր գիտակից բանվորները յեր-
կու ֆրակցիաներումն էլ ահագին մեծամասնությամբ ոտզովիզ-
մի ու լիկվիդատորության հակառակորդների կողմն են կանգ-
նած, այդ անկասկած է: Այդ պատճառով, ինչքան էլ ծանր,
ժամանակ առ ժամանակ դժվար և միշտ անհաճո լինի ներկու-
սակցական պայքարն այս հողի վրա, մենք յերևույթի եյու-
թյունը նրա (յերևույթի) ձևի պատճառով պետք է մոռանանք:
Ծառերի պատճառով անտառը չեն տեսնում, ովքեր այս պայքա-
րի (վորն անխուսափելի յե կուսակցության տվյալ դրության
ժամանակ ֆրակցիաների պայքարի ձևով) հիմքում չեն տեսնում
գիտակից ս.-դ. բանվորների հիմնական կուսակցական միջուկի
համախմբվելու պրոցեսը:

Իսկական ս.-դ. միջուկի այսպիսի համախմբման նպատակ-
ներին է, վոր ծառայելու յե բանվորական լրագիրը, վոր հիմնում
ենք մենք, բոլշևիկներս, նախապես ստանալով կուսակցական
մենշևիկների (Պլեխանովի գլխավորությամբ) համաձայնությու-
նը մեր հրատարակության աջակցելու համար: Այս հրատարա-
կությունը ստիպված է լույս տեսնել վորպես ֆրակցիոն հրա-
տարակություն, վորպես բոլշևիկների ֆրակցիոն ձեռնարկու-
թյուն: Կգտնվեն, թերևս, մարդիկ, վորոնք այստեղ էլ ծառե-
րի հետևից չեն նկատի անտառը և կգոռան դեպի ֆրակցիոնակա-
նություն «հետ» դառնալու մասին: Մանրամասն շարադրելով
մեր հայացքն իրոք տեղի ունեցող, իրոք կարևոր ու անհրաժեշտ
կուսակցական միավորման եյության և նշանակության նկատ-
մամբ, մենք արդեն դրանով իսկ ցույց տվինք նման առարկու-
թյունների գինը, վորոնք իրականում կնշանակեյին միայն միա-
վորման վերաբերյալ հարցի խճողում և այս կամ այն ֆրակ-
ցիոն նպատակների քողարկում: Իսկ մենք ամենից շատ կամե-

նում ենք, վոր բանվորական լրագիրն ոգնի բանվորներին լիակատար հստակությամբ և մինչև վերջն ըմբռնելու ամբողջ կուսակցական դրությունն ու բոլոր կուսակցական խնդիրները:

Ձեռնարկելով բանվորական լրագրի հրատարակմանը, մենք հույս ենք դնում թե՛ մեր կուսակցության ԿԿ-ի, թե՛ տեղական կազմակերպությունների և թե՛ տվյալ րոպեյին կուսակցությունից կտրված գիտակից բանվորների առանձին խմբերի ոգնության վրա: Մենք հույս ենք դնում ԿԿ-ի ոգնության վրա, գիտենալով, վոր մի շարք ամիսների ընթացքում նրան չեր հաջողվում իր աշխատանքը ճիշտ դնել Ռուսաստանում, չեր հաջողվում հենց նրա համար, վոր բացի բոլշևիկներից ու կուսակցական մենշևիկներից նա վոչ մի տեղ աջակցության չեր հանդիպում, այլ հաճախ հանդիպում եր ուրիշ ֆրակցիաների ուղղակի հակազդեցությանը: ԿԿ-ի կյանքում գոյություն ունեցող այս ծանր շրջանը կանցնի և, վորպեսզի նա ավելի շուտ անցնի, մենք վոչ թե պետք է պարզապես «սպասենք», մինչև վոր ԿԿ-ն կվերականգնվի, մինչև վոր նա կամրանա և այլն, այլ անհապաղ առանձին խմբերի ու առանձին տեղական կազմակերպությունների նախաձեռնությամբ ձեռնամուխ լինենք գլուխ բերելու—սկզբում թող ամենահամեստ չափերով—կուսակցական գիծն ու իսկական կուսակցական միասնականությունն ամրապնդելու հենց այն գործը, վորի վրա ամենից շատ է աշխատում նաև ԿԿ-ն: Մենք հույս ենք դնում տեղական կազմակերպությունների և բանվորների առանձին խմբերի ոգնության վրա, վորովհետև բացառապես նրանց ակտիվ աշխատանքը լրագրի վրա, բացառապես նրանց աջակցությունը, նրանց կարծիքները, նրանց հոդվածները, նյութերը, տեղեկություններն ու նկատողությունները կարող են վոտքի կանգնեցնել և ապահովել բանվորական լրագրի վարումը:

«Правда» 5-ն մայիսի 1937 թ.
Ժող. «25 лет «Правды»», էջ 6—10:



# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

№ 1

## ՌՍԴԲԿ ՊՐԱԳԱՅԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

### ԱՐԴԻ ՄՈՄԵՆՏԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոնֆերենցիան ամենից առաջ հաստատում է հունիսյերեքյան ռեժիմի և կուսակցության խնդիրների վերաբերյալ բանաձևը, վորը կուսակցական կոնֆերենցիան ընդունել է 1908 թ.: Կոնֆերենցիան մատնանշում է այս բանաձևի առանձնապես կարևոր նշանակությունը, բանաձև, վորի դրույթներն ամբողջ հունիսյերեքյան ռեժիմի պատմական նշանակության և դասակարգային էության վերաբերմամբ, մի կողմից, և հեղափոխական ճգնաժամի աճման վերաբերմամբ—մյուս կողմից, լիակատար ծավալով հաստատված են անցած յերեք տարիների դեպքերով:

Այս դեպքերից կոնֆերենցիան, մասնավորապես, նշում է հետևյալը.

ա) Ցարիզմի ագրարային քաղաքականությունը, վորի հետ իրենց հակահեղափոխական շահերն են կապել ինչպես կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի կառավարական կուսակցությունները, այնպես էլ, իրականում, հակահեղափոխական լիբերալիզմը, վոչ միայն չհասցրեց քիչ թե շատ կայուն բուրժուական հարաբերությունների ստեղծմանը գյուղում, այլև չազատեց գյուղացիությանը մասսայական սովահարություններից, վորոնք նշանակում են բնակչության դրության ծայրահեղ վատթարացում և յերկրի արտադրողական ուժերի հսկայական վատնում:

բ) Մնալով անզոր ժամանակակից կապիտալիստական պետությունների համաշխարհային մրցակցության հողի վրա և ավելի ու ավելի հետ վանվելով հետին պլանի վրա Յեվրոպայում, ցարիզմը, սևհարյուրյակային ազնվականության և աճող արդյունաբերական բուրժուազիայի հետ դաշնակցած, այժմ փորձում է իր գիշատչական շահերը կոպիտ—«ազգայնական» քաղաքականության միջոցով բավարարել, քաղաքականություն, վորն ուղղված է ծայրամասերի դեմ, բոլոր ճնշված ազգությունների դեմ, ավելի կուլտուրական մարզերի դեմ (Ֆինլանդիա, Լեհաստան, Հյուսիս-Արևմտյան Յերկիր) մասնավորապես, և գաղութային զավթումների միջոցով, վորոնք ուղղված են ազատության համար հեղափոխական պայքար մղող Ասիայի ժողովուրդների դեմ (Պարսկաստան, Չինաստան):

գ) Տնտեսական վերելքը վիթխարի չափով թուլանում է գյուղացիության տնտեսական դրության լիակատար քայքայումով և բյուրոկրատական ապարա-

ղի կազմալուծմամբ, իսկ մյուս կողմից, կյանքի ուժեղացող թանկությունը սրում է բանվոր դասակարգի և բնակչության լայն մասսաների կարիքը:

դ) Սրա կապակցությամբ բնակչության լայն մասսաները III Դումայի հնգամյա գոյության ժամանակում ավելի ու ավելի են համոզվում, թե Դուման չի ցանկանում, անընդունակ է ու անզոր վորևէ բան անելու ժողովրդի լայն մասսաների դրությունը բարելավելու համար, համոզվում են, թե Դումայի գլխավորող կուսակցությունները հակաժողովրդական բնույթ ունեն:

ե) Դեմոկրատիայի լայն շրջաններում և, առաջին հերթին, պրոլետարիատի մեջ նկատվում է քաղաքական աշխուժացման սկիզբ: 1910—1911 թ. թ. բանվորական գործադուլները, ցույցերի և պրոլետարական միտինգների սկիզբը, դեմոկրատիայի քաղաքային բուրժուազիայի մեջ տեղի ունեցող շարժման սկիզբը (ուսանողական գործադուլներ) և այլն,—այս բոլորը հունիսի 3-ի ռեժիմի դեմ ուղղված՝ մասսաների աճող հեղափոխական տրամադրության արտահայտումներ են:

Կոնֆերենցիան, այս բոլոր տվյալներից յելնելով, հաստատում է կուսակցության առաջ դրված այն խնդիրները, վորոնք մանրամասն մատնանշված են 1908 թ. դեկտեմբերյան կոնֆերենցիայի բանաձևի մեջ, առանձնապես մատնանշելով, թե իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից, վորը գյուղացիությանը տանում է իր հետևից, առաջվա պես մնում է Ռուսաստանում տեղի ունենալիք դեմոկրատական հեղաշրջման խնդիր: Կոնֆերենցիան առանձնապես ընկերների ուշադրությունն է դարձնում՝

1) այն բանի վրա, վոր օրակարգում, ինչպես և առաջ, դրված է, ամենից առաջ, պրոլետարիատի առաջավոր մասսաների սոցիալիստական դաստիարակման, կազմակերպման և համախմբման յերկարատև աշխատանքը.

2) այն բանի վրա, վոր անհրաժեշտ է ուժեղացրած աշխատանք տանել վերականգնելու ՌՍԴԲԿ անլեգալ կազմակերպությունը, վորն ե՛լ ավելի լայն, քան մինչև այժմ, օգտագործում է բոլոր և ամեն տեսակ լեգալ հնարավորությունները, ընդունակ է ղեկավարելու պրոլետարիատի տնտեսական պայքարը և միակ կարող է ղեկավարելու նրա շարունակ հաճախացող քաղաքական յելույթները.

3) այն բանի վրա, վոր անհրաժեշտ է դնել և ընդարձակել սիստեմատիկ քաղաքական ագիտացիան ու համակողմանի կերպով պաշտպանել մասսաների սկսվող շարժումը և այն ընդարձակել կուսակցության՝ լիակատարությամբ անցկացվող լոզունգների դրոշի տակ: Հանրապետական պրոպագանդան ցարական միապետության քաղաքականության դեմ պետք է առանձնապես առաջ քաշվի, իմիջի այլոց, ի հակակշիռ լոզունգների կարճացման լայնորեն մղվող պրոպագանդայի և աշխատանքի սահմանափակման՝ գոյություն ունեցող «լեգալության» շրջանակներով:

## IV ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### I

Կոնֆերենցիան անպայման անհրաժեշտ է համարում ՌՍԴԲԿ մասնակցությունը IV Դումայի առաջիկա ընտրական կամպանիային, մեր կուսակցության ինքնուրույն թեկնածուների առաջադրումը և IV Դումայում սոցիալ-դեմոկրատական ֆրակցիա կազմակերպելը, մի ֆրակցիա, վորը, վորպես



մաս, յենթարկված լինի մեր կուսակցությանն ամբողջությամբ վերցրած:

Կուսակցական գլխավոր խնդիրն է ընտրությունների ժամանակ, ինչպես և ապագա ս.—դ. ֆրակցիայի գլխավոր խնդիրն է հենց Դումայում—մի խնդիր, վորին պետք է յենթարկվեն մնացած բոլոր խնդիրները,—սոցիալիստական դասակարգային պրոպագանդան և բանվոր դասակարգի կազմակերպումը:

Մեր կուսակցության ընտրական գլխավոր լոզունգները առաջիկա ընտրությունների ժամանակ պետք է հանդիսանան.

1) Դեմոկրատական հանրապետությունը

2) 8-ժամյա բանվորական օրը

3) Կալվածատիրական ամբողջ հողի բռնագրավումը:

Մեր ամբողջ նախընտրական ագիտացիայի ընթացքում անհրաժեշտ է հնարավորին չափ ավելի ակնառու կերպով պարզաբանել այս պահանջները III Դումայի փորձի և կառավարության՝ ինչպես կենտրոնական կառավարման, այնպես էլ տեղական կառավարման բնագավառում ունեցած ամբողջ գործունեության հիման վրա:

Վերոհիշյալ յերեք պահանջների հետ անխզելիորեն կապված պետք է պրոպագանդվեն ս.—դ. ծրագիր-մինիմումի բոլոր մնացած պահանջները, ինչպես, օրինակ, ընդհանուր ընտրական իրավունքը, կոալիցիաների ազատությունը, դատավորների և չինովնիկների ընտրելիությունը ժողովրդի կողմից, բանվորների ապահովագրումը պետության կողմից, մշտական բանակը ժողովրդի սպառազինությամբ փոխարինելը և այլն:

### II

ՌՍԴԲԿ ընդհանուր տակտիկական գիծն ընտրությունների ժամանակ պետք է լինի հետևյալը. կուսակցությունը պետք է անխնա պատերազմ մղի ցարական միապետության դեմ, և նրան պաշտպանող կալվածատերերի ու կապիտալիստների կուսակցությունների դեմ, ընդսմին անշեղ կերպով մերկացնելով բուրժուական լիբերալների (կ.-դ. կուսակցության գլխավորությամբ) հակահեղափոխական հայացքները և այդ լիբերալների կեղծ դեմոկրատիզմը:

Նախընտրական պայքարում առանձին ուշադրություն պետք է հատկացվի պրոլետարիատի կուսակցության դիրքը բոլոր վոչ-պրոլետարական կուսակցություններից սահմանազատելուն և ինչպես դեմոկրատական (գլխավորապես տրուդովիկյան, նարոդնիկական, ս.-հ.-ական) խմբերի կարծեցյալ սոցիալիզմի մանր-բուրժուական էյությունը, այնպես էլ նրանց կողմից հետևողական և մասսայական հեղափոխական պայքարի հարցերում ցուցաբերած տատանումներից դեմոկրատիայի գործի համար բղխող վնասը պարզաբանելուն:

Ինչ վերաբերում է ընտրական համաձայնություններին, ապա կուսակցությունը, մնալով Լոնդոնի համագումարի վորոշումների հողի վրա, պետք է.

1) բանվորական կուրիայում ամեն տեղ իր թեկնածուներն առաջադրի և այստեղ վոչ մի համաձայնություն թույլ չտա այլ կուսակցությունների կամ խմբերի (լիկվիդատորների) հետ.

2) նկատի ունենալով այն մեծ ագիտացիոն նշանակությունը, վոր ունի ինքնուրույն ս.-դ. թեկնածությունների հենց առաջադրման փաստը միայն, անհրաժեշտ է հոգ տանել, վորպեսզի քաղաքային ընտրողների յերկրորդ հա-

մարզամասերում ևս, իսկ ըստ հնարավորին նաև գյուղացիական կուրիայում, կուսակցությունն իր սեփական թեկնածուներն ունենա.

3) կրկնակի քվեարկությունների ժամանակ (ընտրությունների կանոնադրության 106 հոդ.) քաղաքային ընտրողների յերկրորդ համագումարի ընտրողներ ընտրելիս թույլատրելի յեն համաձայնություններ կնքել բուրժուական դեմոկրատիայի հետ ընդդեմ լիբերալների և ապա նաև լիբերալների հետ ընդդեմ բոլոր կառավարական կուսակցությունների: Համաձայնությունների ձևերից մեկը կարող է լինել մեկ կամ միքանի քաղաքների ընտրողների ընդհանուր ցուցակներ կազմելը, նախնական ընտրությունների ժամանակ տրված ձայների թվի համեմատ.

4) այն 5 քաղաքներում (Պետերբուրգ, Մոսկվա, Ռիգա, Ոդեսսա, Կիև), վորտեղ գոյություն ունեն ուղղակի ընտրություններ կրկնաքվեարկություններով, նախնական ընտրությունների ժամանակ անհրաժեշտ է առաջադրել ինքնուրույն ս.-դ. թեկնածություններ քաղաքային ընտրողների յերկրորդ կարգի ասպարեզում: Կրկնաքվեարկելու դեպքում այստեղ, նկատի ունենալով սևհարյուրյակային վտանգի ակնհայտ բացակայությունը, թույլատրելի յեն համաձայնություններ միայն դեմոկրատական խմբերի հետ ընդդեմ լիբերալների.

5) վոչ մի ընտրական համաձայնություն չի կարող վերաբերել ընդհանուր պլատֆորմ առաջադրելուն և այդպիսին չպետք է ս.-դ. թեկնածուներին կաշկանդի վորևե քաղաքական պարտավորությամբ, վոչ էլ ս.-դ. կանգնեցնի լիբերալների հակահեղափոխականությունը և բուրժուական դեմոկրատների կիսատ-պատատությունն ու անհետևողականությունը վճռականապես քննադատելու գործում.

6) ընտրությունների յերկրորդ ստադիայի ժամանակ (լիազորների գավառային ժողովներում, նահանգական ընտրական ժողովներում և այլն) անհրաժեշտ է ամեն տեղ, վորտեղ ոկտյաբրիստական-սևհարյուրյակային կամ առհասարակ կառավարական ցուցակը տապալելու անհրաժեշտություն հանդիպի, համաձայնություններ կնքել պատգամավորական տեղերը բաժանելու մասին առաջին հերթին բուրժուական դեմոկրատիայի հետ (տրուդովիկներ, ժողովրդական սոցիալիստներ և այլն), և ապա նաև լիբերալների (կ.-դ.), անկուսակցականների, պրոգրեսիստների հետ և այլն:

III

Ընտրական կամպանիայի նախապատրաստումը բոլոր ս.-դ.-ները պետք է անհապաղ սկսեն և պետք է դրա համար հատուկ ուշադրություն դարձնեն հետևյալին.

1) անհրաժեշտ է անհապաղ անլեգալ ս.-դ. բջիջներ կազմակերպել ամենուրեք այն հաշվով, վորպեսզի նրանք անհետաձգելիորեն զբաղվեն ս.-դ. ընտրական կամպանիայի նախապատրաստմամբ.

2) պետք յեղած ուշադրությունը դարձնել լեգալ բանվորական մամուլի ամրապնդման և ընդլայնման վրա.

3) ընտրական ամբողջ աշխատանքը պետք է կատարվի սերտ կերպով դաշնակցած բանվորական արհեստակցական միությունների և բանվորական բոլոր մյուս ընկերությունների հետ,—ըստորում այդ ընկերությունների մասնակցության ձևերն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրանց լեգալությունը.

4) հատուկ ուշադրություն դարձնել ըստ բանվորական կուրիայի կատարվող ընտրությունների կազմակերպական և ագիտացիոն նախապատրաստման վրա այն 6 նահանգներում, վորտեղ ապահովված է բանվորական կուրիայից Դումայի անդամ ընտրելը (Պետերբուրգի, Մոսկվայի, Վլադիմիրի, Կոստրոմայի, Խարկովի և Յեկատերինոսլավի նահանգներ): Բոլոր բանվոր ընտրողները— թե՛ այստեղ և թե՛ մյուս նահանգներում—պետք է լինեն սոցիալ-դեմոկրատ-կուսակցականներ.

5) բանվորներից ընտրված լիազորների ժողովները, ղեկավարվելով կուսակցական անլեգալ կազմակերպությունների վորոշումներով, պետք է վորոշեն, թե հատկապես ո՞վ պետք է ընտրվի բանվորներից Դումայի անդամ, և պետք է պարտավորեցնեն բոլոր ընտրողներին, բոյկոտելու և դավաճանության համար դատի տալու յերկյուղով, իրենց թեկնածությունները հանել հօգուտ կուսակցական թեկնածուի.

6) նկատի ունենալով կառավարական հալածանքները, ս.-դ. թեկնածուների ձերբակալումները և այլն, անհրաժեշտ է առանձնապես տոկուն, սիստեմատիկ և զգույշ աշխատանք կատարել, վորպեսզի բոլոր միջոցներով, արագորեն հարմարվելով վոստիկանական տակտիկայի զանազան պրիոմներին, անվնաս դարձնենք ցարական կառավարության բոլոր հնարներն ու բռնությունները և ս.-դ. անցկացնենք IV Պետական Դումա, և ապա առհասարակ նաև ամրապնդենք դեմոկրատական պատգամավորների խումբն այդ Դումայում.

7) ս.-դ. կուսակցության թեկնածուները հաստատվում են և ընտրությունների վերաբերյալ դիրեկտիվները տրվում են կուսակցության տեղական անլեգալ կազմակերպությունների և խմբերի կողմից կուսակցության ԿԿ-ի ընդհանուր վերահսկողությամբ և ղեկավարությամբ.

8) յեթե, հակառակ բոլոր ջանքերի, մինչև IV Դումայի ընտրությունները չհաջողվի կուսակցական համագումար կամ նոր կոնֆերենցիա գումարել,—ապա կոնֆերենցիան ԿԿ-ին կամ այն հիմնարկին, վորը ԿԿ-ն կնշանակի, լիազորություններ է տալիս կոնկրետ ցուցումներ տալ ընտրական կամպանիան առանձին տեղերում անցկացնելու հարցերի շուրջը կամ նայած այն հատուկ պայմաններին, վոր կարող են առաջ գալ և այլն:

## ԴՈՒՄԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Կոնֆերենցիան ընդունում է, վոր Դումայի ս.-դ. ֆրակցիան Դումայի ամբիոնն օգտագործել և համաձայն այն գծի, վորը վորոշվեց կուսակցության դեկտեմբերյան (1908 թվականի) կոնֆերենցիայի կողմից և վորը պետք է մնա ղեկավար գիծ կուսակցության դումայական աշխատանքին ուղղություն տալու համար:

Կոնֆերենցիան առանձնապես ընդգծում է, վորպես պրոլետարիատի խընդիրներին համապատասխանող, ֆրակցիայի գործունեության մեջ այն գիծը, վոր նա, ամենայնեռանդուն կերպով պաշտպանելով բանվորների շահերը և այն բոլոր միջոցները, վորոնք կարող են նրա դրությունը բարելավել (օր., բանվորական օրինագծերի նկատմամբ), ձգտում էր բոլոր մասնավոր խնդիրները լուսավորել պրոլետարիատի ղեկավարած ազատագրական շարժման ընդհանուր խնդիրների տեսակետից, մտանաչելով մասսաների շարժման վրա, վոր-

պես միակ ուղու վրա, վորը Ռուսաստանը կազատի այն աղետներից ու այն խայտառակությունից, վորոնց հասցրել է նրան ցարիզմը:

Կոնֆերենցիան վողջունում է բանվորների բացահայտ յելույթների սկիզբը Դումայի ս.-դ. ֆրակցիայի արժանավայել վարմունքի կապակցությամբ, ֆրակցիայի, վորը սև Դումայում բարձրացրեց II Դումայի ս.-դ. պատգամավորների դրոշը և ամբողջ աշխարհի բանվորների աչքի առաջ մերկացրեց 1907 թվականի պետական հեղաշրջումը կազմակերպող սևհարյուրյակային ցարական շայկայի ամբողջ պրովոկացիոն ստոր վարմունքը: Կոնֆերենցիան կոչ է անում Ռուսաստանի բոլոր գիտակից բանվորներին ամենահամակողմանիորեն պաշտպանելու ս.-դ. նախանշված յելույթները III Դումայում և Պետերբուրգի բանվորների սկսած պրոլետարական միտինգների կամպանիան:

Կոնֆերենցիան ընդունում է, վոր IV Դումայի համար անցկացնելիք առաջիկա ընտրական կամպանիայի պատճառով Դումայի ս.-դ. ֆրակցիան պետք է ե՛լ ավելի մեծ ուշադրություն դարձնի պարզաբանելու ժողովրդին բոլոր վոչ-պրոլետարական կուսակցությունների դասակարգային էությունը (և մանավորապես մերկացնելու կ.-դ. կուսակցության հակահեղափոխական ու դավաճանական էությունը), ղեկավարվելով, ընդսմին, Լոնդոնի (1907 թ.) համագումարի բանաձևով, վորն իր բոլոր ամենաէական մասերով հաստատված է հակահեղափոխության փորձով: Ընդսմին իբրև կենտրոնական լոզունգներ, վորոնք պետք է միավորեն ս.-դ. ֆրակցիայի յելույթները, ուղղություն տան նրա աշխատանքների բնույթին, կենտրոնացնեն գլխավոր կետերի վրա բոլոր մասնավոր պահանջներն ու բարեփոխությունները, պետք է լինեն հետևյալ յերեք լոզունգները. 1) դեմոկրատական հանրապետություն, 2) 8 ժամյա աշխատանքային օր, 3) ամբողջ կալվածատիրական հողի բռնագրավումը հօգուտ գյուղացիների:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԻ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունելով, վոր վերջին յերեք տարիների փորձն անպայմանորեն հաստատեց դեկտեմբերյան (1908 թ.) կոնֆերենցիայի՝ կազմակերպական հարցի շուրջը հանած բանաձևի հիմնական դրույթները, և կարծելով, վոր բանվորական շարժման մեջ սկսված աշխուժացման հողի վրա հնարավոր է դառնում կուսակցական աշխատանքի կազմակերպական ձևերի հետագա զարգացումը նույն ուղիով, այսինքն անլեգալ ս.-դ. բջիջներ ստեղծելու ուղիով, բջիջներ, վորոնք շրջապատված են լեգալ բանվորական ընկերությունների ըստ կարելույն ավելի ճյուղավորված ցանցով,—

Կոնֆերենցիան գտնում է, վոր՝

1) անհրաժեշտ է անլեգալ կուսակցական կազմակերպությունների ամենագործունյա մասնակցությունը տնտեսական պայքարի (գործադուլներ, գործադուլային կոմիտեներ և այլն) ղեկավարության մեջ ու անլեգալ կուսակցական բջիջների համագործակցության հաստատումն այս բնագավառում արհեստակցական միությունների հետ, առանձնապես—արհեստակցական միություններում գոյություն ունեցող ս.-դ. բջիջների հետ, ինչպես և արհեստակցական շարժման առանձին գործիչների հետ.

2) արհեստակցական միություններում գոյություն ունեցող ս.-դ. բջիջ-



ները, վորոնք ըստ արհեստակցական հատկանիշի յեն կազմակերպված, ցանկալի յե—համակերպվելով ընդսմին տեղական պայմաններին—զուգակցել կուսակցական բջիջների հետ, վորոնք ըստ տերիտորիալ հատկանիշի յեն կառուցված.

3) անհրաժեշտ է ըստ կարելույն ավելի մեծ նախաձեռնություն ս.-դ. աշխատանքի դրման գործի մեջ լեգալ ընկերություններում՝ միություններ, ընթերցարաններ, գրադարաններ, զվարճությունների զանազան տեսակ բանվորական ընկերություններ, անհրաժեշտ է արհեստակցական օրգանների տարածումն ու արհեստակցական մամուլին ուղղություն տալը մարքսիզմի վոգով, ս.-դ. դումայական ճառերի օգտագործումը, բանվորներից լեգալ դասախոսներ պատրաստելը, բանվորական և այլ ընտրական կոմիտեների ստեղծումը (IV Դումայի ընտրությունների կապակցությամբ) ըստ ռայոնների, ըստ փողոցների և այլն, ս.-դ. ագիտացիան քաղաքային ինքնավարությունների օրգանների ընտրությունների կապակցությամբ և այլն.

4) անհրաժեշտ են յեռանդուն ջանքեր անլեգալ կուսակցական բջիջների ամրապնդման և թվի մեծացման, այս բջիջների նոր, ըստ կարելույն ավելի ճկուն, կազմակերպական ձևեր վորոնելու, յուրաքանչյուր քաղաքում ղեկավար անլեգալ կուսակցական կազմակերպություններ ստեղծելու և ամրացնելու գործում ու մասսայական անլեգալ կազմակերպության այնպիսի ձևերի պրոպագանդայի գործում, ինչպես են «բորսաները», գործարանային կուսակցական ժողովները և այլն.

5) ցանկալի յե պրոպագանդայի խմբակներին մասնակից դարձնել ամենօրյա պրակտիկ աշխատանքին—անլեգալ սոցիալ-դեմոկրատական և լեգալ մարքսիստական գրականության տարածում և այլն.

6) անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր սիստեմատիկ գրական ս.-դ. ագիտացիան և առանձնապես կանոնավոր ու հաճախ լույս տեսնող անլեգալ կուսակցական լրագրի ռեգուլյար տարածումը կարող են մեծ նշանակություն ունենալ նաև կազմակերպական կապերի հաստատման գործում ինչպես անլեգալ բջիջների միջև, այնպես էլ լեգալ բանվորական ընկերություններում գոյություն ունեցող ս.-դ. բջիջների միջև:

## ՍՈՎԻ ԴԵՄ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ Ս.-Դ. ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1) 20 միլիոն գյուղացիների սովահարությունը Ռուսաստանում մի անգամ ևս ցույց է տալիս գյուղացիական չքավորության միանգամայն անտանելի, աշխարհիս քաղաքակրթված վորևէ պետության մեջ աներևակայելի, ճնշված դրությունը, չքավորություն, վորը ճնշված է ցարիզմի և ճորտատեր-կալվածատերերի դասակարգի կողմից.

2) ներկա սովը մի ավելորդ անգամ հաստատում է կառավարական ագրարային քաղաքականության անհաջողությունը և Ռուսաստանի քիչ թե շատ նորմալ բուրժուական զարգացումն ապահովելու անհնարինությունը, յեթե նրա քաղաքականությանն առհասարակ և հողային քաղաքականությանը մասնավորապես ուղղություն է տալիս ճորտատեր-կալվածատերերի դասակարգը, վորոնք ի դեմս աջ կուսակցությունների, թագավորում են թե՛ հունիսի 3-ի Դումայում, թե՛ Պետական Խորհրդում և թե Նիկոլայ II-ի պալատական շրջաններում.

3) սևհարյուրյակային կուսակցությունները (պ. պ. Մարկովների և այլնի գլխավորությամբ) Դումայում արած իրենց հայտարարություններով և պատասխանատվությունը «լոդր գյուղացիների» վրա դնելով, Ռուսաստանը թալանող ցարական-կալվածատիրական շայկայի անամոթությունն այն աստիճանի հասցրին, վոր ամենատգետ մարդկանց աչքերը բացվում են, և ամենաանտարբերները սկսում են հուզվել.

4) սովյալներին օգնելու գործի դեմ ուղղված կառավարական խոչընդոտները, զեմստվոների, միջոցներ հանգանակողների և ճաշարանային կոմիտեներ և այլն կազմակերպողների նկատմամբ յեղած վոստիկանական բծախնդրությունները ամենալայն դժգոհություն են առաջ բերում նույնիսկ զեմստվոների և քաղաքային բուրժուազիայի շարքերում.

5) լիբերալ միապետական բուրժուազիան, իր մամուլի միջոցով օգնելով հասարակությանը սովի մասին ու կառավարության վարքագծի մասին իրազեկ պահելուն, մյուս կողմից, ի դեմս Դումայի կ.-դ. Ֆրակցիայի հանդես յեկավ վորպես այնքան չափավոր ոպոզիցիա, վոր նրա վարքագիծը վոչ մի դեպքում չի կարող բավարարել դեմոկրատիային, ինչպես և չի կարելի հաշտվել նաև սովյալներին օգնելու հարցի մարդասիրական այն դրվածքի հետ, վոր կա լիբերալների մեծ մասի մոտ.

6) բանվոր դասակարգի մեջ, միանգամայն անկախ նրա տնտեսական դրության այն վատթարացումից, վորը բղխում է սովյալների և գործազուրկների թվի ավելանալուց, նկատվում է սովյալների օգտին հանգանակություններ կատարելու և այլ օգնության տարերային ձգտում: Այս ձգտումը, վորը բնական է ամեն մի դեմոկրատի մոտ, էլ չխոսելով սոցիալիստների մասին, բոլոր սոցիալ-դեմոկրատների կողմից պետք է պաշտպանվի և ուղղվի դասակարգային պայքարի վոգով:

Այս բոլորն ուշադրության առնելով,

Կոնֆերենցիան վորոշում է, վոր անհրաժեշտ է.

ա) սոցիալ-դեմոկրատական բոլոր ուժերը լարել բնակչության լայն մասսաների և մանավանդ գյուղացիության մեջ պրոպագանդան ու ագիտացիան լայնացնելու համար, պարզաբանելով սովի կապը ցարիզմի և նրա ամբողջ քաղաքականության հետ, գյուղում ագիտացիայի նպատակով տարածելով վոչ միայն ս.-դ. և տրուդովիկների, այլև ցարի այնպիսի բարեկամների, ինչպես Մարկով 2-րդի ճառերը, և տարածել սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական պահանջները՝ ցարական միապետության տապալումը, դեմոկրատական հանրապետության հիմնումը, կալվածատիրական հողի բռնագրավումը.

բ) պաշտպանել բանվորների ձգտումը՝ օգնելու սովյալներին վորքան հնարավոր է, խորհուրդ տալով նվիրատվություններն ուղղել բացառապես Դումայական ս.-դ. Ֆրակցիային, բանվորական մամուլին կամ բանվորական կուլտուր-լուսավորական և այլ ընկերություններին և այլն և կազմելով սոցիալ-դեմոկրատների ու դեմոկրատների հատուկ բջիջներ սովյալներին օգնող խմբերի, կոմիտեների և հանձնաժողովների մեջ մտնելու ժամանակ.

գ) աշխատել սովի առթիվ յեղած դեմոկրատական վրդովմունքը ուղղել ցույցերի, միտինգների, մասսովկաների և մասսաների՝ ցարիզմի դեմ մղած պայքարի այլ ձևերի կողմը:



## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԴՈՒՄԱՅԱԿԱՆ ՈՐԵՆՍԳԾԻՆ ՑՈՒՅՑ ՏԱԼԻՔ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

### I

1. Վարձու բանվորի կողմից արտադրվող հարստությունների այն մասը, վոր նա ստանում է վորպես աշխատավարձ, այնքան չնչին է, վոր այն հազիվ է հերիքում նրա առօրյա ամենակենսական պահանջմունքները բավարարելու համար. այդպիսով պրոլետարը զրկված է իր աշխատավարձից խնայողություններ անելու ամեն մի հնարավորությունից այն դեպքում, յերբ նա կորցնում է աշխատունակությունը հաշմության, հիվանդության, ծերության, ինվալիդության հետևանքով, ինչպես և արտադրության կապիտալիստական յեղանակի հետ անխզելի կերպով կապված գործազրկության դեպքում: Այս պատճառով բանվորների ապահովագրումը մատնանշված բոլոր դեպքերում հանդիսանում է մի ռեֆորմ, վորը տիրաբար թելադրում է կապիտալիստական զարգացման ամբողջ ընթացքը:

2. Բանվորների ապահովագրման լավագույն ձևը հանդիսանում է նրանց պետական ապահովագրումը, կառուցված հետևյալ հիմունքներով. a) այդ ապահովագրումը բանվորներին պետք է ապահովի նրանց կողմից աշխատունակությունը կորցնելու բոլոր դեպքերում (հաշմություն, հիվանդություն, ծերություն, ինվալիդություն. բանվորուհիների մոտ, բացի այդ, հղիություն, ծննդաբերությունը. ապրուստ հայթայթողի մահից հետո այրիներին ու վորբերին վարձատրելը) կամ գործազրկության շնորհիվ աշխատավարձը կորցնելու դեպքում. b) ապահովագրումը պետք է ընդգրկի վարձու աշխատանքով զբաղվող բոլոր անձերին և նրանց ընտանիքներին. c) բոլոր ապահովագրվածները պետք է վարձատրվեն լրիվ աշխատավարձը հատուցելու սկզբունքով, ընդ վորում ապահովագրման բոլոր ծախքերը պետք է ընկնեն ձեռնարկուների և պետության վրա. d) ապահովագրման բոլոր տեսակները պետք է վարեն ըստ տերիտորիալ տիպի և ապահովագրվածների լիակատար ինքնավարության հիմունքներով կազմված միասնական ապահովագրական կազմակերպությունները:

3) Ռացիոնալ կերպով կառուցված ապահովագրման հիմնական այս բոլոր պահանջներին արմատապես հակասում է Պետական Դումայի ընդունած կառավարական օրինագիծը. այն a) վերաբերում է ապահովագրության միայն յերկու տեսակներին—դժբախտ դեպքերից և հիվանդություններից կատարվող ապահովագրմանը. b) այն ընդգրկում է ռուսաստանյան պրոլետարիատի միայն մի փոքրիկ մասը (ամենաներողամիտ հաշիվներով՝ մեկ վեցերորդը), ապահովագրումից դուրս թողնելով ամբողջ մարզեր (Սիբիրը, ըստ կառավարական խմբագրության նաև— Կովկասը) և ապահովագրության հատուկ կարիք զգացող բանվորների ամբողջ կատեգորիաներ (գյուղատնտեսական, կառուցող, յերկաթուղային, փոստ-հեռագրական բանվորներ, գործակատարներ և այլն). c) սահմանվում են վարձատրման աղքատիկ չափեր (լիակատար հաշմության դեպքում մաքսիմալ վարձատրությունը աշխատավարձի յերկու յերրորդն է, այն էլ իրական աշխատավարձից ցած հիմունքների վրա հաշվվող աշխատավարձի) և միաժամանակ բանվորների ուսին է բարդում ապահովագրման ծախսերի գլխավոր մասը. նախադծվում է բանվորների հաշվին ապահովագրել վոչ միայն հիվանդություններից, այլև «մանր»—գործնականում

ամենից ավելի հաճախ պատահող—հաշմություններից: Այս նոր կարգը վատթարացում է համեմատած նույնիսկ այժմյան օրենքի հետ, վորը հաշմության համար կատարվող վարձատրության պարտականությունը բացառապես բարդում եր ձեռնարկուների վրա. d) ապահովագրական հիմնարկները զրկված է ամեն մի ինքնուրույնությունից, դնելով դրանք չինովնիկների («Ատյանների» և «Ապահովագրության գործերի խորհրդի»), ժանդարմերիայի, վոստիկանության (վորոնց, բացի ընդհանուր վերահսկողությունից, իրավունք է վերապահվում ըստ եյության ուղղություն տալ այդ հիմնարկների գործունեյությանը, ազդել նրանց անձնակազմի վրա և այլն), գործատերերի (դժբախտ դեպքերից ապահովագրող ընկերությունների բացառապես ձեռնարկուական կազմը, հիվանդություններից ապահովագրող հիվանդանոցային գանձարկղների ֆաբրիկային տիպ, ձեռնարկուների՝ կանոնադրության կողմից ապահոված ազդեցությունը սրանց վրա և այլն) խաչաձև վերահսկողության տակ:

4. Միայն մի այդպիսի օրենք, վորն ամենակոպիտ կերպով ծաղրում է բանվորների ամենակենսական շահերը, հենց կարող եր ծնվել կատաղի ռեակցիայի ներկա մոմենտում, հակահեղափոխության տիրապետության ժամանակաշրջանում, վորպես արդյունք կառավարության բազմամյա նախնական բանակցությունների և համաձայնության կապիտալի ներկայացուցիչների հետ: Պրոլետարիատի շահերին լիկապես համապատասխանող ապահովագրական ռեֆորմի իրագործման անհրաժեշտ պայմանը հանդիսանում է ցարիզմի վերջնական տապալումը և պրոլետարիատի ազատ դասակարգային պայքարի համար պայմաններ նվաճելը:

## II

Այս բոլորից յելնելով՝ կոնֆերենցիան վորոշում է, վոր.

1) Ինչպես անլեգալ կուսակցական կազմակերպությունների, այնպես ել լեգալ կազմակերպությունների (արհեստակցական միությունների, ակումբների, կոոպերատիվների և այլն) մեջ աշխատող ընկերների անհետաձգելի խնդիրն է հանդիսանում դումայական ապահովագրական նախագծի դեմ ամենալայն ագիտացիա զարգացնելը, մի նախագիծ, վորը շոշափում է ռուսաստանյան ամբողջ պրոլետարիատի, վորպես դասակարգի, շահերը, և վորն ամենակոպիտ կերպով խախտում է այդ շահերը:

2) Կոնֆերենցիան անհրաժեշտ է համարում ընդգծել, վոր ապահովագրական օրինագծի առթիվ մղվելիք ամբողջ ս.-դ. ագիտացիան պետք է կապակցվի պրոլետարիատի՝ արդի կապիտալիստական հասարակության մեջ ունեցած դասակարգային դրության հետ, սոցիալ-ռեֆորմատորների կողմից տարածվող բուրժուական պատրանքների քննադատության հետ, և առհասարակ մեր հիմնական սոցիալիստական խնդիրների հետ. մյուս կողմից, այս ագիտացիայի ընթացքում դումայական «ռեֆորմի» բնույթը պետք է կապակցվի մեր ապրած քաղաքական մոմենտի հետ և առհասարակ մեր հեղափոխական-դեմոկրատական խնդիրների ու լոզունգների հետ:

3) Միանգամայն հավանություն տալով դումայական ս.-դ. ֆրակցիայի քվեարկությանն ընդդեմ դումայական օրինագծի, կոնֆերենցիան ընկերների ուշադրությունն է հրավիրում այն հսկայական և արժեքավոր նյութի վրա, վոր տվել են դումայական վիճաբանություններն այս հարցի առթիվ, տարբեր դասակարգերի՝ դեպի բանվորական ռեֆորմներն ունեցած վերաբերմունքը



պարզելու համար. կոնֆերենցիան առանձնապես ընդգծում է հետամնաց կապիտալի օկտյաբրիստական ներկայացուցիչների՝ դեպի բանվորներն ունեցած բացահայտ կերպով թշնամական ձգտումները, վորոնք վառ կերպով արտահայտվեցին վիճաբանությունների ժամանակ, ինչպես և կ.-դ. կուսակցության՝ «սոցիալական հաշտության» մասին ունեցած սոցիալ-ռեֆորմատորական ֆրազներով սքողված կեղծավոր յելույթները. կադետները Դումայում ըստ եյության դեմ են արտահայտվել բանվոր դասակարգի ինքնագործունեյությանը և ատելությամբ լի պայքարում եյին ս.-դ. դումայական ֆրակցիայի՝ նախագծի առթիվ ներկայացրած հիմնական ուղղումների դեմ:

4) Կոնֆերենցիան ամենավճռական կերպով բանվորներին նախազգուշացնում է ամեն մի փորձից՝ ս.-դ. ագիտացիան խուզելու և միանգամայն խեղաթյուրելու, սահմանափակելով այն՝ հակահեղափոխության տիրապետության ժամանակաշրջանում լեգալ կերպով թույլատրվող շրջանակներով. ընդհակառակը, կոնֆերենցիան ընդգծում է, վոր այդ ագիտացիայի հիմնական մոմենտը պետք է լինի պրոլետարիատի լայն մասսաներին այն ճշմարտությունը պարզաբանելը, վոր առանց հեղափոխական նոր վերելքի անհնարին է բանվորի դրության վորևէ իսկական բարելավում, վոր ամեն վոք, ով ուզում է ձեռք բերել իսկական բանվորական ռեֆորմ, պետք է ամենից առաջ պայքարի հանուն նոր հաղթական հեղափոխության:

5) Այն դեպքում, յերբ դումայական օրինագիծը, չնայած գիտակից պրոլետարիատի բողոքին, կյանքի մեջ մտնի, կոնֆերենցիան ընկերներին հրավիրում է ոգտագործել կազմակերպական այն նոր ձևերը, վոր օրինագիծը սահմանում է (բանվորների հիվանդանոցային գանձարկղներ), վորպեսզի այդ կազմակերպական բջիջներում ել ս.-դ. գաղափարների յեռանդուն պրոպագանդա մղեն և այդպիսով այդ օրենքը ել, վորը մտահղացվել է պրոլետարիատին նոր ձևով ստրկացնելու և ճնշելու նպատակով, դարձնեն նրա դասակարգային գիտակցությունը զարգացնելու, նրա կազմակերպվածությունն ամրապնդելու, լիակատար ազատության և սոցիալիզմի համար նրա մղած պայքարն ուժեղացնելու գործիք:

## «ՊԵՏԻՑԻՈՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ» ՄԱՍԻՆ

1. Հակահեղափոխությունն, ի դեմս կառավարության և Դումայի, բանվորական շարժումը համարելով իր ամենագլխավոր թշնամին, այդ շարժումը հալածում է իր բոլոր ձևերով, սիստեմատիկորեն խախտելով նույնիսկ այն «լեգալ հնարավորությունները», վոր բանվոր դասակարգի մոտ մնացել են վորպես հեղափոխության արդյունք:

2. Այս ռեժիմը բանվորական լայն մասսաները մշտապես այն փաստի առաջ է կանգնեցնում, վոր նրանց նույնիսկ տարրական իրավունքները (առաջին հերթին կոալիցիաների ազատությունը) չեն կարող իրագործվել առանց ցարական միապետությունը լիովին տապալելու:

3. Մի խմբի կողմից 1910 թվի ձմեռը Ս.-Պետերբուրգի լիկվիդատորների շրջանառության մեջ դրված պետիցիան և այն ագիտացիան, վորով նրանք ուղեկցում եյին այդ պետիցիային, կոալիցիաների ազատության պահանջը դուրս եյին կորզում բանվոր դասակարգի հեղափոխական պահանջների ամբողջ գումարից: փոխանակ բանվորներին ցույց տալու, վոր Ռուսաստանում կոալիցիաների լիակատար ազատություն նվաճելու համար անհրաժեշտ է մասսա-



Գ. 86—7

ների հեղափոխական պայքարը դեմոկրատիայի հիմնական պահանջների համար—լիկվիդատորներն իրականում քարոզում էին այսպես կոչված «իրավունքի համար պայքար մղելը», այսինքն հունիսի 3-ի ռեժիմը մասնակի բարելավումների միջոցով «նորոգելու» համար մղվող լիբերալ պայքար:

4. Վերոհիշյալ կամպանիան ռուսական քաղաքական կյանքի կոնկրետ պայմանների և բանվորական մասսաների դրության զորությամբ անխուսափելիորեն դարձավ զուտ ձևականորեն և մեռած կերպով Թուղթ ստորագրել, մասսաների մեջ վոչ մի արձագանք չգտնելով և քաղաքական հետաքրքրություն առաջ չբերելով։

5. Տվյալ պետիցիոն կամպանիայի բախտը բացահայտորեն հաստատեց, վոր ամբողջ ձեռնարկումը բանվորական մասսայից կտրված է և ճիշտ չէ. պետիցիան ընդամենը հավաքեց 1300 ստորագրություն, ըստվորում բոլոր կուսակցական կազմակերպություններում, առանց փրակցիաների և խոսանքների խտրության, պետիցիոն կամպանիան բացարձակապես վոչ մի պաշտպանություն չգտավ, ինչպես և մեր դումայական ս.-դ. փրակցիան հնարավոր չհամարեց այդ կամպանիային մասնակցելը:

6. Բանվորական միտինգների կամպանիան II Դումայի պատգամավորների բախտի և 1912 Թվի հունվարի 9-ի բանվորների կողմից առանձին քաղաքներում կատարած ցույցերի կապակցությամբ ցույց տվին, վոր բանվորական մասսաների ինքնագործունեությունն ամենևին չի ուղղվում այնպիսի միջոցների կողմը, ինչպես պետիցիոն կամպանիան է, և բոլորովին էլ «մասնակի իրավունքների» դրոշի տակ չի ընթանում:

Կոնֆերենցիան, բոլոր վերոհիշյալից յելնելով,

1) բոլոր ս.-դ. կոչ է անում բանվորներին պարզաբանել կոալիցիաների ազատության ամբողջ անհրաժեշտությունը պրոլետարիատի համար, ըստվորում այս պահանջն անհրաժեշտ է շարունակ անխզելիորեն կապակցել մեր ընդհանուր քաղաքական պահանջների և մասսաների մեջ մղվող հեղափոխական ագիտացիայի հետ:

2) Ընդունելով, վոր վորոշ պայմաններում մասսայական բանվորական պետիցիան կարող է բողոքի շատ պետքական ձև լինել, գտնում է, վոր Ռուսաստանում մեր ապրած դարաշրջանում պետիցիան հանդիսանում է ս.-դ. ագիտացիայի ամենից ավելի քիչ պետքական միջոցներից մեկը:

## ԼԻԿՎԻԴԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՅԵՎ ԼԻԿՎԻԴԱՏՈՐՆԵՐԻ ԽՄԲԻ ՄԱՍԻՆ

Ուշադրության առնելով,

1) վոր Ռ.Ս.-Դ.Բ.Կ. արդեն մոտ չորս տարի յե, ինչ վճռական պայքար է մղում լիկվիդատորական հոսանքի դեմ, վորը կուսակցության 1908 Թ. դեկտեմբերյան կոնֆերենցիայում վորոշվեց վորպես

«Կուսակցության ինտելիգենցիայի մի վորոշ մասի փորձեր—լիկվիդացիայի յենթարկելու գոյություն ունեցող Ռ.Ս.-Դ.Բ.Կ. կազմակերպությունը և ինչ էլ վոր լինի փոխարինելու այն՝ լեգալության շրջանակներում կազմելիք անձև միավորումով, Թեկուզ այդ լեգալությունը գնվի կուսակցության ծրագրից, տակտիկայից և տրադիցիաներից բացահայտորեն հրաժարվելու գնով»։

2) վոր Կ.Կ.-ի պլենումը 1910 Թ. հունվարին, շարունակելով պայքարել այս հոսանքի դեմ, միաձայն ընդունեց այն վորպես բուրժուազիայի՝ պրոլե-



տարիատի վրա ունեցած ազդեցության արտահայտություն և վորպես իրական կուսակցական միասնության ու բոլշևիկների և մենշևիկների նախկին փրակցիաների ձուլման պայման՝ դրեց կապերի լիակատար խզումը լիկվիդատորության հետ ու սոցիալիզմից տեղի ունեցող բուրժուական այս շեղումը վերջնականորեն հաղթահարելը.

3) վոր հակառակ կուսակցության բոլոր վորոշումների և հակառակ բոլոր Փրակցիաների ներկայացուցիչների՝ 1910 Թ. հունվարին պլենումում հանձն առած պարտավորության, ս.-դ. այն մասը, վոր խմբավորվում է «Наша Заря» և «Дело Жизни» ժուռնալների շուրջը, բացահայտորեն պաշտպան է կանգնել այն հոսանքին, վորն ամբողջ կուսակցության կողմից ճանաչված է վորպես պրոլետարիատի վրա յեղած բուրժուական ազդեցության արդյունք.

4) վոր Կ.Կ.-ի նախկին անդամներ Մ[իխայի]-լը, Ցուրին և Ռոմանը վոչ
միայն հրաժարվեցին մտնել Կ.Կ.-ի մեջ 1910 Թվականի գարնանը, այլ մինչև
անգամ հրաժարվեցին Թեկուզ մեկ նիստին ներկա գտնվել նոր անդամների
կոոպտացիայի համար և բացեիբաց հայտարարեցին, Թե կուսակցության
Կ.Կ.-ի բուն իսկ գոյությունը համարում են «վնասակար»։
5) վոր լիկվիդատորների հիշյալ «Наша Заря» և «Дело Жизни»
գլխավոր հրատարակությունները հենց 1910 Թվականի պլենումից հետո վըճ-
ռականորեն ու ամբողջ գծով շրջվեցին դեպի լիկվիդատորություն, վոչ միայն
«նսեմացնելով» (հակառակ պլենումի վորոշումների) «անլեգալ կուսակցու-
Թյան նշանակությունը», այլև ուղղակի ժխտելով այն, կուսակցությունը
հայտարարելով «դիակ», կուսակցությունը հայտարարելով արդեն լիկվիդա-
ցիայի յենթարկված, անլեգալ կուսակցության վերականգնումը «ռեակցիոն
ուտոպիա» հայտարարելով, լեգալ ժուռնալների էջերից անլեգալ կուսակցու-
Թյան գլխին զրպարտություններ և լուտանքներ Թափելով, հրավեր կարդալով
բանվորներին կուսակցության բջիջներն ու նրա հիերարխիան ընդունել «մահա-
ցած» և այլն.
[6]) վոր մինչդեռ ամբողջ Ռուսաստանում կուսակցականները, առանց
փրակցիաների խտրության, միավորվել են կուսակցական կոնֆերենցիայի
հրավիրման հերԹական գործի համար, լիկվիդատորները, առանձնանալով
վորպես բոլորովին անկախ խմբակներ, տեղերումն էլ անջատվեցին այնտեղ,
վորտեղ մենշևիկ-կուսակցականներն են գերակշռում (Յեկատերինոսլավ, Կի-
յև), և վերջնականորեն հրաժարվեցին ամեն մի կուսակցական կապից Ռ.Ս.-
Դ.Բ.Կ. տեղական կազմակերպությունների հետ,—
կոնֆերենցիան հայտարարում է, վոր «Наша Заря»-յի և «Дело Жизни»-ի
խմբակն իր վարմունքով իրեն վերջնականորեն կուսակցությունից դուրս դրեց:
կոնֆերենցիան կոչ է անում բոլոր կուսակցականներին, առանց հոսանքների ու յերանգների խտրության, պայքար մղել լիկվիդատորության դեմ, բացատրել նրա ամբողջ վնասը բանվոր դասակարգի ազատագրման գործի համար և բոլոր ուժերը լարել անլեգալ Ռ.Ս.-Դ.Բ.Կ. վերականգնելու ու ամրապնդելու համար:

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈՐԳԱՆԻ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով ԿՕ-ի ներկայացուցչի զեկուցումը, կոնֆերենցիան, հավանություն տալով ԿՕ-ի սկզբունքային գծին,—

ցանկություն է հայտնում, վորպեսզի ԿՕ–ում ավելի շատ ուշադրություն հատկացվի պրոպագանդիստական բնույթի հոդվածներին, և վորպեսզի հոդվածները գրվեն բանվորների համար ավելի պոպուլյար և մատչելի:

## «РАБОЧАЯ ГАЗЕТА»-ՅԻ ՄԱՍԻՆ

Ընդունելով, վոր «Рабочая Газета»-ն վճռականորեն և հետևողականորեն ի պաշտպանություն է դուրս յեկել կուսակցության ու կուսակցականության և տեղերում առանց ֆրակցիաների խտրության կուսակցական աշխատողների կողմից լիակատար համակրանք է գտնում,—

կոնֆերենցիան

1) տեղերում գտնվող բոլոր ընկերներին կոչ է անում «Рабочая Газета»-յին համակողմանի պաշտպանություն ցույց տալ.

2) «Рабочая Газета»-ն ընդունում է վորպես կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի պաշտոնական օրգան:

## ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռուսաստանյան Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը բողոքում է ցարական շայկայի ավազակային քաղաքականության դեմ, մի շայկա, վորը վորոշել է խեղդել պարսկական ժողովրդի ազատությունը և դրանում ամենաբարբարոսական և զզվելի գործողությունների առաջ կանգ չի առնում:

Կոնֆերենցիան հավաստում է, վոր ռուսական լիբերալների կողմից ամեն կերպ ռեկլամվող և պաշտպանվող ռուսական կառավարության դաշինքն Անգլիայի կառավարության հետ ամենից առաջ ուղղված է ընդդեմ ասիական դեմոկրատիայի հեղափոխական շարժման և վոր այդ դաշինքն անգլիական լիբերալ կառավարությանը դարձնում է ցարիզմի արյունալի գազանությունների մասնակիցը:

Կոնֆերենցիան իր լիակատար համակրանքն է արտահայտում պարսկական ժողովրդի պայքարին և, մասնավորապես, պարսկական ս.-դ. կուսակցության պայքարին, մի կուսակցություն, վորը ցարական բռնակալների դեմ մղած պայքարում այնքան զոհեր է կրել:

## ՉԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կոնֆերենցիան նկատի ունենալով կառավարական և լիբերալ («Речь») լրագրերի կամպանիան, լրագրեր, վորոնք—ռուսաստանյան կապիտալիստների շահերից յելնելով—պրոպագանդում են ոգտվել Չինաստանում տեղի ունեցող հեղափոխական շարժումից և նրանից պոկել Ռուսաստանին սահմանակից մարզերը,—հավաստում է չինական ժողովրդի հեղափոխական պայքարի համաշխարհային նշանակությունը, մի պայքար, վորը բերում է Ասիայի ազատագրությունը և խարխլում է յեվրոպական բուրժուազիայի տիրապետությունը, վողջունում է Չինաստանի հեղափոխական-հանրապետականներին, վկայում է այն խորը վոգևորությունը և լիակատար համակրանքը, վորով Ռուսաստանի պրոլետարիատը հետևում է Չինաստանի հեղափոխական ժողովրդի հաջողություններին, և խարազանում է ռուսական լիբերալիզմի վարքագիծը, այն լիբերալիզմի, վորը պաշտպանում է ցարիզմի զավթումների քաղաքականությունը:



## ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ՝ ՑԱՐԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռ.Ս.-Դ.Բ.Կ. կոնֆերենցիան, ռուսական ցարիզմի և հակահեղափոխության Դումայի կողմից ֆինլանդական ժողովրդի իրավունքներն ու ազատությունը վոչնչացնող օրենքներ անցկացվելուց հետո, առաջին անգամը հավաքվելով, իր լիակատար համերաշխությունն է արտահայտում յեղբայրական ֆինլանդական սոց.-դեմ. կուսակցությանը, ընդգծում է Ֆինլանդիայի և Ռուսաստանի բանվորների խնդիրների միասնությունը ռուսական հակահեղափոխական այն կառավարության և հակահեղափոխական այն բուրժուազիայի դեմ մղած պայքարում, վորոնք վոտնահարում են ժողովրդի իրավունքները, և իր հաստատ համոզմունքն է հայտնում, վոր միայն Ռուսաստանի և Ֆինլանդիայի բանվորների միատեղ ջանքերով կարող է տեղի ունենալ ցարիզմի տապալումը և ռուսական ու ֆինլանդական ժողովուրդների ազատությունը:

## ՎՈՂՋՈՒՅՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻՆ

Կոնֆերենցիայի հանձնարարությամբ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի կենտրոնական օրգանին ուղարկվել է հետևյալ հեռագիրը.

«Ռուսաստանյան Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունն, ի դեմս Ռուսաստանյան Կազմակերպական Հանձնաժողովի և Կուսակցության Կենտրոնական Օրգանի, ջերմ վողջույն է ուղարկում յեղբայրական գերմանական սոցիալ-դեմոկրատիային, վորն ընտրությունների ժամանակ փայլուն հաղթանակ է տարել բուրժուական ամբողջ աշխարհի վրա:

Կեցցե՛ միջազգային, կեցցե՛ գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան»:

*ВКП (б) в резолюциях*, մ. I,
եջ 186—194, 195—196:

№ 2

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՌՍԴԲԿ ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ[1]

Ընկերնե՛ր:

Հերթական գործը, վերջապես, կատարված է: Մեր կուսակցությունը գումարեց իր կոնֆերենցիան, այնտեղ լուծեց այն բոլոր կարևորագույն հարցերը, վորոնք վաղուց արդեն լուծում են պահանջում, ստեղծեց ռուսական կկ և առհասարակ ամենայեռանդուն քայլերն արավ կուսակցության քայքայված կենտրոնական ապարատը վերականգնելու համար:

Ավելի քան յերեք տարի յե անցել կուսակցական վերջին կոնֆերենցիայի

1 Բերվում է «Ծանուցման» առաջին մասը միայն:—Խմբ.:

ժամանակվանից: Մոտ 4 տարի յե անցել այն ժամանակվանից, յերբ վերջին անգամ Ռուսաստանում գումարվեց կուսակցության կկ-ն: Ավելի քան յերկու տարի կկ-ն բոլորովին չի գործել: Հազիվ թե չափազանցություն լինի, յեթե ասենք, վոր այս յերեք տարիները մեր կուսակցության համար ամենածանր տարիներ են յեղել այն ժամանակվանից, յերբ ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան կազմավորվեց վորպես վորոշակի կազմակերպություն: Հակահեղափոխության ծա՛նր տարիներ: Հունիսի 3-ի մարդկանց հաղթանակի մռա՛յլ դարաշրջան: Վորքա՛ն հալածանքներ, վորքա՛ն հարվածներ բանվոր դասակարգին դրսից, վորքա՛ն դավաճանություններ և յերերումներ՝ ներսից: Արյունարբու բռնակալների սանձարձակություն, լայն տարածված բուրժուական ռեակցիա, վորն իր մեռյալ գրկում խեղդում էր կենդանի ամեն ինչ և վորը մի կողմից դիպել էր նույնիսկ բանվորական շարժմանը հարող միքանի շրջանների, ուրացողության, հիասթափությունների, պրովոկացիաների համաճարակ—ահա թե ինչո՛վ նշանավոր դարձան 1908 և 1909 թվականները: Ցեվ միայն 1910 թվին մարդիկ սկսեցին մի փոքր ազատ շունչ քաշել:

Հասարակական-քաղաքական այսպիսի պայմաններն ամենից քիչ կարող եյին աջակցել բանվորական կուսակցության ուժեղացմանը: Պրոլետարիատից վրեժխնդիր էյին լինում հակահեղափոխության բոլոր ուժերը, զգալով, վոր այս թշնամին ջախջախված է, բայց չի պարտված, ճնշված է, բայց չի կոտրված.—վոր նա նորից ու նորից կուղղվի, ցարական միապետությանն է՛լ ավելի ծանր հարվածներ հասցնելով, պայքարի հանելով ճնշված, տանջված և բզկտված գյուղացիության է՛լ ավելի լայն մասսաները: Ցեվ այժմ, յեթե հետ նայելու լինենք, յեթե համեմատենք այն, ինչ մեզ մոտ յեղել է, այն բանի հետ, ինչ յեղել է Ցեվրոպայում 1848 թվից հետո, կամ այն բանի հետ, ինչ ապրել է, որինակ, ֆրանսական բանվորական շարժումը Կոմունայի ջախջախումից հետո,—ապա պետք է զարմանալ վոչ թե այն բանի վրա, վոր մեզ մոտ քայքայում է յեղել, այլ այն բանի վրա, վոր մենք համեմատաբար այսպես շուտ ենք սկսում նորից վոտքի կանգնել:

Անվթար են մնացել վոչ միայն ռուսաստանյան ս.-դ. դրոշը, նրա ծրագիրը, նրա հեղափոխական ավանդները, անվթար է մնացել նրա կազմակերպությունը, վորին հալածանքը կարող էր խախտել և թուլացնել, բայց վորին չէր կարող հիմնահատակ անել վոչ մի հալածանք: Պրոլետարիատը կապիտալիստական հասարակության մեջ անհրաժեշտ է, վորովհետև այդ հասարակությունն ի վիճակի չէ պահվել առանց ավելացնելու պրոլետարների թիվը, առանց բարձրացնելու նրանց համախմբվածությունը և հակահարված տալու ընդունակությունը: Ցեվ վորքան էլ արգելակեն Ռուսաստանի կապիտալիստական զարգացումը Ռոմանովներն ու Պուրիշկևիչները, վորքան էլ նրանք այլանդակեն այն, սակայն կանգնեցնել այն նրանք ի վիճակի չեն:

Բանվորական գործադուլները վերածնվող դարնան առաջին ծիծեռնակներն էյին: Ցեվ անհապաղ մեր կուսակցությունն էլ սկսեց կազդուրվել ռեակցիայի կողմից նրան հասցրած վերքերից, անհապաղ սկսեց իր շարքերը հավաքել և խնամքով ժողովել այն ամենը, ինչ պետքական է պայքարի համար, կենդանի ամեն ինչ, սոցիալ-դեմոկրատական մեր կարմիր դրոշին հավատարիմ մնացած ամեն ինչ:

Բանվորների լայն մասսաների տրամադրությունն ակնհայտորեն դեպի լավն է փոխվում: Սրա ամենալավ ապացույցը նորերս տեղի ունեցած բան-



վորական միտինգներն են: Ահա արդեն հինգերորդ տարին է, վոր II Դումայի մեր բանվոր ս.-դ. պատգամավորները գտնվում են ցարական տաժանավայրում: 1907 թվի նոյեմբերի 22-ի գործադուլից հետո, վորը 1905—1906 թվականների հեղափոխական շարժման վերջին ցայտյունն էր, Ռուսաստանի բանվորներն ամբողջ 4 տարի լռել են: 4 յերկար տարիներ մեր առաջավոր մարտիկները, մեր լավագույն ընկերները տանջվել են տաժանակիր բանտերում, իսկ բանվորներն իրենց մեջ բողոքի ուժ չեն գտել: Այժմ այդ տանջալից և լարված լռությունը խախտված է: Տասնյակ-հազարավոր բանվորներ իրենց միտինգներում, վորոնք կազմակերպվել են՝ չնայած կառավարության բոլոր հալածանքներին, սկսել են խոսել: Նրանք սկսել են խոսել այն մասին, վոր նրանք առաջվա նման հավատարիմ են հեղափոխության և սոցիալիզմի դրոշին, վոր հակահեղափոխական աղետալի տարիները չեն կոտրել նրանց, վոր պայքարի վոգին կենդանի յե Ռուսաստանի բանվոր դասակարգի մեջ, վորը յեղել է և մնում է հեղափոխական շարժման առաջնորդը... Ցեվ պատահական չէ, վոր Ռուսաստանի տասնյակ-հազարավոր պրոլետարների սրտերը վառվեցին հենց այն ժամանակ, յերբ տաժանակիր զնդաններից յերևաց II Դումայի ս.-դ. պատգամավորների հերոսական ստվերը: II Դումայի մեր ֆրակցիան գեղեցիկ, պանծալի մի եջ է գրել մեր շարժման պատմության մեջ: Այդ ֆրակցիան բանվորական մասսաների մտքում դրոշմվել է վորպես վերջին հեղափոխական այն ջոկատը, վորը խիզախորեն պաշտպանում էր մեր դրոշը հենց թշնամիների բանակում: Ցեվ յերբ այժմ մասսաների մեջ, տասնյակ և տասնյակ-հազարավոր շարքային բանվորների մեջ կենդանանում է այդ պանծալի ջոկատի հիշատակը, այդ նշանակում է, վոր կենդանանում է հետաքրքրությունը դեպի հեղափոխական պայքարը, վոր քնածությունը սկսում է անցնել, վոր կրիտիկական մոմենտը անցել է, վոր պրոլետարը նորից ուղղում է մեջքը:

Բանվորների առաջավոր շարքերը զարթնել են: Միայն այդ պատճառով մեր կուսակցությանը հաջողվեց լուծել քայքայման, կազմալուծման, հուսահատության, ցրվածության տարիներից հետո ուժերը հավաքելու վոչ հեշտ խնդիրը: Առաջներն էլ փորձեր են յեղել կուսակցական կոնֆերենցիա գումարել և դրանով իրագործել առաջին քայլը յերկրի սոցիալ-դեմոկրատական գումարման գործում: Այդ փորձերը չէյին հաջողվում: Նրանք ամենից առաջ ջախջախվում էյին, բախվելով բանվորական մասսաների անտարբերությանը: Այժմ այդպես չէ: Բանվորները, վորոնք ամեն տեղ և ամենուրեք իրենք են ղեկավարում տեղական ս.-դ. աշխատանքը, սկսել են շարժվել: Նրանք սկսել են որըստորե ավելի ու ավելի սուր կերպով զգալ իրենց ս.-դ. բանվորական կուսակցությունը վորպես համառուսաստանյան կազմակերպություն վերականգնելու և ամրապնդելու անհրաժեշտությունը:

Անհնարին է այլևս սահմանափակվել առանձին, իրարից մեկուսացած գործող ս.-դ. խմբակներով: Անհրաժեշտ է համախմբվել և կազմել ամուր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ յուրաքանչյուր քաղաքում, անհրաժեշտ է նորից միավորել Ռուսաստանի բոլոր քաղաքների ս.-դ. կազմակերպությունները մի միասնական կենտրոնացած կուսակցության մեջ: Այս միտքն սկսել է աննահանջ կերպով ծակել առաջավոր ս.-դ. բանվորների ուղեղը: Ցեվ այստեղից էլ ծնվեց՝ մեր կուսակցության հենց նոր վերջացած համառուսաստանյան կոնֆերենցիան—մի կոնֆերենցիա, վորն անշուշտ նույն-

պիտի հսկայական նշանակություն ունենա Ռ.Ս.-Դ.Բ.Կ. համար, ինչպես նրա ամենակարևոր կուսակցական համագումարները:

Համակուսակցական կոնֆերենցիայի գումարումը բացահայտորեն ճանաչվեց վորպես միակ յելքը կուսակցության ճգնաժամից դուրս գալու և ի լուր ամենքի հռչակվեց վերջնականապես և ձևականորեն 1911 թվի հունիսին: Ռուսաստանում վոչ մի ս.-դ. խմբակ չկա, վորին հասած չլինի կոնֆերենցիայի լուրը և այնտեղ գալու կոչը: Բոլոր քիչ թե շատ նշանակալից և ամուր կազմակերպություններում զեկուցումներ են արվել կոնֆերենցիայի մասին: Յեվ տեղական կազմակերպությունները, հակառակ վոստիկանության կատաղի հալածանքներին, ստեղծել են Ռուսաստանյան կազմակերպական իրենց հանձնաժողովը: Նրա մի շարք լավագույն անդամներին և ամենանվիրված աշխատողներին ձերբակալությունները սրբեցին տարան, բայց նրանց գործը ցարիզմին չհաջողվեց ավերել:

Կոնֆերենցիան գումարվել է, և այդ կոնֆերենցիայում ներկայացված է յեղել այն ամենը, ինչ քիչ թե շատ լուրջ և ազդեցիկ է Ռուսաստանի ս.-դ. կուսակցական աշխատանքի բնագավառում:

*ВКП (б) в резолюциях,*
հ. I, էջ 182—183»



# ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

1907 թ.

ՀՈՒՆԻՍ

Լույս հունիսի 3-ի գիշերը ձերբակալվում են Պետական դումայի սոցիալ-դեմոկրատական պատգամավորները:

Հրաման II Պետական դուման ցրելու մասին և նոր ընտրական օրենքի հրապարակումը («Հունիսի 3-ի կանոնադրությունը»):

3 հունիսի: Ապստամբության փորձ Սևծովյան նավատորմում «Տրի սվյատիտելյա» և «Սինոպ» զրահակիրների վրա:

5 հունիսի: ՌՍԴԲԿ Պետերբուրգի համաքաղաքային կոնֆերենցիան Տերիոկիում: Քննարկվում եր այն հարցը, թե ինչպես հակազդել Պետական դումայի ցրմանը և սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի ձերբակալությանը: «Անմիջական գործադուլի» առաջարկը մերժվում է:

ՀՈՒԼԻՍ

27 հունիսի—15 հուլիսի: Գործադուլ Որեխովո-Զույեվոյի Նիկոլսկայա մանուֆակտուրայում: Դաժան վոստիկանական ռեպրեսիայով ուղեկցված գործադուլային շարժումը դադարեց, կրելով պարտություն:

8—14 հուլիսի: ՌՍԴԲԿ Պետերբուրգի համաքաղաքային կոնֆերենցիան Տերիոկիում: Այս կոնֆերենցիայում հանդես յեկավ Լենինը III Դումայի բոյկոտի դեմ ուղղված ճառով:

Հուլիսի 20-ից հետո: Լույս տեսավ Լենինի «Բոյկոտի դեմ» բրոշյուրը:

21—23 հուլիսի: ՌՍԴԲԿ յերկրորդ համառուսաստանյան կոնֆերենցիան:

3—28 հուլիսի: Մանածագործների գործադուլը Կոստրոմայի Միխինի, Զոտովի, Կաշինի և այլ. գործարաններում:

ՕԳՈՍՏՈՍ

5—11 օգոստոսի: Շտուտգարտում VII Միջազգային սոցիալիստական կոնգրեսը ՌՍԴԲԿ ներկայացուցիչների մասնակցությամբ: Լենինը—ՌՍԴԲԿ ԿԿ-ի կողմից պատվիրակ—կազմակերպում է կոնգրեսի ձախ տարրերին և ուղղումներ է մտցնում միլիտարիզմի ու պատերազմի վերաբերյալ Բեբելի ցենտրիստական բանաձևի մեջ, վորոնք սոցիալիստական կուսակցություններին պարտավորեցնում են կիրառել պայքարի հեղափոխական մեթոդներ պատերազմի դեմ և պատերազմի ստեղծած ճգնաժամն օգտագործել բուրժուազիայի տապալումն արագացնելու համար: Միաժամա-

նակ տեղի է ունենում կանանց I Միջազգային սոցիալիստական կոնֆերենցիան:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

2 սեպտեմբերի: Կայացավ ՌՍԴԲԿ Պետերբուրգի համաքաղաքային կոնֆերենցիան: Լսվում է Շտուտգարտում տեղի ունեցած Միջազգային սոցիալիստական կոնգրեսի վերաբերյալ զեկուցումը: Ընտրվում է ՊԿ-ի նոր կազմը:

6 սեպտեմբերի: Պետերբուրգի ռազմա-շրջանային դատարանում լսվեց ՌՍԴԲԿ ԿԿ-ին կից ռազմական կազմակերպության գործը:

30 սեպտեմբերի: Պետական դումայի ընտրությունները Պետերբուրգում ըստ բանվորական կուրիայի: ՌՍԴԲԿ Կենտրոնական կոմիտեի կողմից հաստատվում է բոլշևիկ Ն. Գ. Պոլետաևի թեկնածությունը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

16—17 հոկտեմբերի: Ապստամբության փորձ Վլադիվոստոկում ականային գումարտակում, որին հարեցին նավահանգստի բանվորները: Քաղաքը ռմբակոծվեց «Սկորի» ականակրից: Լույս հոկտեմբերի 25-ի գիշերը ՌՍԴԲԿ ԿԿ-ի տեխնիկական կազմակերպության բռնվելը:

27 հոկտեմբերի: ՌՍԴԲԿ Պետերբուրգի կազմակերպության կոնֆերենցիան: Զեկուցումներով «Երրորդ Դումայի մասին» և «Բուրժուական մամուլի մեջ սոցիալ-դեմոկրատների մասնակցության մասին» հանդես եկավ Լենինը:

ՆՈՅԵՄԲԵՐ

1 նոյեմբերի: III Պետական դումայի բացումը: Պատգամավորների մեջ են՝ 146 աջեր, 141 օկտյաբրիստներ, 53 կադետներ, 15 տրուդովիկներ և 19 սոցիալ-դեմոկրատներ:

Նոյեմբերի առաջին օրերը: Լենինը մասնակցում է Կենտրոնական կոմիտեի անդամների նախնական խորհրդակցությանը պատվիրակ—բոլշևիկների հետ, որոնք լինել էին III Համառուսաստանյան կոնֆերենցիային (կուսակցության ԿԿ-ի և դումայական ֆրակցիայի հարցը):

5—12 նոյեմբերի: ՌՍԴԲԿ III Համառուսաստանյան կոնֆերենցիան Ֆինլանդիայում (Հելսինգֆորսում): Լենինը հանդես է գալիս III Դումայի բոյկոտի դեմ:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Նոյեմբերի վերջը—դեկտեմբերի սկիզբը: Լենինը մեկնում է Կուոկկալայից, թաքնվելով ոստիկանությունից Օգլբյուում (Ֆինլանդիա):

Դեկտեմբեր: Լենինն ավարտում է «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թ. թ. առաջին ռուսական հեղափոխության մեջ» աշխատությունը:

Դեկտեմբերի երկրորդ կեսը: Լենինն Օգլբյուից գաղթում է արտասահման, Ժնև:

19 դեկտեմբերի—4 փետրվարի 1908 թ.: Գործադուլ Բաքվում, Բաքվի նավ-



թային ընկերության և ուր. հանքերում: 8-ժամյա բանվորական օրվա պահանջ, ռոճկի ավելացում և այլն:

1908 թ.

ՓԵՏՐՎԱՐ

19 փետրվարի—4 մարտի: Գործադուլ Բաքվում Խատիսովի՝ Սև քաղաքի գործարաններում:

ՄԱՐՏ

18 մարտի: Լենինի ելույթը ՌՍԴԲԿ անունից մի ճառով Փարիզի կոմունայի նշանակության մասին Ժնևի ինտերնացիոնալ միտինգում, նվիրված երեք տարեդարձների—Կ. Մարքսի մահվան 25-ամյակին, 1848 թ. հեղափոխության 60-ամյակին և Փարիզի կոմունային:

25 մարտի: Ընկեր Ստալինի ձերբակալությունը. վեցամսյա բանտարկությունից հետո նրա աքսորումը Սոլվիչեգոդսկ: Միքանի ամիս աքսորավայրում մնալուց հետո Ստալինը փախչում է աքսորավայրից և վերադառնում Բաքու անլեգալ աշխատանքի:

ԱՊՐԻԼ

Ապրիլի երկրորդ կեսը: Լենինն ապրում է Կապրի կղզու վրա Ա. Մ. Գորկու մոտ: Ա. Բոգդանովի, Վ. Բազարովի և ուր. առաջարկն «Очерки философии коллективизма» ժողովածուն հրատարակելու: Լենինը հրաժարվում է մասնակցել, հայտնելով հրատարակության նախաձեռնողների հետ ունեցած իր անպայմանական տարակարծության մասին փիլիսոփայության հարցերի շուրջը: Լենինի առաջարկը՝ գրելու կոլեկտիվ կերպով հեղափոխության պատմությունն ի հակակշիռ լիկվիդատորական «Пятитомник»-ի՝ մերժվում է Ա. Բոգդանովի ու Վ. Բազարովի կողմից:

ՄԱՅԻՍ

1 մայիսի: Մայիսի 1-ի տոնումը Ռուսաստանում: Պետերբուրգում գործադուլ արին մինչև 20 հազ. բանվորներ, Մոսկվայում—մինչև 16 հազ.: Մասնակի գործադուլներ Եկատերինբուրգում, Կերչում, Նովոչերկասկում, Ռևելում, Սարատովում, Սմոլենսկում և ուրիշ քաղաքներում:

ՕԳՈՍՏՈՍ

Լենինը Բրիտանական թանգարանում (Լոնդոն) աշխատում է «Материализм и эмпириокритицизм» գրքի վրա:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Լենինն ավարտում է «Материализм и эмпириокритицизм» գրքի վրա կատարված աշխատանքը:

28 սեպտեմբերի: Միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստը Բրյուսելում: Լենինի մասնակցությունը Բրյուսելի Միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստում: Լենինը հանդես է գալիս Կ. Կաուցկու՝ միջազգային սոցիալիստական կոնգրեսներում անգլիական բանվորական կուսակցության մասնակցություն ունենալու հարցի վերաբերյալ բանաձևը քննարկելիս և դեմ է արտահայտվում Ռուսաստանի սիոնիստ-սոցիալիստներին Ինտերնացիոնալի մեջ ընդունելուն:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

31 հոկտեմբերի: Գործադուլ Պետերբուրգի էլեկտրոկայանում: Գործադուլավորներին փոխարինում են զինվորական ծովայինները:

**ԴԵԿՏԵՄԲԵՐ**

2 դեկտեմբերի: *1500 բանվորների արձակումը Նիկոպոլ-Մարիուպոլսկի գործարանում:*

10—12 դեկտեմբերի: *Կանանց I համագումարը Պետերբուրգում պատվիրակուհի-բանվորուհիների մասնակցությամբ:*

Դեկտեմբերի կեսերը: *Լենինը տեղափոխվում է Ժնևից Փարիզ, ուր փոխադրվում է նաև* «Пролетарий»*-ի խմբագրությունը:*

21 դեկտեմբերի: *Կայացավ ՌՍԴԲԿ ԿԿ-ի պլենումը Փարիզում ՌՍԴԲԿ Համառուսաստանյան կոնֆերենցիայի բացումից առաջ:*

21—27 դեկտեմբերի: *ՌՍԴԲԿ Համառուսաստանյան կոնֆերենցիան Փարիզում, վորն անցավ բոլշևիկների գաղափարական ազդեցության տակ: Լենինը հանդես յեկավ զեկուցումով «Ժամանակակից քաղաքական դրության և կուսակցության խնդիրների մասին»:*

27—29 դեկտեմբերի: *ՌՍԴԲԿ ԿԿ-ի պլենումը Փարիզում: Հաստատվում են ՌՍԴԲԿ Համառուսաստանյան կոնֆերենցիայի բանաձևերը: Կազմվում է* «Социал-Демократ» *ԿՕ-ի նոր խմբագրությունը: Լենինը մասնակցում է պլենումի աշխատանքներին և ընտրվում ԿՕ-ի խմբագրության մեջ:*

1909 թ.

**ՀՈՒՆՎԱՐ**

28 հունվարի: *Հրապարակվում է Լենինի «Ճանապարհի վրա» հոդվածը* «Социал-Демократ»*-ի № 2-ում, վորտեղ Լենինը տալիս է հեղափոխության ջախջախումից հետո կուսակցության մեջ գոյություն ունեցող գաղափարական-քաղաքական տարընթացության հանրագումարները և նշում կուսակցության գործնական կազմակերպական խնդիրները ռեակցիայի պայմաններում:*

**ՓԵՏՐՎԱՐ**

12 փետրվարի: *Բոլշևիկյան կենտրոնը* «Пролетарий»*-ի № 2-ում բացահայտորեն սկսեց վճռական պայքար մղել աստվածակառուցման դեմ:*

**ՄԱՅԻՍ**

1 մայիսի: *Մայիսմեկյան գործադուլ Մոսկվայի մի քանի (այդ թվում 5 խոշոր) մեխանիկական գործարաններում և բոլոր տպարանային ձեռնարկություններում:*

**ՀՈՒՆԻՍ**

21—30 հունիսի: *Լենինը ղեկավարում է* «Пролетарий»*-ի ընդլայնած խմբագրության խորհրդակցությունը: Խորհրդակցությունն ընդունում է բանաձևեր՝ առաջարկված Լենինի կողմից ոտզովիզմի և ուլտիմատիզմի ու բոլշևիկների՝ վորպես լիկվիդատորության և կուսակցությանը թշնամի ուրիշ հոսանքների դեմ պայքարելու գծով ՌՍԴԲԿ մեջ գոյություն ունեցող հեղափոխական թևի՝ հիմնական խնդիրների վերաբերյալ հարցի նկատմամբ: Ա. Բոգդանովի վտարումը բոլշևիկյան կուսակցությունից:*

**ՕԳՈՍՏՈՍ**

17 օգոստոսի: *Լենինը գրում է Կապրիի դպրոցի ունկնդիրներին յերկրորդ-*



*վող հրավերի պատասխանը՝ գնալ դասախոսություններ կարդալու, շարադրելով իր հայացքներն ոտզովիստների ու աստվածակառուցողների խմբի մասին:*

**ՀՈԿՏԵՄԲԵՐ**

20—21 հոկտեմբերի: «Социал-Демократ»*-ի խմբագրությունը, վորի կազմի մեջ մտնում եյին մենշևիկների ու լեհերի ներկայացուցիչները, մերժում է Լենինի հոդվածը՝ «Մեր կուսակցությունը և նրա միասնականությունն ամրապնդելու մեթոդների մասին»: Սրա կապակցությամբ Լենինը խմբագրության նույն նիստին մտցնում է բանաձևի նախագիծ «յերկու ֆրոնտում պայքարելու» անհրաժեշտության մասին—լիկվիդատորության դեմ աջից և «ձախից» ու «ամենից ավելի ուժեղ և ազդեցիկ ֆրակցիաների» (բոլշևիկների ու մենշևիկ-կուսակցականների) ձուլման մասին: Նախագիծը խմբագրության մեծամասնության կողմից մերժվում է:*

22 հոկտեմբերի: *Լենինի հայտարարությունը կենտրոնական որգանի խմբագրությունից իր դուրս գալու մասին և պահանջը՝ հրապարակելու* « Социал-Демократ »*-ում այս հայտարարությունը «յերկու ֆրոնտում պայքարելու» վերաբերյալ բանաձևի նախագծի հետ միասին, վորը խմբագրության կողմից նախընթաց օրը մերժվել եր:*

**ՆՈՅԵՄԲԵՐ**

2 նոյեմբերի: *Վ. Ի. Լենինը, Ի. Դուբրովինսկին և Վ. Տարատուտան ԿԿ-ի Արտասահմանյան բյուրոյին հայտարարություն ուղարկեցին մերձավոր ժամկետում ՌՍԴԲԿ ԿԿ-ի պլենումը հրավիրելու անհրաժեշտության մասին: Կապրիի դպրոցից հեռացվում են 5 ունկնդիր-լենինյաններ: Հեռացվածները մեկնեցին Փարիզ, վորտեղ լսեցին բոլշևիկյան կենտրոնի կազմակերպած դասախոսությունների ցիկլը և 1909 թ. դեկտեմբերին վերադարձան Ռուսաստան:*

3 նոյեմբերի: *Լենինի նամակն Ա. Մ. Գորկուն Կապրիի դպրոցի հանդեպ ունեցած իր վերաբերմունքի մասին, Ռուսաստանում հեղափոխական շարժման զարգացման հեռանկարների մասին՝ Ա. Մ. Գորկու գրական գործունեության գնահատականով:*

13 նոյեմբերի: *ՌՍԴԲԿ Մոսկվայի մարզային բյուրոն հայտարարեց Կապրի կղզու վրա գտնվող դպրոցի համար իր վրայից ամեն մի պատասխանատվություն վերցնելու մասին և աշակերտներին առաջարկեց անհապաղ Փարիզ փոխադրվել:*

*Լենինը դպրոցից հեռացված 5 կապրիականների համար դասախոսություններ է կարդում 1) «Ժամանակակից մոմենտը և մեր խնդիրները», 2) «Ստոլիպինի ագրարային քաղաքականությունը» թեմայի շուրջը:* «Пролетарий»*-ի № 50-ի հավելվածում հրապարակվում է «Հաշվետվություն N N-ում» (Կապրի կղզու վրա) «գտնվող դպրոցի մասին», կազմված հեռացված աշակերտ-լենինյանների կողմից:*

*ՌՍԴԲԿ ՄԿ-ն մերժեց նպաստ տալ Կապրիի դպրոցին:*

**ԴԵԿՏԵՄԲԵՐ**

13 դեկտեմբերի: *Ձերբակալվում է Յա. Մ. Սվերդլովը ՌՍԴԲԿ ՄԿ-ի նիստին:*

15 դեկտեմբերի: Ա. Բոգդանովը և Վ. Շանցերը (Մարատը) 16 ունկնդիրների ու ագիտատորների անունից ՌՍԴԲԿ ԿԿ-ին հաղորդեցին «Վպերյոդ» անունով համախոհների մի խումբ կազմելու մասին, խնդրելով հաստատել այն վորպես գրական-հրատարակչական մի կազմակերպություն և ուղարկեցին խմբի պլատֆորման—«Ժամանակակից դրությունը և կուսակցության խնդիրները»:

Փարիզ ուղևորվեցին Կապրիի դպրոցի մնացած աշակերտները լրացուցիչ դասախոսություններ լսելու համար:

16 դեկտեմբերի: Լույս տեսավ «Звезда» լրագրի № 1-ը—սկզբում բոլշևիկների ու մենշևիկ-կուսակցականների օրգան, իսկ հետո բացառապես բոլշևիկյան: Ղեկավար դերը «Звезда»-յում պատկանում եր ընկեր Ստալինին, վորն աքսորավայրից փախել եր Պետերբուրգ կուսաշխատանքի:

1910 թ.

## ՀՈՒՆՎԱՐ

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության և ուրիշ նարոդնիկական խմբերի անկումը:

2—23 հունվարի: ՌՍԴԲԿ ԿԿ-ի պլենումը Փարիզում: Լենինը մասնակցում է պլենումի աշխատանքներին: Լենինը պայքար է մղում հաշտվողականների (Կամենև, Ռիկով և ուր.) դեմ: Պլենումը Լենինին ընտրեց «Социал-Демократ» ԿՕ-ի խմբագրության անդամ և ՌՍԴԲԿ ներկայացուցիչ ՄՍԲ-ում: Լույս տեսավ վպերյոդականների «Ընկեր բոլշևիկներին» նամակը, վորն ուղղված եր բոլշևիկյան կենտրոնի դեմ և պարունակում եր ՌՍԴԲԿ ԿԿ-ի հունվարյան պլենումի վորոշումների քննադատությունը: Հունվարյան համաձայնության վիժեցումը լիկվիդատորների կողմից:

## ՓԵՏՐՎԱՐ

4 փետրվարի: ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն բանաձև ընդունեց մոտալուտ համակուսակցական կոնֆերենցիայի մասին, վորի (բանաձևի) մեջ կատեգորիկ կերպով դեմ արտահայտվեց լիկվիդատորներին կոնֆերենցիային թողնելուն:

15 փետրվարի: Լիկվիդատորներ Վ. Ա. Իսուվը (Միխայիլ), Կ. Մ. Յերմոլայևը (Ռոման) և Պ. Ա. Բրոնշտեյնը (Յուրի) հրաժարվեցին մտնել ՌՍԴԲԿ ԿԿ-ի ռուսական կոլեգիայի կազմի մեջ, հայտարարելով ԿԿ-ի բուն իսկ գոյությունը վնասակար:

## ՄԱՐՏ

7 մարտի: Լենինը հանդես յեկավ ընդդեմ հաշտվողականների և հօգուտ միավորման մենշևիկ-կուսակցականների հետ ՌՍԴԲԿ աջակցության բոլշևիկյան խմբի ժողովին Փարիզում, ԿԿ-ի պլենումի վերաբերյալ զեկուցումը քննարկելիս:

## ԱՊՐԻԼ

Կազմակերպվեց և աշխատանքի անցավ ՌՍԴԲԿ ԿԿ-ի ռուսական կոլեգիան Ի. Վ. Ստալինի, Վ. Պ. Նոգինի, Ի. Ֆ. Դուբրովինսկու կազ-



մով: Շուտով հետևեցին ձերբակալություններ: Հետագա բոլոր փորձերը՝ վերականգնելու ռուսական կոլեգիան՝ չեյին հաջողվում:

23 ապրիլի: Պարսկաստանում վերականգնվում է սահմանադրությունը և նշանակվում մեջլիսի գումարում:

## ՄԱՅԻՍ

1 մայիսի: Մայիսմեկյան գործադուլ Մոսկվայում Վեստինգհաուզի, Ցինդելի, Բրոմլեյի, Աբրիկոսովի, Գյուբների մոտ և շատ տպա-վիմագրատներում: Միտինգներ Պետերբուրգում: Գործադուլներ Նիկոլաևի նավաշինարարական գործարաններում:

Կազանում կայացան մի քանի մայովկաներ ծայրամասերում:

Գյուղացիական շարժում Չերնիգովի նահանգի Գորոդնյայի գավառում ագարակների վրա բնակություն հաստատելու կապակցությամբ: Տեղի ունեցավ ընդհարում զորքերի հետ:

## ՀՈՒՆԻՍ

Նովոչերկասկում Ազովյան ածխային ընկերության 400 ածխահանների գործադուլը աշխատավարձի իջեցման հողի վրա: Շարունակվեց չորս օր և վերջացավ բանվորների հաղթությամբ:

Նիկոլաևում նավաշինարարական գործարանի մեխանիկական արհեստանոցի բանվորների գործադուլն աշխատանքի պայմանների վատթարացման ու աշխատավարձի սիստեմատիկ իջեցման հողի վրա: 4 հազ. հողահանների գործադուլն Ամուրյան յերկաթուղու վրա չափազանց ցածր աշխատավարձի հողի վրա:

ՌՍԴԲԿ ԿԿ-ի ծանուցումը կուսակցական դպրոցի կազմակերպման մասին:

## ՀՈՒԼԻՍ

Գործադուլ Նիժնեդնեպրովսկի Գանտկեյի մետալուրգիական գործարանում: Վերջացավ բանվորների հաղթությամբ. գնահատությունները բարձրացվեցին, արձակված մոտ հազար բանվորներ հետ ընդունվեցին:

## ՕԳՈՍՏՈՍ

13—14 օգոստոսի: Կանանց II Միջազգային սոցիալիստական կոնֆերենցիան Կոպենհագենում:

15—21 օգոստոսի: II Ինտերնացիոնալի կոնգրեսը Կոպենհագենում: Լենինը հանդես է գալիս կոոպերատիվների հարցի վերաբերյալ հանձնաժողովում և կազմակերպում է II Ինտերնացիոնալում գտնվող ձախերի խորհրդակցությունն օպորտունիզմի ու ցենտրիզմի դեմ պայքարելու համար: Վ. Ի. Լենինի խորհրդակցությունը մի շարք բոլշևիկների հետ «Рабочая Газета»-յի ու «Звезда»-յի կազմակերպման հարցի առթիվ:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

Գործադուլային ալիք Վարշավայում. 600 հացթուխներ գործադուլ արին 5 շաբաթ, 50 խոզանակագործներ—7 օր, 60 կազմարարներ—6 օր, 900 կողովագործներ—մի քանի օր, յերկաթե մահճակալի գործա-

ռանի 265 բանվորներ—18 որ, շինարարական ցեխի 500 հյուսներ—8 որ:

Հրդեհների լայն տարածումը գյուղում: Գյուղացիներն այրում էյին կուլակներին, ագարակարնակներին, հատվածայինավորներին, կալվածատերերին:

4—5 սեպտեմբերի: Կոպենհագենում կայացավ սոցիալիստական յերիտասարդության Միջազգային կոնֆերենցիան:

Գործադուլների ալիք. Տեյկովայի Կարետնիկովների գործարանում գործադուլ արին 5 հազ. բանվորներ, Կինեշմայի Սեվրյուգովի գործարանում—3 հազ., Վարշավայի «Վուլկան» գործարանում—1700:

480 բանվորի գործադուլն Օրեխովո-Զույեվոյի Զիմինների մանածագործարանում:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

8 հոկտեմբերի: Մոսկվայի օկրուգի զորքերի հրամանատարը Մ. Վ. Ֆրունզեյի մահվան դատավճիռը փոխարինեց վեցամյա, իսկ Պ. Գուսեվինը՝ ութամյա տաժանակրությամբ:

## ՆՈՅԵՄԲԵՐ

7 նոյեմբերի: Մեռավ գրող Լ. Ն. Տոլստոյը:

11—12 նոյեմբերի: Ցույցեր Պետերբուրգում Լ. Ն. Տոլստոյի մահվան առթիվ: Մասնակցում էյին 10 հազ. մարդ: Պուտիլովի գործարանի բանվորները 1080 ստորագրություններով մի հայտարարություն ուղարկեցին Պետական դումայի ս.-դ. ֆրակցիային այն մասին, թե իբրև լավագույն պսակ Լ. Ն. Տոլստոյի դերեզմանի վրա կծառայի մահվան պատժի անմիջական վերացումը:

20 նոյեմբերի: Բոլոնյայի դպրոցի ունկնդիրներին ուղղած նամակում Լենինը հաղորդում է իր՝ ագրարային հարցի շուրջը դասախոսություններ կարդալու համար Բոլոնյա ուղևորվելուց հրաժարվելու մասին դպրոցի ֆրակցիոն բնույթի պատճառով, մտադրվելով ղրադմունքները փոխադրել Փարիզ:

## 1911 թ.

## ՀՈՒՆՎԱՐ

31 դեկտեմբերի (13 հունվարի): Ստալինի նամակը Լենինին Սոլվիչեգոդսկից աքսորավայրից լիկվիդատորների, տրոցկիստների դեմ պայքարելու մասին և բոլշևիկների՝ մենշևիկ-կուսակցականների հետ բլոկ կազմելու անհրաժեշտության մասին: Լույս տեսավ «Социал-Демократ»-ի № 19—20-ին կցած առանձին հավելվածով Վ. Ի. Լենինի «Գործերի դրության մասին կուսակցության մեջ» հոդվածը:

19 հունվարի: Գործադուլ Պետերբուրգի Պինտշի գործարանում, վորն (գործադուլն) առաջ եր յեկել բանվորների նյութական դրության վատթարացումից: Բանվորների պահանջները չբավարարվեցին:

## ԱՊՐԻԼ

Լենինը բոլշևիկների—ԿԿ-ի անդամների—մասնավոր խորհրդակցության ժամանակ առաջարկում է վերակազմել ԿԿ-ի Արտասահմանյան բյուրոն և անհապաղ ձեռնամուխ լինել ԿԿ-ի պլենումի հրավիրմանը:



22 ապրիլի: 2 հազ. մարդու միտինգը Պուտիլովի գործարանում: Ընդունվեց բողոքի բանաձև ընդդեմ բանվորական կազմակերպությունների հետապնդման և ընդդեմ բանվորների ապահովագրման կառավարական օրինագծի:

23 ապրիլի: Բանվորական ցույց Վասիլյեվսկի կղզու վրա Պետերբուրգում ընդդեմ կառավարական օրինագծերի՝ բանվորների ապահովագրման մասին: Մասնակցում էյին մոտ հազար հոգի:

## ՄԱՅԻՍ

12 մայիսի: Լենինը «Дискуссионный листок»-ի 1911 թ. մայիսի 12-ի № 3-ում զետեղեց «Ռուսաստանում մղվող ներկուսակցական պայքարի պատմական իմաստը» հոդվածը՝ գրված 1910 թ. վերջին, Տրոցկու և Մարտովի « Neue Zeit »-ի 1910 թ. սեպտեմբերի 9-ի և 16-ի № 50 ու 51-ում տպագրած հոդվածների առթիվ:

14 մայիսի: Լենինի դիմումն արտասահմանում ապրող ԿԿ-ի բոլոր անդամներին, թե անհրաժեշտ է, վոր նրանք իրենց վրա վերցնեն ԿԿ-ի պլենումը հրավիրելու աշխատանքը, նկատի առնելով, վոր ԿԿ-ի ռուսական Բյուրոն բռնվել է և ԿԿ-ի Արտասահմանյան բյուրոն մերժել է իր
կողմից Կենտրոնական կոմիտեյի պլենումը հրավիրելու առաջարկը:

29 մայիսի: Ստորագրվեց ստոլիպինյան օրենքը հողաշինարարության մասին:

## ՄԱՅԻՍ—ՀՈՒՆԻՍ

Մոսկվայի Բրոմլեյի մեքենակառուցողական գործարանի 1200 բանվորների, Կուզնեցովի ճենապակու-հախճապակու գործարանի (Վլադիմիրի նահանգ) 2 հազ. բանվորների, հնձող մեքենաների գործարանի (Լյուբերցի) 1500 բանվորների և այլնի գործադուլը: Ընդամենը 6 շաբաթվա ընթացքում գործադուլ արին 6 հազ. ավելի մարդ:

Սկսվեց ձևորդների (կաշվի) գործադուլը Ռիգայում, վորն (գործադուլն) ընդգրկեց ավելի քան 300 մարդ: Ներկայացվեցին տնտեսական պահանջներ: Անմիջապես կարգադրություն արվեց գործադուլավոր բանվորներին արտաքսելու մասին:

## ՀՈՒՆԻՍ—ՀՈՒԼԻՍ

Լենինը կուսակցական դպրոց է կազմակերպում Լոնժյումոյում (Փարիզի մոտ) Ռուսաստանից յեկած բանվորների համար:

Լենինը դասախոսություններ է կարդում Լոնժյումոյի կուսակցական դպրոցում: Զբաղմունքները շարունակվեցին չորս ամիս հետևյալ առարկաներից. 1) Մարքսի քաղաքատնտեսությունը և քաղաքատնտեսության բուրժուական թեորիան, 2) սոցիալիզմի թեորիան ու պրակտիկան, 3) ագրարային հարց:

Լենինի կողմից Ռուսաստան գործուղվեցին ընկ. ընկ. Օրջոնիկիձեն, Շվարցը և Բրեսլավը Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողով ստեղծելու նպատակով համառուսաստանյան կոնֆերենցիա հրավիրելու համար:

## ՀՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

19—29 հուլիսի: Լոնդոնում ավելի քան 12 հազ. նավահանգստային բանվորների գործադուլը:

19 հուլիսի—2 օգոստոսի: Պետերբուրգի նավահանգստային բանվորների գործադուլը, վորոնք ներկայացրին տնտեսական պահանջներ:

Օգոստոս—դեկտեմբեր: *Հեղափոխական շարժման վերելքը Չինաստանում: Հեղափոխական զորքերը գրավեցին Խանյանը, Ուչանը և Նանկինը: Հայտարարվեց Մանջուրիայի և մի քանի նահանգների անկախությունը: Հոկտեմբերի 30 (17)-ին հրապարակվեցին մի շարք հրամաններ, որոնցով կառավարությունն անձնատուր էր լինում հեղափոխական շարժման առաջ: Նոյեմբերի 14 (1)-ին Պեկինում հրաման հայտարարվեց Սահմանադիր ժողով հրավիրելու և Յուան Շի-կային մինիստրների խորհրդի նախագահ նշանակելու մասին: Նանկինում կազմվեց ժամանակավոր հեղափոխական կառավարություն: Դեկտեմբերի վերջին հանրապետության նախագահ և մինիստրների խորհրդի նախագահ ընտրվեց Սուն Յաթսենը:*

ՍԵՊՏԵՄԲԵՐ

*Համակուսակցական կոնֆերենցիա հրավիրելու Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի (ՌԿՀ) կազմումը, որի մեջ մտավ Սերգո Օրջոնիկիձեն: Լենինը գրում է «Հաշտվողականների և առաքինիների նոր ֆրակցիայի մասին» հոդվածը «բոլշևիկ-հաշտվողականների» խմբի դիրքի քննադատությամբ: Այս հոդվածը հրապարակվեց* «Социал-Демократ»*-ի* 1911 *թ. հոկտեմբերի* 31 (18)*-ի* № 24*-ում:*

ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ

*Մոսկվայում կայացավ մոտ* 30 *ժողով, որոնք քննարկում էին կուսակցական կոնֆերենցիայի հարցը և ամենուրեք միանում էին Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովին:*

14 նոյեմբերի: *Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի լիազորի դիմումը բոլոր ազգային կազմակերպություններին՝ իրենց լիազորներին Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողով պատվիրակ ուղարկելու անհրաժեշտության մասին:*

15—18 նոյեմբերի: *Միտինգներ և ցույցեր Պետերբուրգի գործարաններում Պետական դումայի ս.-դ. ֆրակցիայի՝* II *Դումայի պատգամավորների վիճակի մասին արած հարցապնդման կապակցությամբ: Բանաձևերում բանվորները պահանջներ են հանում վերանայելու* II *Դումայի դատապարտված պատգամավորների գործը:*

20 նոյեմբերի: *Պոլ Լաֆարգի և նրա կին Լաուրա Մարքսի թաղումը Փարիզում (վախճանվեցին նոյեմբերի* 24*-ի լույս* 25*-ի գիշերը ն. տ.): ՌՍԴԲԿ անունից հանդես եկավ Վ. Ի. Լենինը:*

ԴԵԿՏԵՄԲԵՐ

*Լենինը մասնակցում է Պետերբուրգի նոր բոլշևիկյան ժուռնալ* « Просвещение »*-ին, որտեղ առաջին համարում զետեղվեց «Ընտրական կամպանիայի սկզբունքային հարցերը» հոդվածը:*

10, 17, 31 դեկտեմբերի, 6 հունվարի: *Լենինը զետեղում է* «Звезда»*-յում, սկսած* № 33*-ից, մի շարք հոդվածներ Դումայի ընտրությունների հարցի շուրջը՝ «*IV *Պետական Դումայի ընտրական կամպանիան» ընդհանուր վերնագրով:*

15 դեկտեմբերի: *Պուտիլովի գործարանի մի քանի հազար բանվորների միտինգը, որոնք բանաձև հանեցին* II *Պետական դումայի տաժանակրության դատապարտված ս.-դ. պատգամավորների գործի առթիվ:*



*ՌՍԴԲԿ Մոսկվայի կազմակերպության Զամոսկվորեչյեի, Պրեոբրաժենսկի, Խամովնիկի, Ռոգոժսկի, Պրեսնյայի և Բուտիրկիի ռայոնների ժողովը: Ընդունվեց մի բանաձև, որը սահմանազատվում է լիկվիդատորներից և ողջունում Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովին:*

1912 թ.

ՀՈՒՆՎԱՐ

5—17 հունվարի: *Լենինը մասնակցում է Պրագայի Համառուսաստանյան կուսակցական կոնֆերենցիայի աշխատանքներին: Պրագայի բոլշևիկյան կոնֆերենցիան վերականգնեց համակուսակցական կենտրոնները և լիկվիդատորներին վտարեց կուսակցությունից: Լենինն ընտրվում է կենտրոնական կոմիտեյի անդամ, կենտրոնական օրգանի խմբագրության անդամ և ՌՍԴԲԿ ներկայացուցիչ Միջազգային սոցիալիստական Բյուրոյում:*

*Ընկեր Ստալինը Լենինի առաջարկով ի բացակայության ընտրվում է կուսակցության ԿԿ-ի անդամ Պրագայի կոնֆերենցիայում: ՌՍԴԲԿ Պրագայի կոնֆերենցիայում ընտրվում է նեղ բյուրո կուսակցական աշխատանքը Ռուսաստանում ղեկավարելու համար՝ ընկերներ Ստալինի, Օրջոնիկիձեյի և Սպանդարյանի կազմով:*

21 հունվարի: *Բոլշևիկյան* « Звезда »*-ն սկսեց լույս տեսնել շաբաթը երկու անգամ:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

Հրատարակչության կողմից . . . . . . . . . . . . . . 3

Վ. Ի. Լենին: Պետերբուրգի համաքաղաքային կոնֆերենցիայում հուլիսի 21 (8)-ին՝ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության դեպի յերրորդ Դուման ունենալիք վերաբերմունքի հարցի մասին կարդացած զեկուցման թեզիսները . . . . . . . . . 7

Վ. Ի. Լենին: Ագրարային նոր քաղաքականություն . . . . . . . 9

Վ. Ի. Լենին: Բանաձևի նախագիծ կուսակցության և նրա միասնականության ամրացման մասին . . . . . . . . . . . 14

Վ. Ի. Լենին: Բանաձևի նախագիծ արդի մոմենտի և կուսակցության խնդիրների մասին . . . . . . . . . . . . . . 14

Վ. Ի. Լենին: Ճանապարհի վրա . . . . . . . . . . . . 18

Վ. Ի. Լենին: «Пролетарий»-ի ընդլայնած խմբագրության խորհրդակցության բանաձևերը . . . . . . . . . . . . 29

Վ. Ի. Լենին: Լիկվիդատորության լիկվիդացիան . . . . . . . 39

Ի. Վ. Ստալին: ՌՍԴԲԿ Բաքվի Կ-եյի թռուցիկը . . . . . . . 49

Ի. Վ. Ստալին: Նամակ Կովկասից . . . . . . . . . . . 53

Ի. Վ. Ստալին: Նամակ Լենինին Սոլվիչեգոդսկի աքսորավայրից . . . 60

Ի. Վ. Ստալին: ՌՍԴԲԿ Թիֆլիսի Կ-եյի թռուցիկը . . . . . . . 64

Վ. Ի. Լենին: Տրոցկու դիպլոմատիայի մասին և կուսակցականների մի պլատֆորմի մասին . . . . . . . . . . . . . . 68

Վ. Ի. Լենին: Հուդա Տրոցկու ամոթի գույնի մասին . . . . . . 74

Վ. Ի. Լենին և Ի. Վ. Ստալին: Ստոլիպինյան «բանվորական» կուսակցության բանակից . . . . . . . . . . . . . . 75

Վ. Ի. Լենին: Հայտարարություն «Рабочая Газета»-յի հրատարակման մասին . . . . . . . . . . . . . . . . . 79

Հավելվածներ

№ 1. ՌՍԴԲԿ Պրագայի կոնֆերենցիայի բանաձևերը . . . . . . 87

№ 2. Ծանուցում ՌՍԴԲԿ Համառուսաստանյան կոնֆերենցիայի մասին 101

Կարևորագույն թվականներ . . . . . . . . . . . . . 105

Թարգմ. խմբ. Վ. Գուրգենյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեչյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № Կ—3293, հրատ. № 575
Պատվեր № 86, տիրաժ 15·000
Հանձնվել է արտադրության 11/V 1938 թ.
Ստորագրվել է տպագրելու 1/VII 1938 թ.
Գինը 90 կ., կազմը 1 ռ. 10 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան
Երևան, Ալավերդյան 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0977566

400

1 АВГ 1938

11
28443

ԳԻՆԸ 2 Ռ.

В. И. ЛЕНИН И. В. СТАЛИН

К ИЗУЧЕНИЮ ИСТОРИИ ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938